



ISSN 1829-4219

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

№ 89 2015



- ՀՈՒԼԻՍԻ 1-Ը ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՕՐՆ
- ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՏԵՂԱԿԱԼ Է. ԲԱԲԱՅԱՆԻ ՀԵՏ
- ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
- ԴԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 89 2015

ՀՀ ԳՐԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

Էմիլ Բաբայան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ավագ դասախոս, (խորհրդի նախագահ)

Թամարա Շաքարյան ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ, իրավ. գիտ. թեկնածու, ՀՀ կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի դասախոս, (գլխավոր խմբագիր)

Դավիթ Մելքոնյան ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Մհեր Հակոբյան ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեփանյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Գլխավոր խմբագիր՝ Թ. ՇԱԲԱՐՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511 530, ֆաքս՝ 585 152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝ 20.08.2015թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4,5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ», 2015 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԽԱՏՈՒԹՅՈՒՆ 97

Հուլիսի 1-ը ՀՀ դատախազության աշխատակցի օրն է 3

ՈՒՂԵՐՁՆԵՐ

ՀՀ Նախագահի ուղերձը ՀՀ դատախազության աշխատողի օրվա և դատախազության 97-ամյակի կապակցությամբ 4
ՀՀ ԱԺ նախագահի ուղերձը ՀՀ դատախազության աշխատողի օրվա և դատախազության 97-ամյակի կապակցությամբ 4
ՀՀ վարչապետի ուղերձը ՀՀ դատախազության աշխատողի օրվա և դատախազության 97-ամյակի կապակցությամբ 6

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

Պարգևատրումներ 6

ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով 7

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հանդիպում ՀՀ գլխավոր դատախազությունում 9
Տեղի է ունեցել Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ենթակոմիտեի 6-րդ նիստը 10

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԷՄԻԼ ԲԱԲԱՅԱՆԻ ՀԵՏ

Չիրագովի վճիռը չի կարող ազդել ԼՂ հիմնախնդրի կարգավորման վրա 11

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կարեն Բիշարյան Նախաքննության ժամկետի հաշվարկման և երկարացման հիմնախնդիրները 15

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Պետրոս Մարտիրոսյան Պատժի նպատակների հասկացության տեսական հիմնահարցերը քրեական իրավունքում 25

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արամ Վարդևանյան Սահմանադրականության հասկացությունը և դրա ընկալումը որպես իրավունքի հիմնարար սկզբունք 32
Արթուր Նազարեթյան Վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը 37
Ավետիք Հարությունյան Հանրաքվեի ինստիտուտի կատարելագործման հիմնական ուղղությունները ԼՂՀ-ում 42

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Արմեն Հարությունյան Դատական ակտերի հարկադիր կատարման իրավական հիմքերի բարելավման արդի հարցադրումներ 46

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թամարա Գրիգորյան Քաղաքացիական ծառայության սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում 56

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Եկատերինա Ժիրենկո Փոխադարձ պատասխանատվության երևույթի ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական ասպեկտները 62

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Abstractы / Abstracts 66

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները 76

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 89 2015

ՀՈՒՒՍԻ 1-Ը ՀՀ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՕՐՆ Է

ՀՀ գլխավոր դատախազության նիստերի դահլիճում հուլիսի 1-ին տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված դատախազության աշխատողի օրվան և դատախազության 97-րդ տարեդարձին:

Նիստին մասնակցում էին ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վ. Սարգսյանը, ՀՀ ԱԺ նախագահ Գ. Սահակյանը, ՀՀ վարչապետ Հ. Աբրահամյանը, ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԱԾ տնօրեն Գ. Հակոբյանը, Ոստիկանության պետ Վ. Գասպարյանը, ՏԿ և ԱԻ նախարար Ա. Երիցյանը, ՀՀ ՊՆ Ս. Օհանյանը, ՀՔԾ պետ Վ. Շահինյանը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Ա. Հովսեփյանը, ԼՂՀ գլխավոր դատախազ Ա. Մոսիյանը:

Առաջին անգամ դատախազության աշխատակցի օրվա պաշտոնական միջոցառմանը ներկա էին ՀՀ նախկին գլխավոր դատախազները:

Շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ՝ **ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը** շնորհակալություն հայտնեց բոլոր դատախազներին և դատախազական համակարգի աշխատակիցներին ամբողջ ներուժով աշխատելու համար, մաղթեց, որ յուրաքանչյուր տարի այս օրը նշելիս դատախազական համակարգի յուրաքանչյուր աշխատող իր մեջ հպարտանալու առիթ ունենա՝ թե՛ իր կատարած աշխատանքի, թե՛ իր գործընկերոջ կատարած աշխատանքի համար:

ՀՀ գլխավոր դատախազն ընդգծեց, որ յուրաքանչյուր դատախազի պատասխանատու, ազնիվ և արդյունավետ աշխատանքը մեխանիկորեն հանգեցնում է ամբողջ համակարգի գործունեության արդյունավետությանը:



ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԵՎ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ 97-ԱՄՅԱԿԻ ԿԱՂԱԿՅՈՒԹՅԱՄԲ

«Հարգելի՛ դատախազներ,

Դատախազության հարգելի աշխատակիցներ,

Շնորհավորում եմ ձեզ Դատախազության աշխատողի օրվա և Հայաստանում դատախազական ծառայության 97-ամյակի կապակցությամբ:

Այսօր Հայաստանի Հանրապետության դատախազության առջև ծառայած են բազմաթիվ դժվարին խնդիրներ, որոնց շարքում հատկապես կարելի է առանձնացնել օրենքի գերակայության ամրապնդումը և կոռուպցիայի դեմ պայքարը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդվածն ամրագրում է, որ մեր երկիրը ժողովրդավարական և իրավական պետություն է: Դա ձեր գործունեության անկյունաքարն է, ուստի և ձեր կառույցին կարևոր առաքելություն է վերապահված մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարական արժեքների ամրապնդման գործում:

Դուք պետք է անգիջում լինեք մեր հասարակությունը թուլացնող կոռուպցիայի դրսևորումների հանդեպ, որոնցից ազատվելու համար մեզ անհրաժեշտ են համակարգային լուծումներ, ինչն անհնար է առանց ձեր անխոնջ և աննկուն աշխատանքի: Պետք է առաջնորդվեք սկզբունքայնությամբ և մասնագիտական պատվախնդրությամբ: Վստահ եմ, որ որդեգրելով աշխատանքի կազմակերպման նոր մոտեցումներ, դուք կկարողանաք արդյունավետորեն լուծել ձեր առջև դրված խնդիրները:

Ուրախ եմ, որ դատախազության համակարգը շարունակաբար համալրվում է երիտասարդ, բանիմաց ու գիտակ իրավաբաններով: Հավատում եմ, որ այս ոլորտում որակյալ մասնագետների լուրջ ներուժ կա, որը կարող է իրագործել Սահմանադրությամբ ամրագրված դատախազական լիազորությունները:

Կրկին շնորհավորելով մասնագիտական փրոնի առթիվ՝ մաղթում եմ նոր ձեռքբերումներ ձեր պատասխանատու գործունեության մեջ, քաջատողջություն և հաջողություններ ձեզ և ձեր ընտանիքներին»:

ՀՀ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԵՎ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ 97-ԱՄՅԱԿԻ ԿԱՂԱԿՅՈՒԹՅԱՄԲ

«Դատախազության համակարգի հարգարժան ներկայացուցիչներ, հարգելի բարեկամներ, նախ թույլ տվեք շնորհավորել մասնագիտական փրոնի՝ Դատախազության աշխատողի օրվա առթիվ:



Դատախազությունն անցել է կայացման և զարգացման երկար ճանապարհ՝ մշտապես առանձնահատուկ փետր գրադեցնելով պետական մարմինների համակարգում: Մյուս կողմից, այնքան էլ վաղուց չէ, որ անկախ Հայաստանում պաշտոնապես նշվում է Դատախազության աշխատողի օրը և այդ փետսանկյունից սա դեպի հեղափոխություններ փանդող ճանապարհի հերթական փուլն է: Ի պարիվ ձեզ, պետք է ասեմ, որ դուք հաջողությամբ եք անցնում այդ ճանապարհը: Յուրաքանչյուր իրավական պետություն կա-

յունության և օրինականության հուսալի հիմքերի կարիք ունի: Որպես պետական իշխանության հիմնասյուններից մեկը՝ դատախազությունն անցել է մեր երկրի զարգացման բոլոր փուլերը: Մեր կյանքում տեղի ունեցող փոփոխությունները որոշակի սրբագրումներ են մտցնում ցանկացած, այդ թվում և՛ դատախազության համակարգի աշխատանքներում: Այսօրվա առաջ փոփոխվող աշխարհում որևէ կառույցի աշխատանքը գնահատելու համար նրա գործունեության ժամանակահատվածի տևողությունը ոչ միշտ է ընդունվում որպես գնահատման հիմնական չափանիշ: Ավելի կարևոր է ժամանակի որթմը զգալը և ձեռքբերումներ արձանագրելը: Այս տեսանկյունից կարելի է ասել, որ դատախազական համակարգն իր կենսագրությամբ կարողանում է վարահորեն քայլել ժամանակին համընթաց: Այն, որ նրա հասցեին հնչում են նաև քննադատություններ, նշանակում է, որ համակարգն աշխարհող, գործուն և կենդանի օրգանիզմ է, որի պարագայում, բնական է և՛ դրվապանքի, և՛ դժգոհության առկայությունը: Մա նշանակում է լինել ուշադրության կենտրոնում, արժանանալ վերաբերմունքի, ինչն իր հերթին վկայում է, որ մարդկանց մեջ կոտրվում է հասարակական կյանքի նկատմամբ անտարբերության պարզ՝ անկախ նրանց արձագանքից, իսկ դուք կարողանում եք ձեր ներդրումն ունենալ քաղաքացիական հասարակության կայացման գործում՝ ապահովելով անձի, հասարակության և պետության շահերի պարզաձ պաշտպանություն, հարկապես որ քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների իրացման երաշխիքներից մեկը համարվում են դատախազական մարմինները: Իսկ քաղաքացիների վարահության աճը համակարգի հանդեպ ձեր աշխատանքի գնահատականի գիտավոր չափանիշն է: Դա, իհարկե, ենթադրում է մեծ պատասխանատվություն դատախազության աշխատակիցների համար, մանավանդ որ մշտապես պետք է հիշել, որ յուրաքանչյուր գործողության հետևում մարդն է, մարդկային ճակատագիրը: Հարգելի բարեկամներ, իրավական հարթությունից բացի շարք կարևոր է դատախազության ու հասարակության փոխադարձ կապը և միմյանց հասկանալի ու լսելի լինելը, ինչը նշանակում է նոր մակարդակի բարձրացնել դատախազություն-քաղաքացի փոխհարաբերությունները: Այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերը դատախազական համակարգում միտված են ավելի հարակ ու վարահելի դարձնել այդ հարաբերությունները: Համոզված եմ, որ ձեր փորձն ու գիտելիքները կշարունակեն նպաստել երկրում օրինականության ու կարգուկանոնի ամրապնդմանը և ձեր համակարգված ու արհեստավարժ գործունեության շնորհիվ դատախազության առջև դրված խնդիրները, այդ թվում՝ քաղաքացիների իրավունքների և պետության շահերի պաշտպանությունը, այսուհետև ևս հաջողությամբ կլուծվեն:



մանր և ձեր համակարգված ու արհեստավարժ գործունեության շնորհիվ դատախազության առջև դրված խնդիրները, այդ թվում՝ քաղաքացիների իրավունքների և պետության շահերի պաշտպանությունը, այսուհետև ևս հաջողությամբ կլուծվեն:

Եվս մեկ անգամ շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ՝ մտադրում եմ ձեզ առողջություն, բարեկեցություն և հասարակամտություն»:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԵՎ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ 97-ԱՄՅԱԿԻ ԿԱՂԱԿՈՒԹՅԱՄԲ

«Դատախազությունը տարիներ ի վեր համալրվում է նոր մրաձողությամբ, գիրելիքներով հարուստ և բանիմաց աշխատակիցներով, ովքեր, ձեռք բերելով նաև իրենց ավագ գործընկերների հարուստ փորձը, կարողանում են լավագույնս կյանքի կոչել Սահմանադրությամբ ամրագրված դատախազական լիազորությունները և նպաստել մեր երկրի առջև ծառայած մարտահրավերների հաղթահարմանը: Դուք հաջողությամբ եք շարունակում ՀՀ դատախազության հիմնադիրներից Պետրիկ Թորոսյանի և համակարգի կայացման գործում իրենց ավանդը ներդրած մյուս նվիրյալների սկսած գործը, ուարի ուրախ եմ, որ ի դեմս ձեզ՝ դատախազությունն ունի նրանց արժանի հերևորդներ»:



ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու համար Գալուստ Սահակյանը ՀՀ ԱԺ նախագահի հուշամեդալով է պարգևատրել ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբերհանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Արմեն Փանոսյանին, Շիրակի մարզի դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Բաֆֆի Ասլանյանին և Սյունիքի մարզի դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Արմեն Աֆանդյանին:



Հայաստանի Հանրապետության օրինականության ամրապնդման և պետականության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար և ՀՀ դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ վարչապետ Աբրահամյանը ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանին պարգևատրել է անվանական զենքով:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 89 2015

Ծառայողական պարտականությունները պատշաճ մակարդակով կատարելու համար և ՀՀ դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ Հովիկ Աբրահամյանը ՀՀ վարչապետի հուշամեդալով է պարգևատրել Երևան քաղաքի դատախազ, արդարատության երկրորդ դասի խորհրդական **Արթուր Դավթյանին**, ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական **Վահագն Մուրադյանին** և ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, երրորդ դասի խորհրդական **Դավիթ Մելքոնյանին**:



ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ

ՀՀ դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ դատախազության համակարգում ներդրված ավանդի համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով **հատուկ հուշանվերներով** պարգևատրվել են ՀՀ նախկին գլխավոր դատախազներ **Արտավազ Գևորգյանը, Սուրեն Օսիպյանը, Բորիս Նազարյանը, Արամ Թամազյանը և Աղվան Հովսեփյանը**:



ՀՀ դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ և ՀՀ դատախազության համակարգում երկարամյա ծառայության համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական **Հարություն Սարգսյանը** պարգևատրվել է **հուշանվերով**:

Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու համար և Դատախազության աշխատակցի օրվա կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Թամարա Շաքարյանին** շնորհվել է **արդարադատության առաջին դասի խորհրդականի** դասային աստիճան, Շիրակի մարզի դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական **Արթուր Պողոսյանին** շնորհվել է **արդարադատության երկրորդ դասի խորհրդականի** դասային աստիճան, Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական **Արա Մանուկյանին** շնորհվել է **արդարադատության երկրորդ դասի խորհրդականի** դասային աստիճան:

ՀՀ դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ և ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու համար ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով «Հայաստանի Հանրապետության դատախազություն» կրծքանշանով պարգևատրվել են ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության ավագ

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 89 2015

դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական **Գևորգ Գևորգյանը**, ՀՀ գլխավոր դատախազության կոուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական **Արթուր Սեփոյանը**, ՀՀ գլխավոր դատախազության վերահսկողական-տեսչական բաժնի ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական



Լևոն Կարապետյանը, Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ, առաջին դասի խորհրդական **Հայկ Մովսեսյանը**, Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ, առաջին դասի խորհրդական **Ալիկ Կարապետյանը**, Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Մկրտիչ Ենգիբարյանը** և Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ, առաջին դասի խորհրդական **Արսեն Մարգարյանը**:

ՀՀ դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ, ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու և իրավակարգի ամրապնդման համար ՀՀ գլխավոր դատախազի հրամանով «**Իրավակարգի ամրապնդման համար**» մեղալով պարգևատրվել են ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության դատախազ, երկրորդ դասի խորհրդական **Նոնա Միքայելյանը**, ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական **Գարեգին Իսախանյանը**, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ, առաջին դասի խորհրդական **Արա Մնացականյանը**:

Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու և ՀՀ դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով ՀՀ դատախազության համակարգի մի խումբ ավագ դատախազներ ու դատախազներ խրախուսվել են **շնորհակալություն հայտարարելով և դրամական պարգևով**:



* * *

Ծննդյան տարեդարձի առթիվ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը** պարգևատրվել է **հուշանվերով**:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՉԼԻՍԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ԵԽ-ին անդամակցությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների



կատարման ընթացքի վերահսկման գործընթացի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբայանը սույն թվականի հուլիսի 2-ին ընդունել է ԵԽ գլխավոր քարտուղարության պատվիրակությանը: Պատվիրակության կազմում էին ԵԽ քաղաքական տնօրինության ղեկավար Ալեքսանդր Գեսսելը, վերջինիս տեղակալ Դանիիլ Խոշաբոն և քաղաքական խորհրդատու Մաքսիմ Լոնգանգեն, ներկա էին նաև Հայաստանում ԵԽ Գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովան, ԵԽում ՀՀ մշտական ներկայացուցիչ Արմեն Պապիկյանը և ՀՀ ԱԳՆ Եվրոպայի խորհրդի բաժնի ներկայացուցիչը: ՀՀ գլխավոր դատախա-

զությունը ներակայացրել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբայանը, ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Արտակ Հարությունյանը, ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Դավիթ Մելքոնյանը, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ Եղիազար Ավագյանը, ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ Թամարա Շաքարյանը:

Հանդիպմանը քննարկվել են ԵԽ ՆԿ ժողովրդավարության հարցերով զեկուցողների խմբի 2013թ. մարտին Հայաստան կատարած այցից հետո ՀՀ պարտավորությունների կա-



տարման հարցում տեղի ունեցած զարգացումները՝ մասնավորապես համապատասխան զեկույցի հարցադրումների տեսանկյունից: Քննարկվել են վերջին երկու տարիների ընթացքում դատախազության անկախությանն ու հաշվետվողականությանն ուղղված քայլերի, այլընտրանքային պատժատեսակների հարցի կապակցությամբ առաջընթացի, դատաքննության ընթացքում մեղադրանքի պաշտպանա-

կան կողմերի միջև զենքերի անհավասարության հարցի լուծման հետ կապված առաջընթացի, արդարադատության ակադեմիայի, մինչդատական քննության ուղղությամբ հիմնական զարգացումների արդյունավետության, քրեադատավարական օրենսդրության զարգացումների և բարեփոխումների վերաբերյալ հարցեր:

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԵՆԹԱԿՈՄԻՏԵԻ 6-ՐԴ ՆԻՍՏԸ

Սույն թվականի հուլիսի 17-ին Բրյուսելում տեղի է ունեցել Արդարադատության, ազատության և անվտանգության հարցերով ենթակո-



միտեի ԵՄ-ՀՀ 6-րդ նիստը: Հայաստանի Հանրապետության միջգերատեսչական պատվիրակության կազմում ընդգրկված էր նաև ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ Թ. Շաքար-

յանը: Նիստի օրակարգում ներառված են եղել արդարադատության, ազատության, անվտանգության և հանցավորության դեմ պայքարին վերաբերող մի շարք հարցեր, մասնավորապես՝ կոռուպցիայի դեմ պայքար, փողերի լվացում, մարդկանց առևտուր, թմրանյութերի չարաշահում և այլն: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ներկայացուցիչը մանրամասն ներկայացրել է նշված ոլորտներում 2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից իրականացված աշխատանքները, ձեռքբերումները, ինչպես նաև՝ այդ բնագավառներում Հայաստանի Հանրապետության առջև ծառայած հիմնախնդիրները: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձ են կատարել նաև Հայաստանի Հանրապետությունում իրականացվող սահմանադրական բարեփոխումներին:



ՉԻՐԱԳՈՎԻ ՎՃԻՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԱԶԴԵԼ ԼՂ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ



«Հ գլխավոր դատախազի տեղակալ, 2006-2012թթ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի տեղակալ Էմիլ Բաբայանը Aysor.am-ի թղթակցի հետ զրույցում անդրադարձել է «Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի» գործով վճռի շահարկումներին և Էլմար Մամեդյարովի վերջին հայտարարություններին:

- Պարոն Բաբայան, մի քանի օր առաջ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովն ընդարձակ հարցազրույց էր տվել ադրբեջանական Ազերթաջ գործակալությանը, որտեղ մեկնաբանել էր Եվրոպական դատարանի «Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի» վճիռը: Հարցազրույցի ընթացքում անդրադարձ կար նաև Ձեր կողմից, մինչ դատարանի վճռի հրապարակումը, նույն գործի վերաբերյալ մամուլով ներկայացված մեկնաբանություններին: Ձեր դիրքորոշումները փոխվել են վճռի հրապարակումից հետո:

- Ադրբեջանի պետական լրատվական գործակալությանը տված իր հարցազրույցում Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Մամեդյարովը ներկայացրել էր իր դիտարկումները Եվրոպական դատարանի «Չիրագովը և այլոք ընդդեմ Հայաստանի» վճռի վերաբերյալ, ինչպես նաև հպանցիկ անդրադարձել էր «Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի» վճռին: Հարցազրույցում անդրադարձ կա իմ կողմից մինչ Եվրոպական դատարանի կողմից վճիռների հրապարակումը ներկայացրած դիտարկումներին: Այստեղ կցանկանայի հատուկ ընդգծել,

որ ես իմ դիտարկումները ներկայացրել եմ այն ժամանակ երբ դատարանի վճիռները դեռ հրապարակված չէին և հարցազրույցիս նպատակն էր ներկայացնել այն սկզբունքները, որոնց վրա իմ կարծիքով հիմնվելու է Եվրոպական դատարանը վճիռներ կայացնելիս: Հարցազրույցիս այն հատվածում, որին հղում կա պարոն Մամեդյարովի հարցազրույցում, ես ընդգծել էի, որ Եվրոպական դատարանի վճիռների վրա կարող են ազդել քաղաքական կամ աշխարհաքաղաքական գործոններ և, որ ամենավտանգավորն է, այն կարող է ունենալ քաղաքական և աշխարհաքաղաքական հետևանքներ և նաև հույս էի հայտնել, որ Եվրոպական դատարանի դատավորները հստակ կգիտակցեն, թե ինչ կարևորության գործ է իրենց առջև: Իմ կողմից հնչեցրած այս միտքը հակադրելով Հայաստանի արտաքին գործերի նախարար պարոն Նալբանդյանի այն մտքի հետ, որ Չիրագովի վճիռը չի կարող ազդել ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ բանակցային գործընթացի վրա, պարոն Մամեդյարովը հանգել է այն եզրակացության, որ Չիրագովի գործով վճիռը Հայաստանում շոկ է առաջացրել:

Միանշանակ է, որ իմ կողմից մինչ վճռի հրապարակումը արած դիտարկումների և պարոն Նալբանդյանի արդեն վճռի հրապարակումից հետո արված դիտարկումների մեջ հակասություն չկա: Ավելին՝ պարոն Նալբանդյանի, որպես դարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցությունների հիմնական պատասխանատուներից մեկի արած այն հայտարարությունը՝ որ Եվրոպական դատարանի վճիռը չի կարող ազդեցություն ունենալ բանակցային գործընթացի վրա, ապացույցն է այն բանի, որ Եվրոպական դատարանը իսկապես գիտակցել է հարցի ողջ լրջությունն և զերծ է մնացել այնպիսի ձևակերպումներից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ դարաբաղյան խնդրի կարգավորման համար: Ի դեպ, հենց նման հույս էի հայտնել ես իմ հարցազրույցում:

- *Ի՞նչ կատեք շոկի մասին: Իսկապես Չիրագովի վճիռը շոկ է առաջացրել:*

- Չեմ կարող համաձայնել պարոն Մամեդյարովի այս մտքի հետ, Չիրագովի գործը Հայաստանում շոկ չի առաջացրել և ըստ էության չէր էլ կարող առաջացնել, քանի որ դրանում մեզ համար որևէ անսպասելի բան չկար: Եվս մեկ անգամ ընդգծեմ, որ Եվրոպական դատարանը հստակ գիտակցելով այս գործի ամբողջ լրջությունը և դրանում առկա ցանկացած անըզգույշ ձևակերպման հետևանքները, չափազանց բժախնդիր է մոտեցել վճռում առկա ձևակերպումներին: Ըստ էության դատարանը, ինչպես դա պահանջում է կոնվենցիան, կենտրոնացել է իր առջև եղած կոնկրետ դիմումատուների կոնկրետ գանգատի քննության վրա և ի հեճուկս Ադրբեջանի իշխանությունների սպասելիքների՝ զերծ է մնացել սովյալ գործով կոնկրետ դիմումատուների իրավունքների պաշտպանության շրջանակից դուրս որևէ հարցի քննարկումից:

- *Ադրբեջանական կողմը պնդում է, որ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Հայաստանն օկուպացրել է ադրբեջանական տարածքներ:*

- Վճռում, որևէ տեղ դատարանը չի նշել, որ Հայաստանն օկուպացրել է Լաչինը կամ որևէ այլ տարածք և այս հանգամանքը զարմանալի չի կարող լինել միջազգային իրավունքին և մասնավորապես Եվրոպական դատարանի նախադեպերին քիչ թե շատ ծանոթ որևէ մեկի համար: Եթե դատարանն ապացույցներ ունենար, որ Հայաստանն օկուպացրել է խնդրո առարկա տարածքները, ապա հենց միայն այդ փաստը բավարար կլիներ նշված տարածքների նկատմամբ Հայաստանի իրավազրույցունը ճանաչելու համար, օրինակ՝ ինչպես դա արեց Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործով: Նման իրավիճակում դատարանը կարիք չէր ունենա անդրադառնալու Հայաստանի «որոշիչ ազդեցությանը» և քննարկելու տրամադրված տնտեսական, քաղաքական և այլ կարգի օգնությանը: Այլ խոսքով՝ դատարանի համար «որոշիչ ազդեցություն» քննարկելու անհրաժեշտությունն առաջանում է միայն այն դեպքում երբ օկուպացիան ապացուցված չէ:

- *Այդ դեպքում, ինչպես կմեկնաբանեիք Չիրագովի վճռի հետ կապված Ադրբեջանի տարբեր պաշտոնյաների կողմից հնչող հաղթական շեշտադրումները:*

- Անկեղծ ասած, ես մի փոքր զարմացած եմ նման շեշտադրումների կապակցությամբ: Տպավորություն կարող է ստեղծվել, որ Չիրագովի գործը Ադրբեջանի իշխանությունների երկարաժամկետ ռազմավարական հաշվարկների և հետևողական աշխատանքի արդյունք է: Իրականում իրավիճակը բացարձակապես այլ է: Ես Չիրագովի գործով ներգրավված եմ եղել առաջին իսկ օրից, մանրամասնություններով ծանոթ եմ ինչպես դիմումատուների, այնպես էլ Ադրբեջանի որպես երրորդ կողմ ներկայացված բոլոր փաստարկներին: Անհրաժեշտ եմ համարում պարզաբանել մի կարևոր հանգամանք, Չիրագովի գործում ներգրավված բոլոր վեց դիմումատուներն ազգությամբ քրդեր են և նրանց շահերի պաշտպանությունը, սեփական նախաձեռնությամբ ստանձնել է Լոնդոնում գործող Քրդական մարդու իրավունքների ծրագիրը (Kurdish Human Rights Project (KHRP)):

- *Ավելին՝ ոչ թե դիմումատուներն են դիմել նշած կազմակերպությանը Եվրոպական դատարան հայց ներկայացնելու խնդրանքով, այլ այս կազմակերպությունն է նախաձեռնել հայցի հարուցումը, որպես Ադրբեջանում ազգությամբ քուրդ բնակչության շահերի պաշտպանության ծրագրի բաղկացուցիչ մաս:*

Ադրբեջանի իշխանությունները որևէ առնչություն չեն ունեցել այս գանգատի Եվրոպա-

կան դատարան ներկայացնելու հետ: Ավելին՝ երբ նշաձև կազմակերպության ղեկավար Քերիմ Յիլդիզը (Kerim Yildiz) մինչ Եվրոպական դատարան դիմումատուների անունից գանգատ ներկայացնելը 2005 թվականի փետրվարի 9-ին այցելել է Բաքու, որպեսզի հանդիպի հենց այս գործով դիմումատուների հետ, նա Բաքվի օդանավակայանում ձերբակալվել է և 13 ժամ կալանքի տակ պահվելուց հետո ազատ է արձակվել միայն Ադրբեջանում Մեծ Բրիտանիայի դեսպանության միջամտությունից հետո, սակայն արգելվել է նրա մուտքը և նա վտարվել է Ադրբեջանից: KHRP-ի ղեկավարի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների նման վերաբերմունքը պատահական չէ եթե հաշվի առնենք, որ այս կազմակերպությունը տարածաշրջանում իրականացնում է իրավապաշտպան գործունեություն և լուրջ մասնակցություն է ունեցել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման դեմ իրավապաշտպանների կողմից կազմակերպված արշավին:

Ադրբեջանի կառավարության որպես երրորդ կողմ ներկայացված փաստարկների հիմնական նպատակը, ինչպես ցանկացած այլ ատյանում, Եվրոպական դատարանում նույնպես, եղել է հասնել նրան որպեսզի Եվրոպական դատարանը իր վճռում արձանագրի, որ Հայաստանն օկուպացրել է Ադրբեջանի տարածքները: Ի տարբերություն Ադրբեջանի կառավարության՝ դիմումատուների ներկայացուցիչների հիմնական նպատակը եղել է կոնկրետ դիմումատուների իրավունքների պաշտպանությունը:

- Արդյունքում, *ինչ իրավիճակ է ստեղծվել Չիրազովի վճռից հետո:*

- Իրավիճակը հետևյալն է՝ ունենք Եվրոպական դատարանի վճիռը, որը կոնկրետ գործով արձանագրել է կոնկրետ վեց դիմումատուների իրավունքների խախտում և դրա համար պատասխանատու է համարել Հայաստանին, հիմք ընդունելով այն, որ Հայաստանն Արցախին տրամադրում է քաղաքական, տնտեսական և այլ բնույթի այնպիսի օգնություն առանց որի Արցախը չի կարող գոյատևել: Դուք որևէ նորություն տեսնում ե՞ք դատարանի այն ձևակերպման մեջ, որ Հայաստանն Արցախին տրամադրում է բազմաբնույթ օգնություն: Հայաստանը երբևէ թաքցրել է այս հանգամանքը:

Իսկ բնական չէ՞ որ ադրբեջանական բանակի դեմ միայնակ մնացած և ֆիզիկական բնաջրնջման եզրին կանգնած Արցախի ժողովրդին Հայաստանը պետք է օգներ: Կամ մի որևէ նորմալ պետություն, որ նման պայմաններում չէր օգնի իր հայրենակիցներին: Ի դեպ Արցախի ժողովրդին միայն Հայաստանը չէ որ օգնում է, օրինակ՝ մինչ օրս Ամերիկայի Միացյալ Նահանգներն առանձին օգնություն են տրամադրում պատերազմի արդյունքում դժվար կացության մեջ հայտնված Արցախի ժողովրդին:

- Այսինքն, *ըստ Ձեզ, Եվրոպական դատարանն արձանագրել է միայն այն, ինչ արդեն վաղուց հայտնի էր:*

- Այո այդպես է, և դրա համար կան ծանրակշիռ պատճառներ, որոնց ես արդեն առիթունեցել եմ անդրադառնալու նախկինում: Չիրազովի և նաև Սարգսյանի գործով Եվրոպական դատարանը մինչև վերջ խուսափեց կազմել դատավորների խումբ և այցելել ԼՂՀ տեղում ծանոթանալու իրերի դրությանը: Նման հնարավորություն նախատեսված է Եվրոպական դատարանի կանոնագրքով և Հայաստանը բազմիցս առաջարկել և նույնիսկ պահանջել է կազմակերպել նման տեղատեսություն: Մի իրավիճակում երբ դատավորներն անձամբ տարածաշրջան չեն այցելել և հետևաբար, չունեն սեփական կարծիք տեղում իրավիճակի վերաբերյալ, նրանց այլ բան չի մնում քան հենվել միջազգային այն կառույցների կարծիքների վրա, որոնք զբաղվել են դարաբաղյան հակամարտության խնդրով: Այսինքն դատարանը նոր փաստեր ինքնուրույն չի էլ փորձել հավաքել այլ հենվել է միջազգային կազմակերպությունների արդեն իսկ հրապարակված տեսակետների վրա:

Այստեղ կուզենայի անդրադառնալ Ադրբեջանի իշխանությունների ամենասիրած թեմային՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հայտնի բանաձևերին: Ինչպես հիշում եք, 1993 թվականին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունված 4 բանաձևերը մշտապես եղել են Ադրբեջանական պաշտոնական այն տեսակետի անկյունաքարը, որի համաձայն Հայաստանը օկուպացրել է Ադրբեջանի յոթ շրջանները: Հատկանշական է որ 2014 թվականի սեպտեմբերի 24 ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ՄԱԿ-ի ամբիոնից հնչեցրած իր ելույթում անդ-

րադարձավ հայտնի բանաձևերին՝ մասնավորապես նշելով, որ ոչ մի բանաձևում Հայաստանը չի նշվել որպես հակամարտող կողմ: Նախագահը շեշտեց, որ մեր երկրին ուղղված կոչերում միայն խոսվում էր «շարունակել ազդեցություն գործադրել» ԼՂ հայության վրա հակամարտությունը դադարեցնելու համար, ինչը Հայաստանը լիարժեք իրականացրել է, և նաև դրա շնորհիվ 1994թ. կնքվել է զինադադար: Նախագահի ելույթի համարյա նույն ձևակերպումներն օգտագործում է նաև Եվրոպական դատարանն իր վճռում (տես 173-րդ պարբերություն) ըստ էության հակադրելով Human Rights Watch-ի կարծիքը, որ Հայկական բանակը ներգրավված է եղել ղարաբաղյան հակամարտությանը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերին, որոնցում խոսք է գնում միայն «տեղական հայկական ուժերի» մասին և Հայաստանին կոչ է արվում «շարունակել ազդեցություն գործադրել» տեղի բնակչության նկատմամբ, ինչը և Հայաստանն արել է: Այսինքն Եվրոպական դատարանը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերն օգտագործում է որպես հիմնական փաստարկ ցույց տալու համար, որ Հայկական բանակի ներգրավվածությունն ապացուցված չէ:

- *Ինչպիսի՞ն կլինի դիմումատուներին տրամադրվելիք փոխհատուցումը:*

- Այս պահին ունենք հետևյալ իրավիճակը, կա Եվրոպական դատարանի վճիռ, որով արձանագրվել է կոնկրետ վեց դիմումատուների իրավունքների խախտում և մենք վճռի կայացման պահից ունենք մեկ տարի ժամանակ՝ դիմումատուների և Նախարարների Կոմիտեի հետ քննարկելու և որոշում կայացնելու փոխհատուցման չափի և եղանակի վերաբերյալ:

Ի դեպ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համաձայն դատարանի վճռի (տես 138 պարբերություն)՝ դիմումատուների կողմից նշված շարժական գույքը և անասունները ամենայն հավանականությամբ ոչնչացել են ռազմական գործողությունների ժամանակ, իսկ տները հայտնի չէ կանգուն են թե ոչ և հետևաբար միակ սե-

փականությունը, որ կարող է քննարկման առարկա դառնալ դա հողն է: Հողի վերաբերյալ էլ դատարանը հանգել է այն եզրակացության (տես 144 - 151 պարբերություններ), որ դիմումատուները խնդրո առարկա տարածքում հողի նկատմամբ ունեցել են միայն օգտագործման իրավունք քանի որ, ինչպես հայկական կողմը ներկայացրել էր դատարանին՝ համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության հողը չէր կարող լինել անհատի սեփականությունը, այլ կարող էր տրամադրվել միայն օգտագործման իրավունքով: Հետևաբար, դատարանի վճռի համատեքստում դիմումատուները Լաչինում գտնվող դեռևս ԽՍՀՄ ժամանակ իրենց տրամադրված հողի նկատմամբ սեփականության իրավունք չեն ունեցել և այժմ էլ չունեն, այլ միայն ունեցել են օգտագործման իրավունք և փոխհատուցման ենթակա գույք ասելով պետք է նկատի ունենալ բացառապես հողի նկատմամբ օգտագործման իրավունքը:

- *Ե՞րբ կարող ենք հստակ ձևակերպել Չիրագովի և Սարգսյանի գործերով ՄԻԵԴ-ի վճիռների իրավական հետևանքները Հայաստանի և Ադրբեջանի համար:*

- Եվրոպական դատարանի վճիռների վերջնական արդյունքը պարզ է լինում դրանց կատարումից և Նախարարների կոմիտեում հարցի վերջնական փակումից հետո: Այս առումով մենք դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու: Կողմերին Եվրոպական դատարանը մինչև 2016 թվականի հունիսը ժամանակ է տվել փոխհատուցման հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները ներկայացնելու համար: Կարծում եմ այս գործերով դեռ մեծ ծավալի աշխատանք կա կատարելու: Մի բանում վստահ եմ՝ Հայաստանի Հանրապետությունն ինչպես այս, այնպես էլ Եվրոպական դատարանի ցանկացած այլ վճռի վերաբերում է ընդգծված պատասխանատվությամբ:

- *Պարոն Բաբայան շնորհակալ եմ հարցերին պատասխանելու համար:*

- Ես էլ եմ շնորհակալ:

ԿԱՐԵՆ ԲԻՇԱՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԵՐԿԱՐԱՋՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև՝ ՀՀ ՔԴՕ) նախնական քննության ընդհանուր պայմանների համակարգում նախատեսում է նախնական քննության ժամկետները (197-րդ հոդված):

Նախնական քննության (հետաքննության և նախաքննության) խիստ ժամկետային սահմանափակումն ինքնանպատակ չէ, այն կոչված է՝ թույլ չտալու քրեական գործով մինչդատական վարույթի անհարկի ձգձգումը, կանխելու ապացույցների հնարավոր կորուստը և ապահովելու վարույթի մասնակիցների համար արդարադատության իրական մատչելիությունը:

Հետաքննության ինստիտուտի գործնական կիրառություն չունենալու պատճառով քննարկման առարկա չենք դարձնի հետաքննության ժամկետների հարցը, սակայն վերլուծենք նախաքննության ժամկետների իրավակարգավորումները և գործնական այնպիսի հիմնախնդիրները, ինչպիսիք են՝ նախաքննության ժամկետի սկիզբը, ավարտը, կասեցումը, վերսկսումը և երկարացումը: Մասնավորապես՝

ա) նախաքննության ժամկետի սկիզբը.

ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը:

Նշված իրավակարգավորումից հետևում է, որ նախաքննության ժամկետի հաշվարկման սկզբնակետը քրեական գործ հարուցելու մասին որոշման կայացման օրն է, որպիսի հանգամանքի գիտակցումը հատկապես անհրաժեշտ է այն դեպքերի համար, երբ ՀՀ ՔԴՕ 28-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կար-

գով մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակից անձանց նկատմամբ գործն անջատվում է:

Նման դեպքերում գործնականում երբեմն փորձ է արվում անջատված քրեական գործով նախաքննության ժամկետը հաշվարկել քրեական գործն անջատելու մասին որոշում կայացնելու օրվանից: Նման մոտեցումը չի բխում նախաքննության ժամկետների հաշվարկման՝ վերը նշված իրավակարգավորումից, որի պայմաններում ցանկացած դեպքում նախաքննության ժամկետը մեկնարկվում է քրեական գործ հարուցելու օրվանից: Հետևաբար, քրեական գործն անջատելու դեպքերում անջատված քրեական գործով նախաքննության ժամկետի սկիզբն այն քրեական գործի հարուցման օրն է, որից անջատվում է քրեական գործը:

Այլ իրավական ռեժիմ է գործում ՀՀ ՔԴՕ 184-րդ հոդվածով սահմանված կարգով՝ քրեական գործի նյութերով նոր գործի հարուցման դեպքերում: Այդպիսի դեպքերում քրեական գործի նյութերով նոր գործ հարուցելու մասին որոշում է կայացվում, ինչն էլ ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով նոր հարուցված քրեական գործով նախաքննության ժամկետի հաշվարկման սկզբնակետն է:

բ) Նախաքննության ժամկետի ավարտը.

ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով նախաքննության ժամկետն ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը:

Այդպիսով, քրեադատավարական օրենքը նախատեսում է նախաքննության ժամկետի ավարտման երկու իրավական ռեժիմ, մասնավորապես՝ ա) գործը դատարան ուղարկելու մասին որոշման կայացում և բ) գործով վարույթի կարճման մասին որոշման կայացում:

Ինչ վերաբերում է գործով վարույթի կարճ-

ման մասին որոշման կայացմամբ նախաքննության ժամկետի ավարտման իրավական ռեժիմին, ապա դա մեկնաբանման կարիք չունի, քանզի քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը քրեադատավարական օրենքով նախատեսված որոշման տեսակ է:

Նույնը չի կարելի ասել գործը դատարան ուղարկելու մասին որոշման վերաբերյալ: Նման տեսակի որոշման միակ հիշատակումը տեղ է գտել ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածում: Եթե նախաքննության ժամկետների ավարտը մեկնաբանվի միայն ՀՀ ՔԴՕ 196-րդ հոդվածում տեղ գտած՝ նախնական քննության ավարտը սահմանող նորմի համատեքստում, ապա կստացվի, որ գործը դատարան ուղարկելու մասին որոշումը պետք է նույնացնել մեղադրական եզրակացության և բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին որոշման հետ, քանզի հիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով:

Սակայն քրեադատավարական օրենքն այս առումով պետք է ենթարկել համակարգային մեկնաբանման, ինչը թույլ է տալիս պատասխանել այն հարցին, թե հիշյալ օրենքով նախատեսված որոշման որ տեսակները պետք է նույնացնել գործը դատարան ուղարկելու մասին որոշմանը:

Այսպես, ՀՀ ՔԴՕ 274-րդ, 461-րդ և 466-րդ հոդվածները համապատասխանաբար նախատեսում են դատախազի որոշումը մեղադրական եզրակացությամբ ստացված գործով, դատախազի լիազորություններն անմեղսունակների գործերով նախաքննությունն ավարտելիս և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի մինչդատական նախապատրաստումը:

Հիշյալ հոդվածներում տեղ գտած նորմերի վերլուծությունից հետևում է, որ դրանք նախատեսում են գործը դատարան ուղարկելու մասին որոշման հետևյալ տեսակները.

1) մեղադրական եզրակացությամբ ստաց-

ված գործով դատախազի կողմից մեղադրական եզրակացության հաստատումը,

2) անմեղսունակների գործերով բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար գործը դատարան ուղարկելու մասին քննիչի որոշման հաստատումը,

3) դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործերով բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար գործի նյութերը դատարան ուղարկելու մասին քննիչի որոշման հաստատումը:

Թեև վերջին երկու դեպքերի համար քրեադատավարական օրենքը չի նախատեսում դատախազի կողմից որոշման կայացման ժամկետներ, սակայն մեղադրական եզրակացությամբ ստացված գործով դատախազի կողմից ՀՀ ՔԴՕ 274-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկն ընդունելու, այդ թվում՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու համար, սահմանված է հնգօրյա ժամկետ: Հետևաբար, մեղադրական եզրակացության կազմմամբ նախաքննությունն ավարտելու դեպքերում, նախ, քննիչը պարտավոր է մեղադրական եզրակացությամբ քրեական գործը դատախազին ուղարկել այն հաշվարկով, որպեսզի դատախազի կողմից գործն ստացվի նախաքննության ժամկետի ավարտից հինգ օրից ոչ ուշ և, երկրորդ, մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործով դատախազի կողմից ՀՀ ՔԴՕ 274-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար սահմանված հնգօրյա ժամկետը կազմում է նախաքննության ժամկետի մաս:

Չնայած անմեղսունակների գործերով բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար գործը դատարան ուղարկելու և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործերով բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար գործի նյութերը դատարան ուղարկելու մասին քննիչի որոշումները դատախազի կողմից հաստատելու համար ժամկետներ սահմանված չեն, սակայն այս դեպքերում էլ քննիչը քրեական գործը դատախազին պետք է ուղարկի այն հաշվարկով, որպեսզի, կախված գործի ծավալից, դատախազը ողջամիտ ժամկետներում հնարավորություն ունենա կայացնելու ՀՀ ՔԴՕ 461-րդ և 466-րդ հոդված-

ներով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

Միննույն ժամանակ, հարկ է նկատել, որ գործնականում երբեմն անհրաժեշտություն է առաջանում երկարացնելու մեղադրական եզրակացությամբ ստացված գործով դատախազի կողմից ՀՀ ՔԴՕ 274-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը կայացնելու համար սահմանված հնգօրյա ժամկետը, կախված մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործի ծավալից, հատկապես այն դեպքերում, երբ տվյալ քրեական գործով նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարումն իրականացվել է այլ դատախազի կողմից, սակայն հետագայում հանձնարարվել է մեկ այլ դատախազի, որն էլ քրեական գործով նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարումն ստանձնելուց անմիջապես հետո մեղադրական եզրակացությամբ ստանում է բազմահատոր քրեական գործը:

Նման դեպքերի համար, կարծում ենք, օրենսդրորեն անհրաժեշտ է նախատեսել ՀՀ ՔԴՕ 274-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետը նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարումն իրականացնող դատախազի պատճառաբանված միջնորդությամբ վերադաս դատախազի կողմից ողջամիտ ժամկետով երկարացնելու հնարավորություն:

գ) Նախաքննության ժամկետի կասեցումը.

ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական գործի նյութերին մեղադրյալի կամ նրա պաշտպանի ծանոթանալու ժամկետը չի մտնում գործի քննության ժամկետի մեջ: Եթե մեղադրյալը կամ նրա պաշտպանն առանց հարգելի պատճառների ձգձգում են քրեական գործին ծանոթանալը, քննիչի որոշմամբ կարող է սահմանափակվել ծանոթանալու ժամկետը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նախաքննության ժամկետի մեջ չի հաշվակցվում այն ժամանակը, որի ընթացքում նախաքննությունը քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով եղել է կասեցված:

Հիշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ քրեադատավարական օրենքը նախատեսում է նախաքննության ժամկետի կասեցման իրավական երկու ռեժիմ, մասնավորա-

պես՝ ա) քրեական գործի նյութերին մեղադրյալի կամ նրա պաշտպանի ծանոթանալու և բ) նախաքննությունը քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով կասեցնելու:

Նախաքննության ժամկետի կասեցման առաջին իրավական ռեժիմի թերությունը նրանումն է, որ այն չի ներառում նաև տուժողի, քաղաքացիական հայցվորի և քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների կողմից քրեական գործի նյութերին ծանոթանալու հնարավորությունը, մինչդեռ ՀՀ ՔԴՕ 265-րդ հոդվածի ուժով՝ մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ քրեական գործի նյութերին ծանոթանալու իրավունք ունեն ոչ միայն մեղադրյալը և նրա պաշտպանը, այլ նաև տուժողը, նրա ներկայացուցիչը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը կամ նրանց ներկայացուցիչները: Տարբերությունն ընդամենը նրանումն է, որ գործին ծանոթանալու համար քննիչը տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին գործը ներկայացնում է նրանց միջնորդության դեպքում, իսկ մեղադրյալին և պաշտպանին՝ անկախ միջնորդությունից (ՀՀ ՔԴՕ 265-րդ հոդվածի 2-րդ մաս): Կասկածից վեր է, որ քրեական գործի նյութերին տուժողի, քաղաքացիական հայցվորի և քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների կողմից ծանոթանալու ժամկետը ևս չպետք է մտնի նախաքննության ժամկետի մեջ, ուստի, գտնում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 3-րդ մասում համապատասխան լրացում կատարել:

դ) Նախաքննության ժամկետի վերսկսումը.

ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քրեական գործի նախաքննությունը վերսկսելու, քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու, ինչպես նաև կարճված գործի վարույթը նորոգելու դեպքերում նախաքննությունը պետք է ավարտվի մեկամսյա ժամկետում՝ համապատասխանաբար գործի նախաքննությունը վերսկսելու մասին որոշում կայացնելու, լրացուցիչ քննության վերադարձված քրեական գործը քննիչի կողմից ստանալու, գործի վարույթը նորոգելու մասին որոշում կայացնելու օրվանից սկսած: Այդ ժամկետի հե-

տագա երկարացումը կարող է կատարվել նույն հոդվածի հինգերորդ մասով սահմանված կարգով:

Հիշյալ իրավակարգավորումից հետևում է, որ քրեադատավարական օրենքը նախատեսում է նախաքննության ժամկետը վերսկսելու երեք իրավական ռեժիմ, մասնավորապես՝ ա) քրեական գործի նախաքննությունը վերսկսելու, բ) քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու և գ) կարճված գործի վարույթը նորոգելու:

Նկատի ունենալով, որ ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված է կարճված գործի վարույթը նորոգելու արդյունքում նախաքննության ժամկետի վերսկսման ինքնուրույն ռեժիմ, ուստի քրեական գործի նախաքննությունը վերսկսելով նախաքննության ժամկետի վերսկսման իրավական ռեժիմը վերաբերում է բացառապես կասեցված քրեական գործով նախաքննությունը վերսկսելու դեպքերին: Նման եզրահանգումը բխում է ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 7-րդ մասի տառացի մեկնաբանությունից:

Քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու կարգը սահմանված է ՀՀ ՔԴՕ 260-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով կասեցված վարույթը քննիչի որոշմամբ վերսկսվում է, եթե՝ ա) վերացվել են քրեական գործով վարույթը կասեցնելու՝ սույն օրենսգրքի 31-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերը, բ) անհրաժեշտ է կատարել դատավարական գործողություններ, որոնք կարող են իրականացվել առանց մեղադրյալի մասնակցության:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական գործով վարույթը վերսկսվում է նաև այն դեպքում, երբ դատախազն իր որոշմամբ վերացնում է քննիչի որոշումը՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին:

Հիշյալ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համեմատական վերլուծությունից հետևում է, որ քրեադատավարական օրենքը նախատեսում է կասեցված քրեական գործի վարույթը վերսկսելու իրավական երկու կառուցակարգ, մասնավորապես՝ ա) քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին քննիչի կողմից կայացվող որոշմամբ՝ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և բ) քրեական գործով

վարույթը կասեցնելու մասին քննիչի որոշումը դատախազի որոշմամբ վերացնելով: Վերջին դեպքում կասեցված գործի վարույթը վերսկսվում է մեխանիկորեն, առանց այդ մասին որոշում կայացնելու:

Հետևաբար, ՀՀ ՔԴՕ 260-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում նախաքննության ժամկետը վերսկսվում է քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին քննիչի կողմից որոշում կայացնելու, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ քննիչի որոշումը վերացնելու մասին դատախազի կողմից որոշում կայացնելու օրվանից:

Գործնականում երբեմն դատախազի կողմից քրեական գործով վարույթը կասեցնելու մասին քննիչի կայացրած որոշումը վերացնելուց հետո քննիչների կողմից կայացվում է քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին որոշում և այդպիսով փորձ է արվում վարույթը վերսկսված գործով նախաքննության ժամկետը հաշվել ոչ թե քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ քննիչի որոշումը վերացնելու մասին դատախազի կողմից որոշում կայացնելու օրվանից, այլ այն օրվանից, երբ վարույթն արդեն վերսկսված քրեական գործով քննիչը կայացնում է կասեցված քրեական գործով վարույթը վերսկսելու մասին որոշում: Նման պրակտիկան հակասում է քրեադատավարական օրենքին և հանգեցնում է դատախազի կողմից վարույթը վերսկսված գործով նախաքննության հետագա ժամկետը սխալ հաշվելուն:

Ինչ վերաբերում է քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու արդյունքում նախաքննության ժամկետի վերսկսմանը, ապա գործնականում այդպիսին խնդրահարույց չէ, և նման դեպքերում նախաքննության ժամկետը, ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան, վերսկսվում է լրացուցիչ քննության վերադարձված քրեական գործը քննիչի կողմից ստանալու օրվանից:

Հակառակ դրան, խնդրահարույց և գործնականում տարատեսակ մեկնաբանություն ու կիրառություն է ստացել կարճված գործով վարույթը նորոգելու դեպքերում նախաքննության ժամկետը վերսկսելու իրավական ռեժիմը:

հնչպես արդեն նշվել է, կարճված գործի վարույթը նորոգելու դեպքերում, ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով, նախաքննությունը պետք է ավարտվի մեկամսյա ժամկետում՝ գործի վարույթը նորոգելու մասին որոշում կայացնելու օրվանից սկսած:

Գործնականում թյուրլմբոնման տեղիք է տալիս հիշյալ հոդվածում «գործի վարույթը նորոգելու մասին որոշում» բառեզրույթների օգտագործումը, քանզի որոշման նման տեսակի մասին միակ հիշատակումը տեղ է գտել ՀՀ ՔԴՕ քննարկվող հոդվածում:

Նման իրավակարգավորման պայմաններում խնդրի լուծման համար պետք է գտնել հետևյալ հարցի պատասխանը՝ գործի վարույթը նորոգելու մասին որոշումը նույնական է արդյոք քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ քննիչի կայացրած որոշումը դատախազի կողմից վերացնելու մասին որոշմանը:

Քրեադատավարական օրենքում տեղ գտած իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է հանգել հիշյալ հարցադրման միայն դրական պատասխանին:

Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատախազը քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշումը կարող է վերացնել որոշման պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Դրանից հետո քրեական հետապնդման մարմնի՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կարող է վերացվել մեկ անգամ և միայն գլխավոր դատախազի կողմից՝ այդպիսի որոշում կայացնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում:

Նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է վերացնել հետաքննության մարմնի կամ քննիչի որոշումը քրեական գործով վարույթը կարճելու մասին, ինչպես նաև նրանց այլ որոշումներ՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Նույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին

մասի համաձայն՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը վերացնելու դեպքում, եթե չեն անցել սույն օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված ժամկետները, քրեական գործով վարույթը վերսկսվում է:

Քրեադատավարական օրենքի վկայակոչված հոդվածների իրավակարգավորումներից հետևում է, որ օրենքը որպես կարճված գործի վարույթը նորոգելու միակ իրավական կառուցակարգ նախատեսում է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կամ գլխավոր դատախազի կողմից կայացված որոշմամբ վերացնելը: Հետևաբար, ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 7-րդ մասում հիշատակված «գործի վարույթը նորոգելու մասին որոշում»-ը պետք է նույնացնել քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին դատախազի կողմից կայացված որոշմանը: Ուստի և քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին դատախազի որոշման կայացման օրվանից է վերսկսվում նախաքննության ժամկետը:

Գործնականում երբեմն քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին դատախազի կողմից որոշում կայացնելուց հետո քրեական գործն իր վարույթ ընդունած քննիչը կայացնում է որոշում քրեական գործով վարույթը վերսկսելու մասին՝ այդ կերպ փորձելով նախաքննության ժամկետի վերսկսումը կապել վերջին որոշման կայացման հետ: Նման մոտեցումը կամայական է և չի բխում քննիչին վերապահված լիազորություններից, քանզի քրեադատավարական օրենքը քննիչին վերապահել է միայն քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին որոշում կայացնելու լիազորություն՝ օրենքի 260-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, իսկ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին դատախազի կողմից որոշում կայացնելուց հետո քրեական գործն իր վարույթ ընդունած քննիչը լիազորված չէ կայացնելու քրեական գործով վարույթը վերսկսելու մասին որոշում: Նման որոշում կայացնելով՝ քննիչն անցնում է իր լիազորությունները, որը հանգեցնում

է նախաքննության վերսկսված ժամկետի սխալ հաշվարկմանը:

ե) Նախաքննության ժամկետի երկարացումը.

Նախաքննության ժամկետը երկարացնելու հիմնախնդիրները ստորև կքննարկենք ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվող իրավակարգավորումների վերլուծության համատեքստում:

Մասնավորապես, նախաքննության ժամկետի երկարացման քրեադատավարական ինստիտուտի իրավական հիմքերի կատարելագործման անհրաժեշտությամբ պայմանավորված, նախագծով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածում նախատեսել իրավակարգավորում, որի համաձայն՝ այն դեպքում, երբ քննիչը միջնորդություն է ներկայացնում նախաքննության ժամկետը երկարացնելու մասին, դատախազը լիազորված է կատարելու հետևյալ գործողություններից մեկը.

1) որոշում կայացնել նախաքննության ժամկետը երկարացնելու մասին,

2) որոշում կայացնել նախաքննության ժամկետը չերկարացնելու մասին՝ ցուցում տալով քննիչին բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու կամ քրեական գործի վարույթը կասեցնելու կամ կարճելու մասին՝ նրան տրամադրելով տասնօրյա ժամկետ, կամ մեղադրական եզրակացություն կազմելու մասին՝ քննիչին տրամադրելով տասնհինգօրյա ժամկետ:

Բացի այդ, առաջարկվել է բաց թողնված ժամկետը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածով սահմանված կարգով վերականգնելու միջնորդությամբ դատախազին դիմելու լիազորություն վերապահել նաև հետաքննության մարմնին, քննիչին և դատախազին՝ վերջիններիս դիտարկելով որպես բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությամբ հանդես գալու շահագրգիռ անձ:

Նախագծով առաջարկվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդ-

վածի 4-րդ մասում նախատեսել դրույթ այն մասին, որ ժամկետը բաց թողնված չի կարող համարվել նաև այն դեպքում, երբ փաստաթղթերը հանձնվել են տվյալ քննչական մարմնի գրասենյակ: Այլ կերպ ասած՝ առաջարկվել է համապատասխան փաստաթղթերը քննչական մարմինների գրասենյակ հանձնելն իրավական հետևանքների առումով հավասարեցնել փոստին հանձնված լինելուն:

Վերը շարադրված պատճառաբանություններով նախագծի 1-ին հոդվածով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 27-րդ կետը «որպես մեղադրյալ ներգրավելու,» բառերից հետո լրացնել «մեղադրական եզրակացություն կազմելու,» բառերով:

Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին կամ քրեական հետապնդման մարմնի գրասենյակին է հանձնված ժամկետը լրանալուց առաջ, իսկ կալանքի տակ գտնվող կամ բժշկական հաստատությունում տեղավորված անձանց համար, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնված է մինչև ժամկետի լրանալը: Բողոքը կամ այլ փաստաթուղթը փոստին կամ քրեական հետապնդման մարմնի գրասենյակին հանձնելու ժամանակը որոշվում է փոստի կամ գրասենյակի դրոշմով (կնիքով), իսկ կալանավորվածներին պահելու վայրի կամ բժշկական հաստատության վարչակազմին հանձնելու ժամանակը՝ այդ հաստատությունների գրասենյակների կամ պաշտոնատար անձանց կատարած նշումով:»:

Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակության նոր պարբերությամբ.

«Սույն հոդվածի իմաստով շահագրգիռ անձ կարող է համարվել նաև հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը»:

Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-

րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Բաց թողնված ժամկետը վերականգնելուց հետաքննության կամ նախաքննության մարմնի հրաժարումը կարող է բողոքարկվել հսկող դատախազին:

Բաց թողնված ժամկետը վերականգնելուց հսկող դատախազի հրաժարումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

Հետաքննության մարմնի, քննիչի բաց թողած ժամկետը վերականգնում է հսկող դատախազը: Բաց թողած ժամկետը վերականգնելուց հսկող դատախազի հրաժարումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

Դատախազի բաց թողած ժամկետը վերականգնում է վերադաս դատախազը:

Բաց թողնված ժամկետը վերականգնելուց դատարանի հրաժարումը վերադաս դատարանի բողոքարկման ենթակա չէ, սակայն վերադաս դատարանն իրավունք ունի վերականգնելու բաց թողնված ժամկետը՝ իր վարույթում գտնվող գործով:

Ձերբակալման և կալանքի տակ պահելու խախտված ժամկետները սույն հոդվածով սահմանված կարգով վերականգնման ենթակա չեն»:

Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Քննիչի որոշման հիման վրա նախաքննության ժամկետը կարող է երկարացնել դատախազը՝ այդ մասին կայացնելով պատճառաբանված որոշում»:

Նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածը լրացնել 5.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Նախաքննության ժամկետը չերկարացնելու մասին դատախազը կայացնում է պատճառաբանված որոշում, որով միաժամանակ ցուցում է տալիս քննիչին բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու կամ քրեական գործի վարույթը կասեցնելու կամ կարճելու մասին՝ քննիչին տրամադրելով տասնօրյա ժամկետ, իսկ մեղադրական եզրակացություն կազմելու մասին՝ քննիչին տրամադրելով տասնհինգօրյա ժամկետ: Դատախազի որոշման հետ համաձայն

չլինելու դեպքում քննիչն իրավունք ունի բողոքարկելու այն վերադաս դատախազին՝ որոշումն ստանալուց հետո երկօրյա ժամկետում: Մեղադրական եզրակացություն կազմելու վերաբերյալ դատախազի ցուցումի դեմ քննիչի բողոքը կասեցնում է դրա կատարումը մինչև վերադաս դատախազի կողմից բողոքի վերաբերյալ որոշման կայացումը: Վերադաս դատախազը քննիչի բողոքն ստանալու պահից ետօրյա ժամկետում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) վերացնում է ստորադաս դատախազի որոշումը և ողջամիտ ժամկետով երկարացնում է նախաքննության ժամկետը.

2) մերժում է քննիչի առարկությունները և քրեական գործը վերադարձնում է քննիչին՝ ստորադաս դատախազի որոշման պահանջները կատարելու համար:

Դատախազի կողմից նախաքննության ժամկետը չերկարացնելու մասին որոշման փաստի ուժով նախաքննության ժամկետը համարվում է երկարացված մինչև քննիչի կողմից սույն հոդվածով սահմանված ժամկետներում համապատասխան որոշումների կայացումը:

Դատախազի կողմից նախաքննության ժամկետը չերկարացնելու մասին որոշման մեջ նշված պահանջների կատարման ընթացքում քննչական գործողությունների կատարումն արգելվում է:

Սույն հոդվածով սահմանված ժամկետները սկսում են հաշվարկվել դատավարական համապատասխան փաստաթղթերը քննիչի կամ դատախազի կողմից ստանալու պահից»:

Նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասում «երեք օր» բառերը փոխարինել «չորս օր» բառերով:

Գտնում ենք, որ նախագծով առաջարկվող օրենսդրական փոփոխություններից գործնական անհրաժեշտության տեսանկյունից հավանության է արժանի միայն նախագծի 7-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումը, համաձայն որի՝ քննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշումը քննիչը պարտավոր է ներկայացնել դատախազին՝ քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 4 օր առաջ (գործող օրենսդրությամբ նախատեսված 3 օրվա փոխարեն):

Չնայած գործնական որոշ խնդիրների լուծմանը միտված լինելուն, տեսականորեն հիմնավորված չեն նախագծի 2-5-րդ հոդվածներով առաջարկվող օրենսդրական փոփոխությունները՝ հետևյալ պատճառաբանություններով.

Դատավարության տեսությունում ժամկետները դասակարգվում են գործավարականի և զուտ դատավարականի: Գործավարական ժամկետները վարույթն իրականացնող մարմինների գործունեության ներքին կազմակերպումն ապահովող ժամկետներն են, իսկ զուտ դատավարական ժամկետները կողմերի իրավունքներն ապահովող ժամկետներն են: Վերջին դեպքում ժամկետի պահպանումը կամ բաց թողնելը պայմանավորում է դատավարական իրավունքի ծագումը¹: Այս դասակարգումով առանձնանում են դատավարական ժամկետների էական հատկանիշները: Գործավարական ժամկետները, որոնք սահմանափակում են պաշտոնատար անձանց գործունեությունը, այլ կերպ են հաշվարկվում և պահպանվում, քան մասնավոր անձանց գործունեությունը սահմանափակող ժամկետները: Եթե գործավարական ժամկետները երկարացվում են, ապա զուտ դատավարական ժամկետները վերականգնվում են²:

Այլ կերպ ասած՝ պետք է իրարից տարբերել քրեական դատավարության մասնակից պաշտոնատար անձանց հասցեագրված դատավարական ժամկետները, որոնց պահպանման համար սահմանված են այլ կանոններ և որոնք ոչ թե վերականգնվում, այլ երկարացվում են, և քրեական դատավարության մասնակից մասնավոր անձանց հասցեագրված դատավարական ժամկետները, որոնք հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքերում ենթակա են վերականգնման վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Այս տեսանկյունից անընդունելի են նախագծի 2-4-րդ հոդվածներով առաջարկվող օրենսդրական փոփոխությունները, քանզի դրանցով առաջարկվել է գործավարական, այն է՝ նախաքննության ժամկետների վրա տարածել զուտ դատավարական, այն է՝ մասնավոր ան-

ձանց գործունեությունը սահմանափակող ժամկետների հաշվարկման և պահպանման կանոնները:

Մասնավորապես, անընդունելի է նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող օրենսդրական փոփոխությունը, ըստ որի՝ ժամկետը բաց թողնված չի համարվում, եթե բողոքը կամ այլ փաստաթուղթը ժամկետը լրանալուց առաջ հանձնված է քրեական հետապնդման մարմնի գրասենյակ: Առաջարկվող օրենսդրական փոփոխությունն ընդունելի կարելի է համարել միայն այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդման մարմնի գրասենյակ է հանձնվում մասնավոր անձի բողոքը կամ այլ փաստաթուղթը, սակայն ոչ մի պայմանով դա չի կարող ներառել նաև քննիչի կողմից նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշումը հենց նախաքննության մարմնի գրասենյակ հանձնելու դեպքերը:

Նման օրենսդրական փոփոխություն կատարելու առաջարկը հիմնավոր համարելու դեպքում լիովին կարժեգրկվեն գործավարական, այն է՝ նախաքննության ժամկետների պահպանման այնպիսի հատուկ կանոնները, որոնք իրենց ամրագրումն են ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածում: Մասնավորապես, քննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշումը քննության ժամկետը լրանալուց առնվազն 3 օր առաջ դատախազին ներկայացնելու պարտականությունը հիշյալ հոդվածի 6-րդ մասով քննիչի վրա ինքնանպատակ չի դրվել: Այդ պարտականության պատշաճ կատարումը կոչված է ապահովելու, որ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, նախաքննության ժամկետը լրանալուց առնվազն 3 օր առաջ ստանալով քննության ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշումը, միաժամանակ քրեական գործի ստուգմամբ կարողանա գնահատական տալ նախաքննության ժամկետը համապատասխան ժամանակով երկարացնելու պատճառաբանվածությանը: Հետևաբար, նախաքննության ժամկետը լրանալուց առնվա-

¹ Сму Фойницкий И. Я., “Курс уголовного судопроизводства. Том. 2.” СПб., 1996. ст. 347.

² Сму Калиновский К. Б., “Процессуальные сроки в уголовном судопроизводстве и их регламентация по Уголовно-процессуальному кодексу Российской Федерации” // Ленинградский юридический журнал. 2005. № 2(3). ст. 139-145.

վազն 3 օր առաջ քննության ժամկետը երկարացնելու մասին որոշումը հենց նախաքննության մարմնի գրասենյակ հանձնելով՝ քննիչը չի կատարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված իր պարտականությունը և դրանով իսկ չի ապահովում մինչև նախաքննության ժամկետի լրանալը դատախազի կողմից ժամկետը երկարացնելու հարցի լուծումը, մանավանդ, որ նման կառուցակարգը կիրառելի համարելու դեպքում քննության ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշումը դատախազը կարող է ստանալ նախաքննության ժամկետը լրանալուց հետո:

Այս առումով օրենսդրական բաց պետք է համարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածով քննության ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշման հետ նաև քրեական գործը դատախազին ներկայացնելու՝ քննիչի պարտականության բացակայությունը, քանի որ քննության ժամկետը երկարացնելու մասին որոշումն առանց քրեական գործը դատախազին ներկայացնելու դեպքերում, որպիսիք գործնականում երբեմն տեղ են գտնում, դատախազը զրկված է լինում կոնկրետ ժամկետով նախաքննության ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը որոշելու հնարավորությունից, ուստի, գտնում ենք, որ օրենսդրական այդ բացը ենթակա է վերացման՝ քննիչի վրա դնելով պարտականություն՝ նախաքննության ժամկետը լրանալուց առնվազն 3 օր առաջ (ըստ նախագծի՝ առնվազն 4 օր առաջ) դատախազին ներկայացնելու քննության ժամկետը երկարացնելու մասին որոշումը քրեական գործի հետ միասին:

Անընդունելի են նաև նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներով առաջարկվող օրենսդրական փոփոխությունները, որոնցով առաջարկվում է քննիչի կողմից նախաքննության ժամկետը խախտելու հնարավոր դեպքերում կիրառել բաց թողնված ժամկետը վերականգնելու ինստիտուտը:

Ինչպես արդեն նշվել է, վերականգնվում է բաց թողնված զուտ դատավարական, այն է՝ մասնավոր անձանց գործունեությունը սահմանափակող ժամկետը, իսկ պաշտոնատար անձանց գործունեությունը սահմանափակող նախաքննության ժամկետը ոչ թե վերականգն-

վում, այլ երկարացվում է: Այլ հարց է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում դատախազի կողմից նախաքննության ժամկետը երկարացնելու լիազորություն՝ հնարավոր այն դեպքերում, երբ քննության ժամկետը երկարացնելու մասին որոշումը քննիչի կողմից դատախազին է ներկայացվում նախաքննության ժամկետը լրանալուց հետո:

Կարծում ենք, նմանատիպ իրավիճակների լուծման համար անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի պարտականություն՝ քննիչի նկատմամբ ծառայողական քննություն նշանակելու միջնորդությամբ դիմելու նախաքննության մարմնի ղեկավարին՝ այդ մասին գրավոր զեկուցելով վերադաս դատախազին, միևնույն ժամանակ, դատախազին վերապահել նաև այդպիսի դեպքերում նախաքննության ժամկետը երկարացնելու լիազորություն՝ անկախ ծառայողական քննության արդյունքներից: Եթե ծառայողական քննության արդյունքում պարզվի, որ քննիչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պարտականությունը չի կատարել առանց հարգելի պատճառների, ապա, որպես դատավարական հետևանք, քննիչը պետք է հեռացվի տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելուց: Ընդ որում, նման դեպքերում դատախազը նախաքննության ժամկետը պետք է երկարացնի քննության ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշումն ստանալու օրվանից 3 օրվա ընթացքում՝ կայացնելով որոշում նախաքննության ժամկետը երկարացնելու մասին, իսկ նախաքննության ժամկետը լրանալուց մինչև դատախազի կողմից ժամկետը երկարացնելը կատարված քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները որպես ապացույց օգտագործելը պետք է լինի անթույլատրելի:

Որևէ կերպ փաստարկված չէ և, հետևաբար, հավանության արժանի չէ նաև նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող օրենսդրական փոփոխությունը, ըստ որի առաջարկվել է քննության ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշման հիման վրա նաև դատախազի

կողմից այդ մասին պատճառաբանված որոշում կայացնելու կառուցակարգ:

Բացի այն, որ գործնականում դատախազի կողմից նման որոշման կայացումը կհանգեցնի ժամանակի ավելորդ կորստի՝ ի վնաս քննության արդյունավետության և դատավարական ռեսուրսների տնտեսման, բոլոր այն դեպքերում, երբ քննիչի որոշումը դատախազը գնահատի ամբողջությամբ պատճառաբանված, այդ մասին դատախազի կողմից որոշման կայացումը կվերաժվի կրկնաբանության: Այդ իմաստով, դատախազի կողմից նախաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշման կայացումը ընդունելի կարող է համարվել միայն վերը նշված և այն դեպքերում, երբ դատախազը քննիչի որոշումը գնահատի չպատճառաբանված և գտնի, որ նախաքննության ժամկետն անհրաժեշտ չէ երկարացնել այն տևողությամբ, ինչ տևողությամբ միջնորդել է քննիչը: Ուստի, գտնում ենք, որ նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվող օրենսդրական փոփոխության փոխարեն անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածը լրացնել հետևյալ դրույթով. եթե դատախազը, քննարկելով քննության ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշումը, գտնի, որ այն պատճառաբանված չէ և որոշմամբ առաջարկվող ժամկետը համարժեք չէ նախատես-

վող դատավարական գործողությունների ծավալին, ապա, չհաստատելով քննիչի որոշումը, կայացնում է նախաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշում՝ նախաքննության ժամկետը երկարացնելով ողջամիտ ժամկետով:

Կարծում ենք, որ հիշյալ կառուցակարգով դատախազը պետք է կայացնի որոշում նաև այն դեպքերում, երբ գտնում է, որ առկա են քրեական գործով վարույթը կարճելու, կասեցնելու, մեղադրական եզրակացությամբ նախաքննությունն ավարտելու կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար գործը դատարան ուղարկելու հիմքեր: Այս իմաստով ավելորդ ենք համարում նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվող օրենսդրական փոփոխությունները, մանավանդ, որ դրանցով առաջարկվում է նախաքննության ժամկետը չերկարացնելու դեպքերում քննության ժամկետը մեխանիկորեն սահմանափակ տևողությամբ երկարացվելու կառուցակարգ: Մինչդեռ, կախված գործի բարդությունից և ծավալից, դատախազը, չերկարացնելով նախաքննության ժամկետը, պետք է հնարավորություն ունենա իր ցուցումը կատարելու համար նախաքննության ժամկետը երկարացնել առավել տևական ժամանակով, քան առաջարկվել է նախագծի 6-րդ հոդվածով:



ՊԵՏՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ,
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի
քրեական իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Ցանկացած ինստիտուտի նպատակների բազմակողմանի ուսումնասիրություն իրականացնելու և դրա վերաբերյալ կատարված հետևությունների հիմնավորվածությունն ապահովելու համար անհրաժեշտ է նախևառաջ անդրադառնալ տվյալ ինստիտուտի հասկացության ուսումնասիրությանը, ինչից ելնելով նպատակահարմար ենք համարում պատժի նպատակների ուսումնասիրությունը սկսել «պատժի» հասկացության, էության և նշանակության համառոտ ներկայացմամբ:

Այսպես, պատիժը քրեական իրավունքի հիմնական և կարևորագույն ինստիտուտներից է, որի տեսական և գործնական հիմնախնդիրները մանրամասն ուսումնասիրվել են իրավաբանական գրականության մեջ, և դրանց վերաբերյալ առկա են բազմաթիվ աշխատություններ: Չնայած դրան, պատիժը դեռ մնում է՝ որպես արդիական և խնդրահարույց ինստիտուտ:

Պատիժը հանցագործության դեմ պայքարի գործում պետական քրեական քաղաքականության իրականացման արդյունավետ միջոցներից է, քանի որ այն պետական հարկադրանքի ամենախիստ միջոցն է և այդպիսով ուղեկցվում է մարդու իրավունքների և ազատությունների առավել սահմանափակմամբ:

Քրեական իրավունքի տեսությունում գոյություն ունեն պատժի հասկացության բազմաթիվ սահմանումներ: Տարբեր հեղինակների կողմից առանձնացվում են որոշակի չափանիշներ, որոնց համակցությունը ձևավորում է պատժի հասկացությունը և արտացոլում պատժի էությունը:

Այսպես, Ա.Ա.Ժիժիլենկոն, անդրադառնալով պատժի հասկացության բովանդակությանը, նշում է, որ պատժի հասկացությունում պետք է արտացոլվեն պատժի այն չափանիշները, որոնք կարող են բնութագրել դրա էությունը՝ որպես առանձնահատուկ իրավական երևույթ¹: Քրեական իրավունքի տեսության մեջ առավել տարածված է այն սահմանումը, համաձայն որի, պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը նշանակվում է հանցագործության մեջ մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ՝ դատարանի կողմից, պետության անունից²:

Մ.Դ. Շարգարոդսկին նշում է, որ պատիժը՝ հանցագործին որոշ բարիքներից զրկելու միջոց է, որն արտահայտվում է պետության անունից հանցագործին՝ բացասական գնահատական տալով՝ կապված իր կողմից կատարված արարքի հետ³:

Ա.Ս. Ռեյտբորտը նշում է, որ պատիժը, որպես պետական հարկադրանքի հատուկ միջոց, կրում է հրապարակային բնույթ, նշանակվում օրենքով սահմանված կարգով բացառապես դատարանի կողմից՝ հանցագործություն կատարած անձի նկատմամբ: Քրեական պատիժը նշանակվում է պետության անունից, արտահայտվում է հանցագործությանը և այն կատարած անձին բացասական գնահատական տալով և այդպիսով կրում խիստ անհատական բնույթ. դատապարտյալի համար պատժի նշանակումն առաջացնում է օրենքով սահմանված իրավունքների և ազատությունների սահմանափակումներ և զրկումներ, որոնք կիրառվում են դատապարտվածին ուղ-

¹ Տես Жижиленко А. А., “Наказание. Его понятие и отличие от других правоохранительных средств” Петроград, 1914, ст. 13-14.
² Տես Беляев Н. А., “Уголовно-правовая политика и пути ее реализации” Л., 1986, ст. 14, Ной И. С., “Вопросы теории наказания в советском уголовном праве” Саратов, 1962, ст. 155, Наташев А. Е., Стручков Н. А., “Основы теории исправительно-трудового права” М., 1967, ст. 32, Галиакбаров Р. Р., “Уголовное право. Общая часть” Краснодар, 1999, ст. 290.
³ Տես Шаргародский М. Д., “Наказание, его цели и эффективность” Л., 1973, ст. 12.

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 89 2015

ղելու և դաստիարակելու, ինչպես նաև նոր հանցագործությունները կանխելու նպատակով⁴:

Հեղինակի հիշյալ սահմանման վերլուծությունից հետևում է, որ պատժին բնորոշ են հետևյալ իրավական չափանիշները.

1) այն պետական հարկադրանքի հատուկ միջոց է,

2) ունի հրապարակային բնույթ,

3) նշանակվում է բացառապես դատարանի կողմից,

4) կիրառվում է բացառապես օրենքի հիման վրա,

5) կիրառվում է հանցագործություն կատարած անձի նկատմամբ,

6) արտահայտվում է պետության անունից՝ հանցագործությանը և այն կատարած անձին բացասական գնահատական տալով,

7) կրում է խիստ անհատական բնույթ,

8) դատապարտված անձին պատճառում է սահմանափակումներ և զրկանքներ:

ՌԴ քրեական իրավունքի դասագրքի հեղինակները նշում են, որ պատժին բնորոշ են յոթ հիմնական հատկանիշներ.

1) պատիժը պետական հարկադրանքի միջոց է,

2) այն նշանակվում է բացառապես դատական մարմինների կողմից,

3) նշանակելու հիմքը հանցագործություն կատարելն է, որի հասկացությունը բացահայտվում է քրեական օրենսգրքերում,

4) կրում է խիստ անհատական բնույթ, այսինքն, նշանակվում է այն անձի նկատմամբ, ով կատարել է հանցագործություն,

5) պատժի կիրառման արդյունքում սահմանափակվում են դատապարտյալի որոշ ի-

րավունքներ ու ազատություններ, կամ նա զրկվում է դրանցից,

6) պատժի հաջորդ հատկանիշը դատվածությունն է, որի հասկացությունը բացահայտվում է քրեական օրենսգրքում: Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ դատվածությունը, որպես պատժի հատկանիշ համարելը, քննադատվել է իրավաբանական գրականության մեջ:

Այսպես, մի շարք հեղինակներ, օրինակ՝ Վ.Վ.Լուկյանովը, Ա.Վ. Նաումովը, Ա.Ի. Ռառոգը և մյուսները, կարծում են, որ պատիժը բերում է հատուկ իրավական հետևանքի՝ դատվածության, որն ուսումնասիրվում է որպես պատժին բնորոշ հատկանիշ⁵: Լ.Լ. Կրուգլիկովը և Ա.Ֆ. Միցկևիչը կարծում են, որ դատվածություն չի կարող համարվել պատժին բնորոշ հատկանիշ⁶: Մինչդեռ, գտնում ենք, որ առավել արդարացված են քրեագետների այն կարծիքները, որոնք պնդում են, որ դատվածությունը պատժին բնորոշ հատկանիշ է, քանի որ ի վերջո պատժի կիրառման արդյունքում անձը ձեռք է բերում դատվածություն և հանցագործություն կատարած անձի կողմից այդ կարգավիճակը ձեռք բերելն անխուսափելի է դառնում⁷:

7) պատժին բնորոշ վերջին հատկանիշը՝ պետության բացասական գնահատականն է հանցագործին և հանցագործությանը, որն արտահայտվում է դատարանի դատավճռով անձի կողմից կատարված կոնկրետ հանցագործության վերաբերյալ⁸:

«Քրեական իրավունքի ընդհանուր մասի դասագրքում ևս առանձնացվում են պատժին բնորոշ մի շարք չափանիշներ.

1) պատիժը պետական հարկադրանքի միջոց է: Պետական հարկադրանքի միջոցները

⁴ Տես Рейтборт А. М., «Понятие и цели наказания» М., 1961, ст. 1.

⁵ Տես, օրինակ՝ «Уголовное право России: Общая часть» / Под ред. Н. М. Кривачева, Б. В. Волженкина и В. В. Орехова. СПб., 2006, ст. 722.

⁶ Տես «Уголовное право России: Часть Общая» / Отв. ред. Л. Л. Кругликов, М., 2005, ст. 345.

⁷ Տես «Курс Уголовного права: Учебник для вузов» / Под ред. Н. Ф. Кузнецовой и И. М. Тяжковой, Т. 2: Общая часть. Учение о наказании. М., 2002, ст. 9-10. Նպատակահարմար է նշել նաև, որ քննարկվող հարցի վերաբերյալ համակարծիք են նաև ՀՀ քրեական իրավունքի դասագրքի հեղինակները, այսպես՝ նրանց կարծիքով դատվածությունը համարվում է նաև պատժի կրման հետևանք: Այնուհետև, զարգացնելով իրենց դիրքորոշումը հեղինակները նշում են, որ չենք սխալվի եթե հավաստենք, որ դատվածությունը հանդիսանում է պատժի ինքնուրույն տարր (այս մասին առավել մանրամասն տես Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) / Ս. Առաքելյան, Ա. Գաբուրյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 370): Բացի այդ, դատվածության քրեաիրավական նշանակությունը բացահայտված է ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածում:

⁸ Տես «Уголовное право Российской Федерации. Общая часть: Учебник для вузов» / Под ред. В. С. Камиссарова, Н. Е. Крыловой, И. М. Тяжковой, – М.: Статут, 2012, ст. 534-538.

տարաբնույթ են, քրեական պատիժն այդ համակարգում համարվում է որպես հատուկ, առավել խիստ և ծանր միջոց,

2) պատիժը նշանակվում է բացառապես դատարանի դատավճռով և պետության անունից,

3) պատիժը կրում է հանրային բնույթ,

4) պատիժը կրում է խիստ անձնական բնույթ: Պատիժը նշանակվում է միայն հանցագործության մեջ դատարանի կողմից մեղավոր ճանաչված անձի նկատմամբ,

5) պատժի նշանակումը միշտ կապված է իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ, այն պատճառով է բարոյական զրկանքներ և զրկում է անձին որոշակի բարիքներից (ազատություն, գույքային իրավունքներ և այլն)⁹:

Որպես պատժի հասկացության տարբերվող և քննադատվող մոտեցում անհրաժեշտ է առանձնացնել Ս.Ի. Դեմենտևի բնորոշումը: Այսպես՝ նա նշում է, որ «պատիժը մեղավորին օրենքով նախատեսված տարբեր տառապանքներ պատճառելու միջոց է»¹⁰: Հեղինակը, այնուհետև զարգացնելով իր մոտեցումը, նշում է, որ չի կարելի «սահմանափակել դատապարտյալների նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցների խստությունը, որոնք իրենց մեջ պարունակում են մարդկային արժանապատվությունը նվաստացնող տարրեր»¹¹: Բնականաբար, քրեական իրավունքի տեսության մեջ այս մոտեցումը ենթարկվեց մի շարք քննադատությունների, մասնավորապես, որ պատիժը չպետք է դատապարտյալին տառապանքի ենթարկելու կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնելու նպատակ հետապնդի, քանի որ այն հակասում է քրեական իրավունքի մարդասիրության սկզբունքին¹²:

Ս.Ի. Դեմենտևի գործունեության ժամանակաշրջանի առանձնահատկությունների հաշվառմամբ անգամ գտնում ենք, որ անընդունելի է նրա մոտեցումն այն առումով, որ որոշակի տեսակի հարկադրանքի միջոցների կիրառումը նվաստացնում է մարդկային արժանապատվու-

թյունը: Մասնավորապես, չնայած նախկին ՀՀ քրեական օրենսգրքերով ուղղակիորեն նախատեսված չի եղել մարդասիրության սկզբունքը, սակայն այդ սկզբունքի բովանդակությունն արմատացած է եղել, որպես քրեական պատժի նպատակ. 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածում սահմանված էր, որ «Պատիժը նպատակ չունի ֆիզիկական տանջանքներ պատճառել կամ ստորացնել մարդկային արժանապատվությունը»: Եթե նախկին քրեական օրենսգրքով անհրաժեշտ էր դա ուղղակիորեն նախատեսել որպես պատժի նպատակ, ապա ներկայումս դրա համար հատուկ նախատեսման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ գործող քրեական օրենսգրքում այդ արգելքը նախատեսված է, որպես քրեական իրավունքի սկզբունք: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվել է, որ. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

ՀՀ քրեական իրավունքում այդ սկզբունքի նախատեսումը ենթադրում է, որ քրեական պատասխանատվությունը և պատիժը չեն հետապնդում հանցանք կատարած անձին ֆիզիկական տանջանքներ պատճառելու, նրա մարդկային արժանապատվությունը նվաստացնելու նպատակ: ՀՀ քրեական իրավունքի մարդասիրությունն արտահայտվում է նաև օրենքում՝ դաժան, տառապանք պատճառող և նվաստացնող պատիժների բացառման մեջ:

Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածում սահմանված պատժի տեսակների կիրառումը բացառապես արտահայտվում է այդ հանցագործությունը կատարած անձի իրավունքների և ազատությունների զրկմամբ կամ սահմանափակմամբ: Իսկ մարդկային արժանապատվությունը չի նշվում այն բարիքների շարքում, որոնք ոտնահարվում կամ նվաստացնում են հանցագործություն կատարած ան-

⁹ Տես «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) / Ս. Առաքելյան, Ա. Գաբրիելյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. - Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 369-371:

¹⁰ Տես Дементьев С. И., «Лишение свободы: уголовно-правовые и исполнительно-трудовые аспекты». Ростов-на-Дону, 1981, ст. 45.

¹¹ Տես նույն տեղում:

¹² Տես Кригер Г.А., «Место принципов советского уголовного права в системе принципов права» // Советское государство и право. № 2, 1981, ст. 106.

ծին քրեական պատժի ենթարկելու արդյունքում:

Եթե համալիր ուսումնասիրենք հիշյալ բոլոր սահմանումները, ապա պետք է նշենք, որ պատժին բնորոշ են հետևյալ հիմնական իրավական չափանիշները.

- 1) պատիժը պետական հարկադրանքի հատուկ միջոց է,
- 2) նշանակվում է բացառապես դատարանի կողմից և պետության անունից,
- 3) կիրառվում է հանցագործության մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ,
- 4) կիրառման արդյունքում սահմանափակվում կամ զրկվում են դատապարտյալի իրավունքները և ազատությունները,
- 5) հանցագործություն կատարած անձը ձեռք է բերում դատվածություն:

Պատժի հասկացության բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է նաև անդրադառնալ դրա օրենսդրական ձևակերպմանը, այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ»:

Գտնում ենք, որ հիշյալ օրենսդրական սահմանման բովանդակության հիմքում դրված է քրեական իրավունքի տեսությունում առկա պատժի սահմանումների իրավական չափանիշները: Այսպես, քրեական պատժի օրենսդրական սահմանումից հետևում է, որ դրան բնորոշ են հետևյալ իրավական պարտադիր չափանիշները.

- 1) պետական հարկադրանքի միջոց է,
- 2) նշանակվում է դատարանի կողմից պետության անունից,
- 3) այն կիրառվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ,
- 4) դրսևորվում է անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ կամ զրկմամբ:

Միևնույն ժամանակ, պատժի հասկացության օրենսդրական ձևակերպման մեջ առկա է տրամաբանական անճշտություն: Այսպես, ՀՀ

քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված՝ «նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ» ձևակերպումն արդարացված և ճշգրիտ չէ, քանի որ հանցագործության հասկացությունն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, ներառում է իր մեջ մեղավորությունը: Այս պայմաններում, «մեղավորություն» բառն ավելորդ է պատժի հասկացության օրենսդրական ձևակերպման մեջ, քանի որ եթե անձը կատարել է հանցագործություն, ապա դա արդեն իսկ ենթադրում է նրա մեղավորությունը: Հետևաբար, գտնում ենք, որ պատժի հասկացության օրենսդրական սահմանումից անհրաժեշտ է ընդհանրապես բացառել «մեղավորություն» բառը:

Ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի, անհրաժեշտ է նշել, որ նախկին ՀՀ քրեական օրենսգրքում սահմանված չէր քրեական պատժի հասկացությունը, որը կարելի էր համարել կարևոր իրավական բացթողում: Այն ընդամենը բովանդակում էր քրեական պատժի վերաբերյալ որոշակի դրույթներ (պատժի նպատակները, տեսակները և այլն): Այսպես, ՀՀ 1961 թվականի նախկին քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածում սահմանված էր, որ «Պատիժը ոչ միայն մեղքի քավումն է կատարված հանցագործության համար, (...)»: Ուստի, անհրաժեշտ է ընդգծել, որ նույնիսկ անճշտության առկայության պայմանում, գործող ՀՀ քրեական օրենսգրքը համապարփակ և ամբողջական սահմանում է քրեական պատժի հասկացությունը՝ բացահայտելով դրա էությունն ու առանձնահատկությունը:

Հաշվի առնելով վերոհիշյալը, կարելի է արձանագրել, որ պատիժը ամենախիստ (հատուկ) պետական հարկադրանքի միջոցն է, որն ունի պատժիչ բնույթ, նշանակվում է պետության անունից և բացառապես դատարանի կողմից՝ հանցագործություն կատարած անձի նկատմամբ (խիստ անձնական բնույթ) և արտահայտվում է դատապարտյալի իրավունքների ու ազատությունների օրենքով սահմանված կարգով զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ, որի իրավական հետևանքը դատվածությունն է:

Բացահայտելով պատժի հասկացությունը (իրավական պարտադիր չափանիշները և առանձնահատկությունները)՝ կարող ենք անդրադառնալ պատժի նպատակների հասկացության ուսումնասիրությանը:

Այսպես, անդրադառնալով քրեական պատժի նպատակների ուսումնասիրությանն՝ անհրաժեշտ է նշել, որ քրեական օրենսդրությունում բացակայում է քրեական պատժի նպատակների հասկացության օրենսդրական սահմանումը, այլ ընդամենը օրենսդրի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվում են քրեական պատժի նպատակները, որի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»: Նման մոտեցմամբ օրենսդիրը սահմանել է կարևոր սոցիալ իրավական ցանկալի այն արդյունքները, որոնք պետք է վրա հասնեն քրեական պատժի նշանակման և իրականացման արդյունքում:

Պատժի նպատակների հասկացության ուսումնասիրությունը ենթադրում է «նպատակ» եզրույթի իմաստային նշանակությունը վեր հանելու անհրաժեշտություն: Այսպես, հայերենի բացատրական բառարանի հեղինակ Ա.Աղայանը, նպատակը բացատրում է, որպես այն, ինչի ձգտում են՝ ցանկանում են հասնել, ձգտման առարկա¹³: Ռուսական բացատրական բառարանում Ս.Աժոգովը նպատակ հասկացությանը տալիս է նմանատիպ բացատրություն: Այսպես, նրա կարծիքով նպատակը՝ ձգտման առարկան է, այն, ինչը որ պետք է, ցանկալի է իրականացնել¹⁴:

Նպատակի կարևորությունը նաև արտահայտվում է նրանում, որ այն ներթափանցում է պատճառահետևանքային փոփոխությունների «շղթա», այսինքն՝ կապում է պատճառը դրա իրացման հետևանքով վրա հասած արդյունքին: «Նպատակ» եզրույթի ամբողջական վերլուծությունն իրականացվում է Վ.Խ. Բաղդասարյանի կողմից, որի կարծիքով. «Նպատակն օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող երևույթ է, որը 1) գոյություն չունի ներկայում, բայց ենթադրվում է, որ պետք է գոյություն ունենա ապագայում, հետևաբար, 2) արտացոլվում է մարդկային գիտակցության մեջ և իհարկե արտացոլվում է նախապես, այսինքն, նախապես հաշվի է առնվում, 3) դիտվում է որպես

գործունեության հնարավոր արդյունք, 4) հանդիսանում է ցանկալի այդ մարդու համար և 5) մարդն իրականում ձգտում է հասնել դրան»¹⁵:

Անդրադառնալով պատժի նպատակների հասկացության օրենսդրական սահմանման բացակայությանը, անհրաժեշտ է նշել, որ մեր կարծիքով, ընդհանրապես բացակայում է դրա օրենսդրական ամրագրման նպատակահարմարությունը, քանի որ դրա սահմանումը կարելի է ամրագրել դոկտրինալ իրավունքի շրջանակներում, իսկ գործնական առումով այն էական նշանակություն չի ներկայացնում: Սակայն քրեական իրավունքի տեսությունում պատժի նպատակների հասկացության ձևավորումը կարևոր նշանակություն ունի պատժի ինստիտուտի զարգացման համար, ինչպես նաև գործնականում դրա արդյունավետ կիրառման համար:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ պետք է հրաժարվել պատժի նպատակներից, որպես քրեաիրավական կատեգորիայից: Այսպես, Ն.Ա. Բելյանը գտնում է, որ «պատժի նպատակները» պետք է փոխարինվեն «սոցիալական գործառույթ» հասկացությամբ, քանի որ դրանք արտացոլում են քրեական պատժի իրականացման իրական նշանակությունը: Ի հիմնավորումն հիշյալ մոտեցման, նշվում է, որ ցանկացած նպատակի նախատեսում ենթադրում է որոշակի սուբյեկտի ներկայություն, որն առկա չէ պատժի նպատակների դեպքում¹⁶: Գտնում ենք, որ հիշյալ մոտեցումն արդարացված չէ, քանի որ, նախատեսելով համապատասխան պատժի նպատակների տեսակները, օրենսդիրն այդ նպատակների հասցեատեր նշանակել է իրավակիրառ մարմնի սուբյեկտներին, այսինքն՝ դատարանին, որը կիրառում է պատիժը, և մարմիններին ու ծառայություններին, որոնք կատարում են պատժի իրականացումը: Օրենքում պատժի նպատակների դրույթների անուղղակի հասցեատեր կարող են լինել դատապարտյալները և հասարակությունը: Այսպիսով, պատժի նպատակներն ուղղված են այն սուբյեկտներին, որոնք կարող են կիրառել և կատարել պատժի նպատակները: Այսպիսով, քրեական իրավունքի տեսությունում

¹³ Տես Աղայան Է. Դ., «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան», Հրատ., Երևան, 1976, էջ 1083:

¹⁴ Տես Ожегов С. И., Шведова Н. Ю., «Толковый словарь русского языка» - М.: Азъ LTD, 1992, ст. 905.

¹⁵ Տես Багдасарян В. Х., «Причина и цель» // Автореф. Дис. канд. философ. наук., Ереван, 1967, ст. 11.

¹⁶ Տես «Уголовное право на современном этапе. Проблема преступления и наказания» Под ред. Н. А. Беляева, В. К. Глистина и В. В. Орехова. - СПб., 1992, ст. 476-477.

առկա այն մոտեցումը (մոտեցումները), որի համաձայն՝ «պատժի նպատակներ» քրեաիրավական կատեգորիան անհրաժեշտ է փոխարինել «սոցիալական գործառույթ» հասկացությամբ, մեր կարծիքով գործնականում օբյեկտիվորեն կոժվարացնի պատժի կիրառման ինստիտուտը, քանի որ նախևառաջ, այնքան էլ պարզ չէ, թե ինչ պետք է հասկացվի սոցիալական գործառույթ հասկացության շրջանակներում, և երկրորդ՝ դատարաններին, ծառայություններին կզրկի պատժի նշանակման և իրականացման համար նախատեսված կոնկրետ ուղղություններից:

Ա.Ի.Ֆատխուտդինովան այս առումով նշում է, որ պատժի նպատակների նախատեսումը քրեական իրավունքում դեկլարացիա, ավելին՝ դեկորացիա չէ: Խոսքը գնում է քրեաիրավական կատեգորիայի մասին, որը գտնվում է քրեական իրավունքի հասկացությունների, ինստիտուտների, նորմերի համակարգի կենտրոնում¹⁷:

Ա.Ի. Չուչաևայի և Ե.Ռ. Աբդրախմանովայի կարծիքով, «պատժի նպատակներն այն սոցիալական արդյունքն է, որին ձգտում է պետությունը՝ նշանակելով քրեական պատիժներ՝ հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ»¹⁸:

Այսպիսով՝ պատժի նպատակներն իրենց բնույթով, որպես սոցիալական պահանջներ, արտացոլված են օրենքում, ուղղված են դատարանին և համապատասխան ծառայությանը, համապատասխանաբար՝ որպես պատիժ նշանակող և իրականացնող մարմիններին, իսկ որպես տեղեկատվություն՝ հանցագործություն կատարած անձանց և հասարակությանը:

Ընդհանուր առմամբ համաձայնելով պատժի նպատակների վերաբերյալ տրված հասկացությունների հետ՝ այնուամենայնիվ գտնում ենք, որ անհրաժեշտ է ընդգծել պատժի երկակիությունը, որը քննարկման առարկա է դարձվել դեռ 20-րդ դարի սկզբերին¹⁹ Ն.Ս. Տագանցևայի կողմից: Այսպես պատիժը վերաբերում է անցյալին՝ որպես անձի կատարած արարքի համար վրեժի

ակտ, այն միաժամանակ ուղղված է նաև ապագային, հետևաբար դրա նպատակները ևս ուղղված են ապագային: Դժվար թե հնարավոր է նախատեսել պատժի նպատակների գիտական սահմանումը միայն ապագայի տեսանկյունից, իրենց բնույթով առանձին նպատակներ չեն կարող հասկացվել առանց անցյալին անդրադառնալու:

Պատժի նպատակների ձևավորման համար օրենսդիրը պետք է ղեկավարվի հանցավորության էությունով, հանցագործության հանրային վտանգավորությամբ, ինչպես նաև պետության քրեական քաղաքականության ուղղվածությամբ:

Այս առումով, Ա.Ի.Ֆատխուտդինովան նշում է, որ պատժի նպատակները անհրաժեշտ է ուսումնասիրել, որպես հասարակության համար կոնկրետ և ցանկալի սոցիալական արդյունք, որը նախատեսվել է օրենսդրի կողմից պատիժը նշանակող և կատարող իրավակիրառ մարմինների համար (...) ²⁰:

Ս.Վ. Մակսիմովան նշում է, որ պատժի նպատակները պետք է լինեն ճշմարիտ, այսինքն, համապատասխան են հասարակության զարգացվածության օբյեկտիվ իրականությանը, չխեղաթյուրեն պատժի սոցիալական նշանակությունը և նրա դերը հասարակությունում²¹: Համաձայնվելով հիշյալ կարծիքի հետ, գտնում ենք, որ քրեական քաղաքականության ցանկացած մոտեցման համար կարևոր է, որ պատիժը համապատասխանի հասարակության օբյեկտիվ ցանկություններին, և պահպանի իր սոցիալական նշանակությունը և դերը հասարակությունում:

Պատժի նպատակների ճշմարտությունը ենթադրում է դրա իրական լինելը: Ա.Ի. Չուչաևան նշում է, որ «նպատակը, որպես ապագայի ճշմարտություն, կարող է գործնականում լինել գրեթե անհասանելի, եթե իհարկե այդ ընթացքում առկա չեն միջոցներ դրանց իրականացման համար»²²:

Պատժի նպատակները, կախված դրանց իրացմանը պատրաստ լինելու ժամանակից և աստիճանից, կարող են լինել մոտակա և հեռակա: Պատժի մոտակա նպատակներից է օրինակ՝ սո-

¹⁷ Տես Фатхутдинова А.И., “Цели наказания и правовое регулирование механизма их достижения по УК РФ” Дис. канд. юрид. наук. - Казань, 2003, ст. 23.

¹⁸ Տես Чучаев А.И., Абдрахманова Е. Р., “Лишение свободы и проблемы его реализации” - Ульяновск, 1996, ст. 69.

¹⁹ Տես Таганцев Н.С., “Русское уголовное право” - М., 1994, Т. 2. ст. 41.

²⁰ Տես Фатхутдинова А. И., “Цели наказания и правовое регулирование механизма их достижения по УК РФ” Дис. канд. юрид. наук. - Казань, 2003, ст. 24.

²¹ Տես Максимов С.В., “Цель в уголовном праве” // Автореф. Дисс. канд. юрид. Наук. - Казань, 2002, ст. 10.

²² Տես Чучаев А.И., “Цели наказания в советском уголовном праве” - М.: ВЮЗИ, 1989, ст. 14.

ցիալական արդարության վերականգնումը: Որպես այդպիսին կարող է նաև լինել անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովումը՝ դատապարտվածի հակահասարակական ակտիվությունը չեզոքացնելու ճանապարհով: Իսկ հեռակա նպատակներից է հանցագործությունների նախականիումը և հանցագործությունների նվազեցումը՝ մինչև սոցիալական հանդուրժողականության աստիճան:

Պատժի նպատակների հասկացության բացահայտման համար անհրաժեշտ է նաև անդրադառնալ քրեական պատժի նպատակների (ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մաս) և քրեական օրենսգրքի խնդիրների (ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մաս) իրավահամեմատական վերլուծությանը:

Պատժի նպատակները գենետիկորեն կապված են քրեական օրենսդրության խնդիրների հետ: Անհնար է պատկերացնել այնպիսի իրավիճակ, որի պայմաններում պատժի նպատակները կարող են հակասել քրեական օրենսդրության խնդիրներին և քրեական իրավունքի գործառույթներին կամ քրեական պատժի նպատակների ապահովումը չբխի քրեական օրենսդրության խնդիրների իրականացումից: ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կարգը և անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը, ինչպես նաև կանխել հանցագործությունները»: Նույն հոդվածի 2-րդ մասում ըստ էության սահմանված են այն բոլոր քրեաիրավական միջոցները, որոնցով պետք է իրականացվեն քրեական օրենսգրքով նախատեսված խնդիրները: Այդ խնդիրների իրականացման համար ՀՀ քրեական օրենսգրքն ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում հանցագործություններ, և սահմանում է պատժի տեսակներ

ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ՝ դրանք կատարելու համար:

Հիշյալ նորմերի (ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդված և 48-րդ հոդվածի 2-րդ մաս) համալիր իրավական վերլուծությունից հետևում է, որ հանցագործությունների կանխումն օրենսդիրը նախատեսել է ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի խնդիր, այնպես էլ՝ քրեական պատժի նպատակ: Փաստորեն օրենսդիրը միտումնավոր կամ պատահաբար նույնացրել է քրեական օրենսգրքի խնդիրը քրեական պատժի նպատակի հետ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ օրենսդրի կողմից ՀՀ քրեական օրենսգրքում դրա խնդիրների և պատժի նպատակների առանձին նախատեսումն ունի իր տրամաբանությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքում սահմանված խնդիրներն իրականացվում են նաև պատիժ կիրառելու և դրա արդյունքում՝ պատժի նպատակներին հասնելու միջոցով, հետևաբար դրանք ընդհանուր են ինչպես քրեական օրենսգրքի բոլոր ինստիտուտների, այնպես էլ պատժի և դրա նպատակների համար: Այստեղից հետևում է, որ պատժի նպատակներն իրենց հիմքում ունեն քրեական օրենսգրքի խնդիրները, հետևաբար դրանց նույնացումը կհանգեցնի ինքնանպատակության: Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ քննարկվող խնդիրը լուծված չէ նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգի նախագծով²³: Մասնավորապես դրանում խոսվում է հանցագործությունների կանխման՝ որպես քրեական օրենսգրքի խնդրի մասին, սակայն անդրադարձ չի կատարվել պատժի նպատակների շարքում այն պահպանելու նպատակահարմարության հարցին:

Հաշվի առնելով այն, որ հանցագործությունների կանխումը պետության քրեական քաղաքականության հիմնական ուղղություններից է, դրան է ուղղված քրեաիրավական ամբողջ օրենսդրությունը՝ այն նպատակահարմար է նախատեսել որպես քրեական օրենսգրքի խնդիր, այլ ոչ պատժի նպատակ: Նման մոտեցման դեպքում հնարավոր կլինի խուսափել իրավական կարգավորման աննպատակությունից, միևնույն ժամանակ պատիժը չի զրկվի հանցագործությունների կանխման միջոցներից մեկը և այդ խնդրի կրողը լինելու կարգավիճակից:

²³ Տես http://www.justice.am/storage/files/legal_acts/legal_acts_0871859725811_..._.pdf.

ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի քրեական իրավունքի
և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴՐԱ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՍՎՉԲՈՒՆՔ**

Իր ծագմամբ «սահմանադրականություն» հասկացությունը պարտական է ամերիկյան քաղաքական-իրավական մտքին: Ամերիկայի Միացյալ Նահանգների 1787 թվականին Սահմանադրության հիմնադիրները դրանով նշեցին ամրագրված սահմանադրության գերակայությունն օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ¹ և դրա երաշխավորման միջոց դիտարկեցին իշխանությունների բաժանումն ու հակակշռումը: Պետք է նկատել նաև, որ սահմանադրականության երաշխավորման տեսանկյունից բավականին լուրջ և արդյունավետ մոտեցում էին որդեգրել Ֆրանսիայում: Այսպես, 1789 թվականի օգոստոսի 26-ին Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրի 16-րդ հոդվածում ամրագրվեց, որ յուրաքանչյուր հասարակություն, որտեղ ապահովված չէ իրավունքների երաշխավորումը և հաստատված չէ իշխանությունների բաժանումը, ընդհանրապես չունի Սահմանադրություն: Կարելի է ասել, որ դեռևս 18-րդ դարում նշված հռչակագրով բարձրացվեց սահմանադրության իրական կամ ձևական բնույթ ունենալու խնդիրը, և դրա հետ պատճառահետևանքային կապի մեջ գտնվող սահմանադրականություն առկայության կամ բացակայության հարցը: Հետագայում իրավաբանական և այլ հետազոտություններում «սահմանադրականություն» հասկացությունն ստանում է առավել լայն նշանակություն, սկսվում կիրառվել տարբեր պետությունների հասարակական կառուցվածքի ժողովրդավարական բնութագրման համար²:

Իրավաբանական գրականություն մեջ

մշակված չէ սահմանադրականության էության և հայեցակարգային զարգացման, ինչպես նաև կոնկրետ ու սպառիչ հատկանիշներով բնութագրելու վերաբերյալ միասնական մոտեցում: Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել որոշակի ժամանակաշրջանում սահմանադրականության պատմությունը և դրա զարգացումները, սահմանադրականության հասկացության և էության վերաբերյալ մի շարք գիտնականների մոտեցումները, ինչպես նաև սահմանադրականության հասկացության հետ անմիջականորեն կապի մեջ գտնվող իրավական երևույթները և հետազոտության արդյունքների հիման վրա կներկայացնենք եզրակացություններ:

Այսպես, «XVII-XVIII դարերի բուրժուական սահմանադրականության պատմությունը» մենագրության հեղինակները դիտարկում են սահմանադրականությունը որպես տեսական ուսմունք, գաղափարական-քաղաքական շարժում և պետաիրավական պրակտիկա³: Նշված ժամանակաշրջանում ընդունված էր, որ սահմանադրականությունը, ամենից առաջ, նշանակում է սահմանադրության առկայություն և երկրի քաղաքական կյանքի վրա դրա գործուն ազդեցություն, սահմանադրության (գրված կամ ոչ) գործող օրենսդրության համակարգում որպես հիմնական օրենքի գերակայող և որոշիչ դերի, սահմանադրական-իրավական նորմերով քաղաքական հարաբերությունների միջնորդվածություն, պետական կառուցվածքի և քաղաքական ռեժիմի սահմանադրական կարգավորվածության, անհատի ազատությունների և իրավունքների սահմանադրական ճանաչ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 89 2015

¹ Տես Берман Г.Дж., “Западная традиция права: эпоха формирования”. Пер. с англ. М. 1994., ст. 370.
² Տես “Конституция в XXI веке: сравнительно-правовое исследование”. Отв. Ред. В.Е. Чиркин, М., 2014, ст. 10.
³ Տես “История буржуазного конституционализма XVII-XVIII вв.” / Ред. кол.: В. С. Нерсисянц, В. Г. Каленский, П. С. Грацианский. М., 1983, ст. 4.

ման, պետության և քաղաքացու փոխհարաբերությունների իրավական բնույթի փաստը⁴:

Մեկ այլ հետազոտության մեջ՝ նվիրված XIX դարի բուրժուական սահմանադրականության տեսությանը և պրակտիկային, հեղինակները սահմանադրականությունը ևս մեկնաբանում են տեսական, գաղափարական-քաղաքական շարժման և պետական-իրավական գործնական արժեքի տեսանկյունից: Սահմանադրականության համար, որպես քաղաքական-իրավական պրակտիկա, էական արժեք ունի և՛ սահմանադրության առկայության, և՛ երկրի քաղաքական կյանքի վրա դրա գործունե ազդեցության փաստը, սահմանադրության իրական գործառնությունն օրենսդրության համակարգում: Բացի դրանից սահմանադրականությունը ենթադրում է պետական կառուցվածքի և քաղաքական ռեժիմի սահմանադրական-իրավական կարգավորում, պետության հետ անհատի փոխհարաբերություններում վերջինիս ազատությունների և իրավունքների սահմանադրական պաշտպանություն⁵:

Բուրժուական սահմանադրականության վերաբերյալ հարկ ենք համարում անդրադառնալ նաև «Բուրժուական սահմանադրականության պրակտիկան» գրքի հեղինակների դիրքորոշմանը, ըստ որի՝ սահմանադրականություն հասկացությանը պետք է դասել այն ամենը, ինչը կապված է սահմանադրության հետ⁶: Ա.Ա. Միշինը և Գ.Վ. Բարաբաշևը, ևս կապելով սահմանադրականությունը սահմանադրության ստեղծման հետ, դիտարկում են այն որպես պետական կառավարում սահմանադրությամբ սահմանափակված: Ըստ Բարաբաշևի և Միշինի՝ «Առաջին բուրժուական սահմանադրություն, բառիս բուն իմաստով, հանդիսացել են 1787 թվականի ամերիկյանը և 1791 թվականի ֆրանսիականը: Նույն դարաշրջանում ծագում և համակարգվում է սահմանադրականության հայեցակարգը, որն ընկալվում է որպես սահմանադրությամբ սահմանափակված կառավարում:

Սահմանադրականության հայեցակարգը, որն ստացվել է բնական իրավունքի գաղափարներից, հանդիսանում է ավարտական բռնապետության բուրժուական-դեմոկրատական հակաթեզ⁷»: Պետք է նկատել, որ ըստ նշված աշխատության, այդ շրջանի տեսաբանները զարգացնում էին այն մոտեցումը, որ սահմանադրությունը ոչ միայն սահմանափակում է պետական իշխանության սահմանները, այլ նաև հաստատում իշխանական գործառույթների իրականացման գործընթացները⁸:

Կարծում ենք, որ սահմանադրականության (սահմանադրական պետության, սահմանադրական կառավարման, սահմանադրական օրինականության, իրավունքի գերակայության) գաղափարները հանդիսանում են պատմականորեն առաջընթացային, ինչպես հենց բուրժուական պետությունը և բուրժուական դեմոկրատիան: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ հենց ամերիկյան և ֆրանսիական սահմանադրությունները, ըստ էության, առաջ քաշեցին իշխանությունների տարանջատման սկզբունքը, որը մինչ օրս ժամանակակից ժողովրդավարական պետություններում հանդիսանում է սահմանադրականության հաստատման կարևորագույն նախադրյալներից մեկը:

Մինևույն ժամանակ սահմանադրականության խորհրդային հետազոտողները երկար ժամանակ կապում էին դրա առարկան բացառապես բուրժուական պետության և իրավունքի, բուրժուական սահմանադրությունների հետ: Խորհրդային սահմանադրությունների, խորհրդային պետության և իրավունքի հետազոտության ժամանակ այդ հասկացությունը չէր կիրառվում: Իսկ խորհրդային իրավաբանական բառարաններում և հանրագիտարաններում «սահմանադրական» բառը նույնիսկ չէր հիշատակվում⁹: Տվյալ խնդրի վերաբերյալ ծավալուն հետազոտություններ իրականացրած իրավագետներից Ի.Մ. Ստեպանովը դա բացատրել է նրանով, որ «սոցիալիստական սահմանադրա-

⁴ Տես նույն տեղում, էջ 5:

⁵ Տես «История буржуазного конституционализма XVII-XVIII вв.» / Ред. кол.: В. С. Нерсесянц, В. Г. Каленский, П. С. Грацианский. М., 1983, ст. 3.

⁶ Տես, օրինակ «Практика буржуазного конституционализма». М., 1982.

⁷ Տես Барабашев Г.В., Мишин А.А., «Государственное право буржуазных и развивающихся стран» М., 1989, ст. 67.

⁸ Տես նույն տեղում, էջ 84:

⁹ Տես, օրինակ «Энциклопедия государств и права». М., 1930. Т. 2.

կանության գաղափարների և սկզբունքների դիրքորոշումներում դրանց դինամիկայի մեջ ըստ դիալեկտիկական-մատերիալիստական տրամաբանության օրենքների խորհրդային պետությունն իր շարժման մեջ կանգ էր առել 30-ական թվականների մակարդակում¹⁰։ Պատճառներից մեկը Ստեպանովը տեսնում էր գործերի գնահատման ռեալիզմի դեֆիցիտում, որը ծնվել էր սոցիալիզմի վերաբերյալ ռոմանտիկ-իդեալականացված պատկերացումների կիրառությամբ։ Երկրորդ պատճառը՝ սկզբում «սահմանադրականության» եզրույթի սոցիալիստական աշխարհընկալումների ընդհանուր կառուցվածքին, եթե ոչ որպես լիարժեք օտար, ապա բոլոր դեպքերում, սահմանադրական իրավաստեղծման գործին չնպաստողի ընդունման մեջ¹¹։

Պետք է նկատել, որ չնայած նշյալ դառաջրջաններում (XVIII- XX), նկատի ունենալով տարբեր պետությունների սահմանադրականության վերաբերյալ մոտեցումները, ինչպես նաև ընկալումները, ներկայիս ժամանակաշրջանում ժողովրդավարական և իրավական պետության կայացման կարևոր նախապայմաններից է սահմանադրականության կայացումը։ Նույնիսկ կարող ենք նշել, որ չի կարող լինել իրավական, ժողովրդավարական պետություն առանց սահմանադրականության կայացման, և հակառակը։

Ուսումնասիրելով մի շարք իրավագետների մոտեցումները «սահմանադրականություն» հասկացության՝ առանձնացրել ենք դրանցից մի քանիսը։

Ըստ պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի՝ «Սահմանադրականությունն իրավաքաղաքական համակարգ է, հիմնված ոչ միայն պետության հիմնական օրենքի, այլև սահմանադրական դոկտրինայի և սահմանադրական սովորույթների վրա։ Սահմանադրականությունն ուսմունք է, որի ձևավորման, զարգացման և կատարելագործման հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը խիստ արդիական

է։ Այս առումով, անհրաժեշտ է ընդգծել, որ հայրենական իրավագիտության մեջ սահմանադրականության հիմնախնդիրը սկսվել է ուսումնասիրվել հետխորհրդային ժամանակաշրջանում, այսինքն՝ անկախ պետականության պայմաններում»¹²։

Խոսելով սահմանադրականության վերաբերյալ՝ Ի.Մ. Սմիրնովը նշում է, որ դրա ծավալուն երևույթն իր վերաբերյալ ամենանախնական պատկերացումներում իրենով ընդգրկում է սահմանադրության տեսությունը, այս կամ այն երկրի, ամբողջ համաշխարհային հանրույթի սահմանադրական՝ զարգացման տեսությունը և գործնականը։ Սահմանադրականության տակ նեղ իմաստով նա ընկալում է դեմոկրատիայի հիմնարարական քաղաքական-իրավական արժեքների, դրանց կազմության, արտահայտման ձևերի, իրականացման մեթոդների և աստիճանների վերաբերյալ գիտելիքների ընդհանուր համակարգը¹³։

Ըստ Սմիրնովի՝ «Սահմանադրականության չհավելված արժեքներում, այնպիսի առաջնություններ են, ինչպես մարդը, նրա ազատությունները և իրավունքները, ինքնավարությունը (ազգային, ժողովրդական, պետական), ժողովրդավարությունը, պառլամենտականությունն իր բոլոր բաղադրիչներով, ամենից առաջ օրենքի գերակայությամբ և իշխանությունների բաժանմամբ, գաղափարախոսական բազմանըշանակությունը, քաղաքական պլուրալիզմը և այլն։ Այս առաջնությունների ձևավորումն իրականացվում է դրանց սահմանադրական սկզբունքների կարգ օրենսդրական բարձրացմամբ, որով վերջիններս օժտվում են բարձրագույն իրավաբանական ուժով և ունեն ուղիղ ազդեցություն¹⁴»։ Սմիրնովը սահմանադրականության կայացման գործընթացը դիտարկելիս, որպես օրինակ էր նշում չզարգացած պառլամենտականությունը, դիտարկելով այն նախևառաջ որպես չզարգացած սահմանադրականության ցուցանիշ¹⁵։

¹⁰ Տես Степанов И.М., “Уроки и парадоксы российского конституционализма” М., 1996, ст. 11-13.

¹¹ Տես նույն տեղում, էջեր 15-17:

¹² Սահմանադրական մշակույթի մասին մանրամասն տես Հարությունյան Գ., «Սահմանադրական մշակույթ»։ Երևան, «Նժար», 2005թ.։

¹³ Տես Степанов И.М., “Уроки и парадоксы российского конституционализма” М., 1996, ст. 3.

¹⁴ Տես նույն տեղում, ст. 4.

¹⁵ Տես նույն տեղում, ст. 12.

Ըստ Ն.Վ. Վիտրուկի՝ սահմանադրականությունն իրենից ենթադրում է իրավական սահմանադրության առկայության, գերակայության և դրա նորմերի պետության ողջ տարածքում անմիջականորեն գործողության և պաշտպանության ապահովման համակարգ¹⁶: Նրա կարծիքով, դրա որակական հատկանիշներն են.

- ներպետական իրավական համակարգում սահմանադրության գերակայությունը,
- սահմանադրության ուղղակի գործողությունը,
- պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների և նրանց միավորումների գործողություններում սահմանադրության և սահմանադրական դրույթների իրականացում, սահմանադրության իրական գործողության ապահովում,
- սահմանադրության գործողության պաշտպանություն,
- սահմանադրության ապահովման և պաշտպանության համակարգի կազմակերպում¹⁷:

Ըստ Ռ.Ա. Ռոմաշովի կարծիքի, սահմանադրականության վերաբերյալ անհրաժեշտ է խոսել որպես իրական գործող սահմանադրության քաղաքական համակարգի վերաբերյալ: Միննույն ժամանակ առաջին հերթին տվյալ երևույթը պայմանավորում է պետական իշխանության Հիմնական օրենքով՝ սահմանադրությամբ գործնական սահմանափակումը: Սահմանադրականությունը լեգիտիմացնում է պետական իշխանությունը՝ հաստատելով դրա իրավաչափությունը: Սահմանադրականությունը նպաստում է հասարակությունում պետական իշխանությանը հեղինակությամբ օժտմանը, ընդ որում ոչ թե ուժային, այլ սոցիալապես մշակված մեթոդներով: Սահմանադրականության քաղաքական համակարգը միավորում և փոխադարձ հավասարակշռում է պետության և քաղաքա-

ցիական հասարակության սոցիալ-քաղաքական շահերը՝ չթույլատրելով անհիմն միջամտություն որևէ մեկի կողմից սահմանադրական ազատությունների և իրավունքների ոլորտ:

Ի.Ա. Կրավեցը սահմանադրականության վերաբերյալ իր աշխատության մեջ նշել էր, որ հասարակական առաջընթացի «չափման» համար բավարար չէ արտադրության եղանակների դիալեկտիկայի առաջնային սխեմաների դիմումը, այլ պետք է բացահայտվեն և գործառնության մեջ դրվեն նաև բազմաթիվ այլ չափորոշիչներ, հայտնի աշխարհընկալումային տեսանկյուններից նույնիսկ առավել կարևոր, քանի որ հնարավորություն են ընձեռում հասարակական գոյի տնտեսական բնութագրիչներին զուգահեռ ստանալ նրա սոցիալական, հոգևոր, պետաիրավական վիճակի հստակ հավաստի պատկեր: Նման չափորոշիչների առաջնային շարքում նա դիտարկում էր հենց իրական սահմանադրականության երևույթը¹⁸:

Պետք է նկատել, որ գիտության կողմից ընդունված է «իրական, փաստացի սահմանադրություն» կամ «ձևական, կարծեցյալ սահմանադրություն» լակոնիկ, միաժամանակ ծավալուն հասկացությունները¹⁹: Հատկանշական է նաև, որ սահմանադրականություն հասկացությունն ուղղակիորեն կապված է նշված հասկացությունների հետ, քանի որ ձևական, կարծեցյալ սահմանադրություններ ունեցող հասարակությունները չեն կարող զուտ դրա առկայությամբ երաշխավորել սահմանադրականության առկայությունը: Նշված դիրքորոշման լույսի ներքո հատկապես արդիական է պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի մոտեցումը, որը մենք ամբողջությամբ կիսում ենք. «Սահմանադրությունից մինչև սահմանադրականություն ճանապարհը չի ավարտվում երկրի Հիմնական օրենքի ընդունումով, անցումային դրույթներով նախատեսված ինչ-ինչ նախապատրաստական քայլերով, անհրաժեշտ ինստիտուտների ու կառույցների ձևավորումով, մարդու իրավունքներն ու ազատությունները Սահմանադրության մեջ

¹⁶ Ств Витрук Н.В. “Конституционное правосудие в России (1991-2000гг.): Очерки теории и практики”, М., 2001, ст. 104-105.

¹⁷ Ств նույն տեղում, էջ 106:

¹⁸ Ств Кравец И.А., “Формирование российского конституционализма (проблемы теории и практики)” - М., - 2002. ст. 30-32.

¹⁹ Ств Хабриева Т.Я., Чиркин В.Е., “Теория современной конституции” - М.: Норма, 2007, ст. 105-110.

ամրագրելով²⁰»: Այսինքն, ինքնին Սահմանադրության առկայությունը չի ենթադրում սահմանադրականության հաստատում:

Ըստ ամերիկացի սահմանադրագետ Մարկ Բրենդոնի, սահմանադրականությունն իրենից ենթադրում է այնպիսի մի համակարգ, որն ապահովում է քաղաքական իշխանության կամայականության սահմանափակումը²¹:

Ըստ պրոֆեսոր Ա. Հարությունյանի՝ սահմանադրականությունն իրենից ենթադրում է իշխանության հետ հասարակության ու անձի փոխհարաբերության իրավական շրջանակները սահմանող համակարգ, ինչը կարող է լինել իրական և ձևական: Ա. Հարությունյանը նաև նշել է, որ այն երկրներում, որտեղ քաղաքացիական հասարակությունը կայացած էր, սահմանադրականությունը ապահովում էր դեպի ժողովրդավարության թևակոխման գործընթացը, սկսելով պետության ղեկավարի գործառույթների սահմանափակման և խորհրդարանական գործառույթների ընդլայնման ապահովումից²²: Նշված դիրքորոշման հետ փոխկապակցված է Մոլիսայելի կարծիքը, համաձայն որի՝ սահմանադրականությունը ձևական էր այն երկրներում որտեղ քաղաքացիական հասարակությունը կայացած չէր²³:

Պրոֆեսոր Հ. Խաչատրյանը՝ սահմանադրականության վերաբերյալ իր մոտեցումները կառուցել է իրավաբանական պոզիտիվիզմի դիրքերից: Ըստ նրա՝ սահմանադրականությունը (կոնստիտուցիոնալիզմը) «պահանջում է ամեն անգամ իշխանությունը «կաշկանդել» սահմանադրական նորմով, այն սահմանափակել՝ ի շահ համապատասխան խնդիրների, նախատեսել իշխանության կառուցվածքների նկատմամբ հսկողության մեխանիզմներ և սահմանել պետական մարմինների ու պաշտոնատար անձանց պատասխանատվությունը»²⁴:

Պետք է նկատել նաև, որ «սահմանադրականություն» հասկացությունն իրենից չի են-

թադրում զուտ սահմանադրական իրավունքի դոկտրինայի, տեսության ինստիտուտ: Նշված պնդման լոյսի ներքո հարկ ենք համարում նշել պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի կողմից առաջ քաշված մոտեցումը, համաձայն որի «իրավական պետությունում սահմանադրականությունը հանդիսանում է իրավունքի հիմնարար սկզբունք, որի իրացմամբ հասարակական հարաբերությունները ձեռք են բերում սահմանադրական բնույթ՝ ձևավորելով համարժեք սահմանադրական մշակույթ»²⁵:

Գտնում ենք, որ սահմանադրականությունը հարկավոր է դիտարկել և ընդունել ոչ թե որպես սահմանադրական իրավունքի կամ իրավունքի տեսության մի մաս, այլ որպես իրավունքի հիմնարար սկզբունք:

Նշված մոտեցումները հաշվի առնելով, գտնում ենք, որ առավել ընդհանուր բնորոշմամբ սահմանադրականությունը սահմանադրական արժեքների, կանոնների ու սկզբունքների առկայությունն է հասարակության յուրաքանչյուր անդամի սոցիալական վարքագծի բոլոր դրսևորումներում: Նշվածի երաշխավորման միջոցը պետք է հանդիսանա իրական և գործող Սահմանադրությունը, սակայն ինքնին դրա առկայությունը բավարար չէ: Նշվածին հասնելու համար անհրաժեշտ է ոչ թե պարզապես Սահմանադրության կիրառման ապահովումը, այլ ամրագրված սահմանադրական իրավադրույթներին ոգի տալ, կենդանություն հաղորդել, ստեղծել այնպիսի սոցիալական միջավայր, որում կարժևորվեն նշված կանոնները: Այդ իմաստով, այնուամենայնիվ, պետք է նկատել, որ պարտադիր է նաև համապատասխան քաղաքական մշակույթի և ավանդույթի ձևավորումը՝ միաժամանակ բացառելով իրավական ժխտողականության դրսևորումները: Ելնելով վերոգրյալից կարող ենք նշել, որ սահմանադրականությունը հարկավոր է ընդունել որպես իրավունքի հիմնարար սկզբունք:

²⁰ Տես Հարությունյան Գ.Գ., «Սահմանադրությունից՝ սահմանադրականություն» - Եր., «Նժար», 2004թ., էջ 6:
²¹ Տես Mark E. Brandon, “Constitutionalism and constitutional failure,” The Good Society, Vol. 9, No. 2 (1999), p. 62-63.
²² Տես Арутюнян А.А., “Конституционализм: проблемы постсоветской реальности” - М.: Норма, 2013, ст. 88-89.
²³ Տես Мухаев Р.Т., “Политология” М., 2003, ст. 189.
²⁴ Մանրամասն տես Խաչատրյան Հենրիկ, «Սահմանադրությունը և կոնստիտուցիոնալիզմի հիմնահարցերը»: Երևան, 1998թ.:
²⁵ Տես Арутюнян Г.Г., “Конституционализм как фундаментальный принцип права в правовом государстве,” “Конституционное правосудие” Вестник Конференции органов конституционного контроля стран новой демократии, Выпуск 1 (55) 2012, ст. 12-13.

ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության ամբիոնի հայցորդ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Դատական քննության փուլը կենտրոնական տեղ է զբաղեցնում վճռաբեկ վարույթի մյուս փուլերի մեջ: Հենց այս փուլում է վճռաբեկ դատարանն արդարադատություն իրականացնում և հասնում իր գործունեության հիմնական նպատակին, այն է՝ ստուգում է բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Վճռաբեկ վարույթի փուլում դատարանի և դատավարության մյուս մասնակիցների գործունեությունը հիմնված է քաղաքացիական դատավարության ընդհանուր սկզբունքների վրա, որոնք գործում են առաջին ատյանի դատարանում և դատավարության մյուս փուլերում: Դատական ակտերը վճռաբեկության կարգով վերանայվում են քաղաքացիական դատավարության հիմնական սկզբունքների՝ արդարադատությունը միայն դատարանի կողմից իրականացվելու, օրենքի և դատարանի առաջ քաղաքացիների հավասարության, կոլեգիալության, օրինականության, կողմերի դատավարական իրավահավասարության, դատական քննության հրապարակայնության, դատավարությունը պետական լեզվով իրականացնելու, դիսպոզիտիվության (տնօրինչականության), անմիջականության և մրցակցության հիման վրա:

Նշված սկզբունքներից յուրաքանչյուրը նշանակալի դեր ունի դատական պաշտպանության իրավունքի ապահովման համար, այդ թվում՝ վճռաբեկ դատարանում բողոքարկման իրավունքի իրականացման համար:

Ն.Ա.Չեչինան, սահմանելով քաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքների համակարգը, նշում է, որ այս կամ այն սկզբունքը կարող է վճռորոշ նշանակություն ունենալ և առավել շատ արտահայտություն

գտնել որևէ փուլում կամ առանձին ինստիտուտներում, բայց դրա ընդհանուր նշանակությունը որոշվում է մյուս սկզբունքների հետ կապվածությամբ, և տարածում է իր ազդեցությունն արդարադատության իրականացմանն ուղղված դատարանի ողջ գործունեության վրա¹:

Վճռաբեկ վարույթը, հանդիսանալով դատավարության ինքնուրույն փուլ, ունի իր յուրահատուկ նպատակները, դատաքննության առարկան, բովանդակությունը, որոնք տարբերվում են դատավարության մյուս փուլերից: Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը կանխորոշվում է երրորդ ատյանի դատարանի առջև կանգնած խնդիրներով, այն է՝ ստորադաս ատյանի օրինական ուժի մեջ մտած որոշման օրինականության ու հիմնավորվածության ստուգման գործունակ:

Սակայն, քննարկման առարկայի շրջանակից ելնելով, որոշ սկզբունքներ այստեղ գործում են ոչ լրիվ ծավալով: Դա մասնավորապես վերաբերում է անմիջականության, բանավորության, տնօրինչականության, մրցակցության սկզբունքներին: Վճռաբեկ դատարանն ապացույցներ չի հետազոտում, հիմնականում հենվում է առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի կողմից քննված գործի հանգամանքների վրա, կողմերն այստեղ հնարավորություն չունեն լրիվ ծավալով տնօրինել իրենց նյութական և դատավարական իրավունքները, օրինակ՝ չեն կարող փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել պահանջների չափը և այլն, բառիս բուն իմաստով չեն մրցակցում դատարանի առջև իրենց դիրքորոշումը պաշտպանելու, իրենց ճշմարտությունն ապացուցելու համար և այլն²:

Ի տարբերություն առաջին ատյանի դա-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 89 2015

¹ Ств Чечина Н. А., “Принципы советского гражданского процессуального права и их нормативное закрепление” // Правоведение. 1960. N 3, ст. 81.

² Ств Ռ. Գ. Պետրոսյան, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ.», Երևան, Ոսկան Երևանցի, 2012թ., էջեր 530-531:

տարանի, որտեղ քաղաքացիական գործերը քննվում է դատավորի կողմից միանձնյա, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում քաղաքացիական գործերը քննվում են կոլեգիալ կարգով:

Գործի քննությունը վճռաբեկ դատարանում կատարվում է դատական նիստում կոլեգիալ կարգով՝ քաղաքացիական և վարչական պալատի նախագահի և առնվազն հինգ դատավորի կազմով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՔԴՕ) հոդված 19-ի 7-րդ կետ): Տվյալ գործի քննությանն ստորին ատյանի դատարանում մասնակցած դատավորն իրավունք չունի մասնակցել վճռաբեկ դատարանի աշխատանքներին, որովհետև այդ հանգամանքն ինքնին նրա անաչառության վերաբերյալ կասկած հարուցող փաստ է (ՀՀ դատական օրենսգրքի հոդված 91-ի 1-ին կետի 3-րդ ենթակետ):

Առաջին ատյանի դատարանի որոշման ստուգումը պետք է հանձնվի դատական կոլեգիային, քանի որ դատարանի որոշման վերաբերյալ միայն կոլեկտիվ քննարկումն ու հարցերի լուծումը կարող է ապահովել օրինական ու հիմնավորված որոշումների ընդունում. սրանում է կայանում դատական համակարգի աստիճանակարգությունը³:

Գործի կոլեգիալ քննությունն ապահովում է դրա առավել մանրամասն ու բազմակողմանի քննարկումը: Դատական կոլեգիայի կողմից որոշումների ստուգումը դատավորների միջև կարծիքների փոխանակման արդյունք է, միևնույն հարցերի շուրջ տարբեր հայացքների, տեսակների բախման արդյունք: Այն, ինչը սպրդել է մի դատավորի ուշադրությունից, կարող է նկատվել մյուսի կողմից, այն, ինչը պարզ չէ մեկի համար, կարող է պարզաբանվել մյուսի կողմից, մի դատավորի թերացումները լրացվում են մյուսների արժանիքներով (առավելություններով), հետևաբար՝ առանց չափազանցելու կարելի է ասել, որ «երեք (մի քանի) վատ

դատավորները կարող են կազմել լավ դատական կոլեգիա»⁴:

Ինչպես նշում է Ա.Խ.Գոլմստենը՝ «կոլեգիալ սկզբունքն ունի բոլոր առավելությունները միանձնյա սկզբունքի նկատմամբ. այն ապահովում է գործերի լուծման արդարացիությունն ու ճշգրտությունը՝ առաջին հերթին այն պատճառով, որ անհնար է դառնում կաշառքն ու միակողմանիությունը, իսկ երկրորդ հերթին՝ թեթևանում է օրենքի մեկնաբանման և կիրառման ժամանակ երբեմն ծագող բարդ խնդիրների լուծումը»⁵:

Գործի դատական քննության փուլում՝ ինչպես առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում, այնպես էլ վճռաբեկ դատարանում իր առանձնահատուկ նշանակությունն ունի դատական նիստի արձանագրությունը:

Դատական նիստի արձանագրությունը դատավարական գրավոր փաստաթուղթ է, որն արտացոլում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննության, դատավարության մասնակիցների կողմից դատավարական գործողությունների կատարման (երբեմն էլ՝ չկատարման) ողջ ընթացքը⁶:

Հաշվի առնելով արձանագրության, որպես դատավարական գործողությունների կատարման բոլոր էական հանգամանքները հաստատող փաստաթղթի, կարևոր նշանակությունը, օրենքը սահմանել է, որ արձանագրությունը վարվում է առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերում, ինչպես նաև դատական նիստից դուրս առանձին դատավարական գործողություններ կատարելիս (ՀՀ ՔԴՕ հոդված 146):

Օրենքը սահմանում է նաև արձանագրության բովանդակությունը, այն կազմելու կարգը և ձևը, գործին մասնակցող անձանց կողմից արձանագրության վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու և դրանք քննության առնելու կանոնները (ՀՀ ՔԴՕ հոդվածներ 147-149):

Դատավարական օրենքը սահմանել է դա-

³ Տես Михайлов С. М., “Оценка доказательств судам второй инстанции в гражданском судопроизводстве”. Автореф. дисс. канд. Юрид. наук М., 2001. ст. 22-23.

⁴ Տես Васильковский Е. В., “Курс гражданского процесса Т.1.” М., 1913, ст. 161.

⁵ Տես Гольмстен А. Х., “Учебник русского гражданского судопроизводства” / Под ред. М.К. Треушниковой, Ю.А.Поповой, Краснодар, 2004. ст. 52-53.

⁶ Տես Ռ.Գ. Պետրոսյան, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ.», Երևան, Ոսկան Երևանցի, 2012թ., էջ 376:

տական նիստի երկու՝ 1) հատուկ համակարգչային ձայնային արձանագրման, 2) պարզ թղթային արձանագրման եղանակներ:

Դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնագրային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման միջոցով: Համառոտագրումը դատական նիստի դահլիճում կատարվող գործողությունների մասին նշումներն են: Հատուկ համակարգչային ձայնագրման համակարգերի շահագործման, տվյալների արխիվացման և համակարգի պահպանության մանրամասն կարգը սահմանում է ՀՀ արդարադատության նախարարությունը (ՀՀ ՔԴՕ հոդված 146-ի 2-րդ կետ):

Ուսումնասիրելով վճռաբեկ վարույթը կարգավորող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը, պրակտիկայում առաջանում են վճռաբեկ դատարանում գործի վարույթը կասեցնելու հնարավորության հարցեր: Խոսքը վերաբերում է ՀՀ ՔԴՕ հոդված 105-ով նախատեսված դեպքերին, մասնավորապես՝ դատավարական իրավահաջորդությանը:

ՀՀ ՔԴՕ հոդված 36-ում տրվել է դատավարական իրավահաջորդության պակասավոր ձևակերպում: Այդ հոդվածում խոսվում է միայն կողմերից մեկի՝ դատավարությունից դուրս գալու մասին, որը վերաբերում է սոսկ առաջին ատյանի դատարանում վիճելի իրավահարաբերությունից դուրս գալուն: Մինչդեռ, կողմերից մեկն իրավահարաբերությունից կարող է դուրս գալ նաև վճիռ կայացնելուց հետո, վերաքննության և վճռաբեկ վարույթներով: Բացի այդ, հաշվի չի առնվել, որ դատավարությունից դուրս գալը սոսկ նյութաիրավական հարաբերություններում կատարված իրավահաջորդության հետևանք է: Այս իսկ առումով ՀՀ ՔԴՕ հոդված 105-ի 3-րդ կետում պետք է նշվեր ոչ թե «վիճելի իրավահարաբերությունից» այլ «վիճելի» կամ «վճռով սահմանված» իրավահարաբերություններից կողմերից մեկի դուրս գալու մասին: Դրանից հետո է միայն դատարանը ձևակերպում դատավարական իրավահաջորդությունը: Մասնավորապես, եթե վիճելի նյութաիրավական հարաբերությունն իրավահաջորդություն չի տալիս, ապա այն չի կարող տեղի ունենալ նաև դատավարությունում⁷:

Մինչդեռ ժամանակ պարզ չէ, թե ինչպես պետք է վարվի վճռաբեկ դատարանը, եթե անհրաժեշտ է կասեցնել գործի վարույթը առաջին ատյանի դատարանի համար սահմանված հիմքերով:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ 5-րդ գլուխը լրացնել ևս մեկ հոդվածով, այն շարադրելով հետևյալ կերպ.

«Հոդված 238.1 Վճռաբեկ դատարանում գործով վարույթի կասեցումը

Բավարար հիմքերի առկայության դեպքում վճռաբեկ դատարանում գործով վարույթը կասեցվում է սույն օրենսգրքի 16-րդ գլխով սահմանված կարգով»:

Այս լրացումն ավելի կիստակեցնի վճռաբեկ դատարանի գործառությունն այն դեպքերում, երբ բավարար հիմքերի առկայության դեպքում անհրաժեշտ է կասեցնել գործով վարույթը:

Կողմերը դատական բոլոր ատյաններում հաշտության համաձայնություն կարող են կնքել միայն հայցային վարույթի գործերով: Հաշտության համաձայնությունը, ինչպես որ ցանկացած տնօրինչական գործողության, իրականացվում է դատարանի հսկողության ներքո: Դատարանն ամեն անգամ պետք է ստուգի, թե հաշտության համաձայնությունն արդյոք չի հակասում օրենքին կամ չի խախտում այլ անձանց իրավունքներն ու շահերը:

Դատարանը չի ընդունում հայցվորի հրաժարումը հայցից և չի հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը, եթե այդ գործողությունները հակասում են օրենքին կամ խախտում են որևէ մեկի իրավունքներն ու օրինական շահերը: Այդ մասին դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում: Մասնավորապես՝ դատարանը կողմերի հաշտության համաձայնությունը չի հաստատում, եթե դրա պայմանները խախտում են քաղաքացիների աշխատանքային իրավունքները կամ հետապնդում են մեղավոր պաշտոնատար անձանց գործողություններով պետությանը պատճառած նյութական վնասների հատուցումից նրանց ազատելու, այ-

⁷ Տես Ռ. Գ. Պետրոսյան, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ.», Երևան, Ոսկան Երևանցի, 2012թ., էջ 149:

սինքն՝ օրենքը շրջանցելու նպատակ: Կողմերը չեն կարող հաշտության համաձայնությամբ վատթարացնել քաղաքացիների աշխատանքային պայմանները, փոխել նրանց կյանքին կամ առողջությանը պատճառաւ վնասների չափը, ալիմենտի օրենքով սահմանված չափերը, չեն կարող հաշտություն կնքել անչափահաս երեխայի հայրությունը որոշելու գործերով և այլն: Հաշտության համաձայնությունը հաստատելու կամ այն մերժելու մասին վճիռը կայացվում է խորհրդակցական սենյակում՝ հաշտության օրինակաչությունը քննարկելուց հետո⁸:

Նախքան հայցից հայցվորի հրաժարումն ընդունելը կամ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելը դատարանը հայցվորին կամ կողմերին բացատրում է այդ գործողությունների իրավական հետևանքները, մասնավորապես այն, որ հայցվորն իրավունք չունի նույնական հայցով դիմել դատարան: Հայցվորի՝ հայցից հրաժարումն ընդունելու կամ կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու մասին դատարանը վճիռ է կայացնում, որով միաժամանակ կարճում է գործի վարույթը: Վճռում պետք է ցույց տրվեն հաստատվող հաշտության համաձայնության պայմանները՝ բառացի կերպով (ՀՀ ՔԴՕ հոդված 33, հոդված 103-ի 6-րդ և 7-րդ կետեր, հոդվածներ 110 և 133):

Գործի քննությունը վճռաբեկ դատարանում կարող է նախագահել վճռաբեկ դատարանի նախագահը, պալատի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ պալատի որևէ անդամ (ՀՀ դատական օրենսգրքի հոդվածներ 61 և 62):

Գործի քննությունը վճռաբեկ դատարանում սկսվում է վճռաբեկ դատարանի պալատի դատավորի զեկուցումով: Զեկուցողը շարադրում է վճռաբեկ բողոքի և վճռաբեկ բողոքի դեմ ներկայացված պատասխանի փաստարկները (ՀՀ ՔԴՕ հոդված 238-ի 1-ին կետ):

Զեկույցի իմաստը կայանում է նրանում, որ վճռաբեկ բողոքը քննելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ստանալ պարզ և հստակ պատկերացում բողոքարկվող որոշման էության մասին: Դրան կարելի է հասնել, եթե տվյալ հարցը ներկայացվի անկողմնակալ ան-

ծի կողմից, այլ ոչ թե կողմերից մեկի, ով կփորձի որոշումը ներկայացնել միակողմանի իմաստով՝ պաշտպանելով սեփական շահերը⁹:

Գործի զեկուցումը դատավորի կողմից հիմնավորված է ինչպես տրամաբանական, այնպես էլ իրավական տեսանկյունից: Նա կատարում է միանգամից մի քանի գործառույթ, մասնավորապես՝ ա) գործին մասնակցող բոլոր անձանց տեղեկություններ է հաղորդում գործի հանգամանքների վերաբերյալ, բ) սահմանում է վճռաբեկ բողոք բերած անձի պահանջների ծավալը:

Վճռաբեկ բողոք բերած գործին մասնակցող անձինք, ՀՀ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալն իրավունք ունեն բողոքը պաշտպանելու համար ներկա գտնվել վճռաբեկ դատարանի նիստին: Վերադաս դատախազն իրավունք ունի բողոքի պաշտպանությունը հանձնարարել ստորադաս դատախազին («Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 11-12 և 19): Բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում վճռաբեկ դատարանն իրավունք ունի ինքը կանչել բողոք բերող անձին, ինչպես նաև գործին մասնակցող անձանց, որոնք պատշաճ ձևով ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար (ՀՀ ՔԴՕ հոդված 238):

Գործի քննությունը հետաձգելու հիմքերը և հետաձգման կարգը նախատեսված է ՔԴՕ հոդված 119-ով: ՀՀ ՔԴՕ հոդված 119-ը գործի քննությունը հետաձգելու պարտադիր հիմքեր չի նախատեսել, մինչդեռ դրանք նախատեսելու անհրաժեշտությունն ակնհայտ է և դատական պրակտիկան ընթանում է հենց այդ ճանապարհով: Այն է՝ դատարանը պարտավոր է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի դատական նիստին չներկայանալու դեպքում հետաձգել գործի քննությունը, եթե՝ ա) ծանուցագիրը, հեռագիրը, հեռախոսագիրը կամ կապի այլ միջոցներով հաղորդագրությունը նրան հասցնելու վերաբերյալ տեղեկություններ չկան, բ) պատշաճ ձևով ծանուցված անձինք դատական նիստին չեն ներկայացել դատարանի կողմից հարգելի համարվող (հիվանդության, գոր-

⁸ Տես Ռ. Գ. Պետրոսյան, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ.», Երևան, Ոսկան Երևանցի, 2012թ., էջ 368:

⁹ Տես Борисова Е. А., «Апелляция в гражданском и арбитражном процессах» М., 1997. ст. 99.

ծուղման մեջ գտնվելու, հարազատների մահվան և այլն) պատճառներով, մանավանդ, եթե դատարանին հայտնի են այդ պատճառները:

Նշված հիմնախնդիրներն իրենց արդիականությունն ունեն նաև վճռաբեկ վարույթի փուլում: Համաձայն ՀՀ ՔԴՕ հոդված 238-ի՝ բողոքը պաշտպանելու կամ բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում գործին մասնակցող անձինք կանչվում են վճռաբեկ դատարանի նիստին: Իսկ նրանց բացատրությունները կարող են էական նշանակություն ունենալ բողոքի քննության համար և նրանց բացակայությունը կարող է բացասաբար ազդել բողոքի քննության վրա:

Վճռաբեկ վարույթը դատավարության այն փուլն է, որում բողոքը քննելուց հետո ընդունվող որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ: Այդ իսկ պատճառով պետք է վճռաբեկ դատարանում գործի քննության ժամա-

նակ հաշվի առնել նաև այս հանգամանքը, որը էլ ավելի կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ հոդված 238-ը լրացնել 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 238 Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը

4. Հարգելի հիմքերի և համապատասխան միջնորդության առկայության դեպքում վճռաբեկ դատարանը պարտավոր է հետաձգել գործի քննությունը»:

Այս լրացումը կապահովի դատական պաշտպանության իրավունքի իրականացումը, կբարձրացնի արդարադատության արդյունավետությունը:

շարունակելի



ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼՂՀ Նախագահի աշխատակազմի անվտանգության խորհրդի
աշխատանքների ապահովման բաժնի գլխավոր մասնագետ,
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս

**ՀԱՆՐԱՔՎԵԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության կառուցման առանցքային սահմանադրական արժեքներից մեկն է ժողովրդաիշխանությունը, որն իր ամրագրումն էր ստացել ինչպես ԼՂՀ կազմավորման հիմնարար փաստաթղթերում¹, այնպես էլ ԼՂՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների եղանակով, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը հանցագործություն է»²:

Ինչպես իրավունքի գերակայության, այնպես էլ ժողովրդաիշխանության սկզբունքի առանցքը մարդն է, մարդկանց հանրույթը՝ ժողովուրդը, որը հանդես է գալիս և որպես իշխանության աղբյուր ու կրող, և որպես իշխանության սահմանափակիչ: Ժողովրդաիշխանությունն իրավունքի գերակայության հետ միա-

սին հանդես են գալիս որպես երկրում սահմանադրականության հաստատման կարևորագույն բանալիներից մեկը: Ըստ պրոֆեսոր Գ. Հարությունյանի՝ ժողովրդաիշխանությունը նշանակում է ժողովրդի գերակայություն որպես իշխանության աղբյուր և կրող, նրա իրավունքը՝ ինքնուրույն որոշել իր ճակատագիրը, հիմնադրել պետական իշխանության համակարգ, մասնակցել իր պետության քաղաքականության ձևավորմանը, պետական մարմինների կազմավորմանը, վերահսկել պետության գործունեությունը³:

Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք անդրադառնալ ԼՂՀ-ում անմիջական ժողովրդաիշխանության ձևերից հանրաքվեի կատարելագործման հիմնական ուղղություններին: Այսպես, պետության կազմավորման պահից մինչ օրս ԼՂՀ-ում տեղի են ունեցել համապետական երկու հանրաքվեներ՝ 1991 թվականի դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեն և 2006 թվականի դեկտեմբերի 10-ի ԼՂՀ Սահմանադրության ընդունման հանրաքվեն:

Հանրաքվեի ինստիտուտի կարևորագույն հարցերից մեկը դրա անցկացման նախաձեռնության իրավունքով օժտված սուբյեկտների

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 89 2015

¹ 1992 թվականի հունվարի 6-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված «ԼՂՀ պետական անկախության մասին» Հռչակագրի 2-րդ կետում նշված է, որ «ԼՂՀ ամբողջ իշխանությունը պատկանում է ԼՂՀ ժողովրդին, որն իր իշխանությունն ու կամքն իրագործում է համաժողովրդական հանրաքվեի կամ ներկայացուցչական մարմինների միջոցով» («ԼՂՀ պետական անկախության մասին» հռչակագիրը տես <http://www.president.nkr.am/am/nkr/nkr2> (դիտելու ամսաթիվը՝ 03.02.2015թ.): Իսկ նույն Հռչակագրի հիման վրա ընդունված «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ օրենքի 1-ին կետում ամրագրված է այն դրույթը, ըստ որի՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն անկախ, ժողովրդավարական պետություն է, որն ինքնուրույն կերպով է որոշում այլ պետությունների հետ համագործակցության ձևերը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին և ելնում է ժողովրդից, որն այն իրականացնում է ինչպես անմիջականորեն, այնպես էլ իր կողմից կազմավորվող ներկայացուցչական մարմինների միջոցով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանությունն արտահայտվում է իր ամբողջ տարածքում օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն իշխանության ինքնուրույն իրականացման ձևով՝ ի շահ հանրապետությունում ապրող բոլոր ազգերի» (Օրենքն ընդունվել է 1992 թվականի հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից: Տես ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը):

² Տես «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն», Ստեփանակերտ, «Դիզակ պյյուս», 2006, էջ 3:

³ Տես Հարությունյան Գ. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»// Ընդի. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Իրավունք, 2010, էջ 56:

շրջանակի մասին հարցն է: Սովորաբար այդպիսի նախաձեռնություն կարող է բխել պետության ղեկավարից, խորհրդարանից, պատգամավորների խմբից, կառավարությունից, ընտրողների խմբից կամ քաղաքացիներից:

1991 թվականի նոյեմբերի 27-ի նիստի ժամանակ ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրաքվե անցկացնելու մասին» ժամանակավոր կանոնակարգի 4-րդ հոդվածի համաձայն՝ «ԼՂՀ ամբողջ տարածքում հանրաքվեի անցկացման նախաձեռնությունը պատկանում է բացառապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդական պատգամավորների Խորհրդին»:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն անկախության գործընթացը սկսել են համարյա միաժամանակ և մինչ օրս գտնվում են իրավական նույն հարթության վրա: Ուշագրավն այն է, որ հիշյալ բնագավառը կարգավորող իրավական ակտը՝ 1991 թվականի ապրիլի 2-ի «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը, հանրաքվեի անցկացման նախաձեռնության իրավունքը վերապահում էր ՀՀ քաղաքացիներին և ՀՀ Գերագույն խորհրդին, իսկ նորանկախ ԼՂՀ-ում քաղաքացիներին նման իրավունք վերապահված չէր:

Նախքան ԼՂՀ Սահմանադրության հանրաքվեի անցկացումն ընդունված «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ գլխում (7-81 հոդվածներ), որը նվիրված է հանրաքվեի անցկացման նախաձեռնությամբ հանդես գալուն, ժողովուրդը նույնպես չէր հանդիսանում հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտ: Ընդ որում, եթե նախկինում այդ իրավունքը վերապահված էր միայն ԼՂՀ ժողպատգամավորների Խորհրդին, ապա ԼՂՀ-ում Նախագահի ինստիտուտի ստեղծմամբ տեղի ունեցավ լիազորությունների տարանջատում Ազգային ժողովի ու Նախագահի միջև, և ժամանակի ընթացքում այդ նախաձեռնության իրավունքը եզակիից դարձել է երկակի ու այժմ, եթե Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ օժտված է Հանրապետության Նախագահը կամ Ազգային ժողովը, ապա օրենքները և պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը հանրաքվեի են դրվում Ազգա-

յին ժողովի կամ կառավարության առաջարկությամբ:

Ի տարբերություն որոշ երկրների Սահմանադրությունների և հանրաքվեի ոլորտը կարգավորող օրենսդրությունների, ԼՂՀ Սահմանադրությամբ նախատեսված չէ հանրաքվեի անցկացում ժողովրդական նախաձեռնությամբ, սակայն «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն այդ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, ինչպես նաև տվյալ համայնքի ավագանին և ղեկավարը»: Այս հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ ամեն դեպքում տեղական հանրաքվեի նախաձեռնության իրավունքի իրացմանը մասնակցում են քաղաքացիները, ինչը չենք կարող ասել հանրաքվեի մասին:

Կատարված վերլուծությունից բխում է, որ հանրաքվեն անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձև է, սակայն դրա անցկացման նախաձեռնությունը պատկանում է բացառապես ժողովրդի կողմից ընտրված Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին, ինչպես նաև վերջիններիս կողմից ձևավորված կառավարությանը, իսկ քաղաքացիների կողմից այդպիսի նախաձեռնության իրավունք պարզապես ամրագրված չէ, որը ժամանակի ընթացքում դրա կարևորության անխուսափելիությունն զգալու արդյունքում օրենսդրության մեջ ամրագրման խնդիր է:

Ինչ վերաբերում է հանրաքվե նախաձեռնելու համար քաղաքացիների ստորագրությունների թվին, ապա այդ թիվը տարբեր երկրներում տարբեր է: Որպես օրինակ նշենք, որ Շվեյցարիայի Սահմանադրությամբ այդ թիվը 100 հազար է, Մակեդոնիայի Սահմանադրությամբ՝ 150 հազար, Վրաստանի Սահմանադրությամբ՝ 200 հազար, Բելառուսի Սահմանադրությամբ՝ 450 հազար, Իտալիայի Սահմանադրությամբ՝ 500 հազար և այլն: Հաշվի առնելով հիշյալ երկրների բնակչության թվաքանակը և սահմանադրական կարգավորումները՝ կարծում ենք, որ ԼՂՀ-ում այդ խնդրի լուծման համար առավել նպատակահարմար է Սահմանադրությամբ սահմանել հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 10 տոկոսից ոչ պակասի ստորագրությունների առկայության

պահանջ⁴: Նշենք, որ 2015 թվականի մայիսի 3-ի դրությամբ ԼՂՀ-ում ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը կազմում է մոտ 102 հազար⁵: Կարծում ենք, որ ստորագրությունների հստակ թիվ նշելն այնքան էլ արդարացված չէր լինի, քանի որ երկրի բնակչության թվաքանակի աճի կամ նվազման հետ զուգահեռ այդ թիվը մնալու է անփոփոխ, որը ոչ համամասնորեն է լինելու ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների փաստացի թվակազմին:

Ինչպես տեսնում ենք, որոշ երկրներում կա ժողովրդական նախաձեռնությամբ հանրաքվե անցկացնելու իրավունք, ինչը, սակայն, բացակայում է ԼՂՀ Սահմանադրության մեջ: Իսկ այն, որ Ազգային ժողովը, լինելով նաև ներկայացուցչական մարմին, ներկայացնում է բնակչության շահերն ու պահանջները և դրանով իսկ արտահայտում ժողովրդի տեսակետը, նույնպես չի կարող դիտվել որպես ժողովրդի մասնակցություն հանրաքվեի նախաձեռնության իրավունքի իրացմանը, չէ որ հանրաքվեն ենթադրում է անմիջական նախաձեռնություն և մասնակցություն: Նշենք, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ԼՂՀ օրենքով նախատեսված չէ այնպիսի ընթացակարգ, որի դեպքում ժողովուրդը կարող է դիմել իր կողմից ընտրված պատգամավորներին՝ հանրաքվե նախաձեռնելու խնդրանքով կամ պահանջով:

ԼՂՀ-ում հանրաքվեի նախաձեռնության իրավունքի հետ կապված խնդիրը ոչ միայն ժողովրդին է վերաբերում, այլ նաև Նախագահին: Խոսքն այս դեպքում օրենսդրական հանրաքվեի մասին է: ԼՂՀ Սահմանադրության 134 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Օրենքները հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի կամ Կառավարության առաջարկությամբ՝ Սահմանադրության 133-րդ հոդվածով սահմանված կարգով»: Նման ձևակերպում առկա է նաև ՀՀ Սահմանադրության 112 հոդվածի 1-ին մասում: Համեմատության համար նշենք, որ այս դրույթը ՀՀ Սահմանադրության տրամաբանության

մեջ տեղավորվում է, քանի որ համաձայն ՀՀ Սահմանադրության 75 հոդվածի 1-ին մասի՝ «Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը», այսինքն ՀՀ Նախագահն օրենսդրական նախաձեռնության իրավունք չունի, հետևաբար օրենսդրական հանրաքվե նախաձեռնելու իրավունք վերապահված չէ: ԼՂՀ Սահմանադրության լուծումներում այս իրավակարգավորումը էականորեն տարբերվում է, քանի որ համաձայն ԼՂՀ Սահմանադրության 90 հոդվածի՝ «Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է Հանրապետության Նախագահին, պատգամավորներին և կառավարությանը»: Նշենք, որ ԼՂՀ Նախագահի՝ օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված լինելը ամրագրված էր դեռևս 1994 թվականի դեկտեմբերի 21-ի «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում: Այս տրամաբանությունից ելնելով կարելի է ասել, որ ԼՂՀ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտների և օրենսդրական հանրաքվեի նախաձեռնության իրավունքով օժտված սուբյեկտների կազմը չպետք է իրարից տարբերվեն ու քննարկվող դրույթները բուն Սահմանադրության տրամաբանության առումով պետք է համապատասխանեցվեն իրար:

Չնայած օրենսդրական հանրաքվեի՝ ԼՂՀ Սահմանադրության մեջ ամրագրվածության փաստին, վերջին 9 տարիների ընթացքում երբևէ օրենսդրական հանրաքվե չի անցկացվել այն դեպքում, երբ ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունված որոշ օրենքներ, օրինակ՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը ԼՂՀ-ում գործողության մեջ դնելու մասին ԼՂՀ օրենքը կարելի էր ընդունել օրենսդրական հանրաքվեի եղանակով՝ հաշվի առնելով

⁴ Համեմատության համար նշենք, որ «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Տեղական հանրաքվե նշանակելու համար անհրաժեշտ ստորագրությունների նվազագույն քանակը տվյալ տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 5 տոկոսից պակաս չպետք է լինի»:

⁵ 2015 թվականի մայիսի 3-ի ԼՂՀ Ազգային ժողովի ընտրության քվեարկության արդյունքների ամփոփ տվյալները տեսնելու համար <http://cecnkr.am/%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D6%80/#> (դիտելու ամսաթիվը՝ 12.05.2015թ.):

այն հանգամանքը, որ վերջինս շոշափում է Հանրապետության բոլոր ավտոտրանսպորտային միջոցներ օգտագործողների իրավունքները և անհրաժեշտ է, որպեսզի բոլորի դիրքորոշումն արտահայտվի այդ որոշման կայացման մեջ, առավել ևս, երբ խոսքը գնում է վերջիններիս կողմից կատարվող ֆինանսական ծախսերի մասին: Նման օրինագծերը օրենսդրական հանրաքվեի ճանապարհով լուծելը տարբեր շահարկումներից զերծ մնալու և հասարակության լայն շրջանակներին հուզող հարցներն իրավական հարթությունում իրավակարգավորելու լավագույն միջոցն է:

Այսպիսով, ընդհանրացված տեսքով կարելի է ասել, որ ԼՂՀ-ում օրենսդրական հանրաքվեի ինստիտուտն անարդյունավետ է գործում այն դեպքում, երբ այդ ինստիտուտի միջոցով հնարավոր էր լուծել հասարակության առավել լայն շերտերին հուզող խնդիրներ:

ԼՂՀ Սահմանադրության 1-ին գլխի մեջ ամրագրված՝ ժողովրդի կողմից իր իշխանությունը հանրաքվեների եղանակով իրականացնելու պահանջի նկատմամբ հետևողականություն դրսևորելու և Հիմնական օրենքի 11-րդ գլխում արտացոլելու նպատակով առաջարկվում է 133 հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի կամ ժողովրդի նախաձեռնությամբ՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 10 տոկոսից ոչ պակասի ստորագրությունների առկայության դեպքում»:

134 հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենքները հանրաքվեի են դրվում Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության առաջարկությամբ կամ ժողովրդի նախաձեռնությամբ՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 10 տոկոսից ոչ պակասի ստորագրությունների առկայության դեպքում՝ Սահմանադրության 133-րդ հոդվածով սահմանված կարգով»:

135 հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի, Կառավարության առաջարկությամբ կամ ժողովրդի նախաձեռնությամբ՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 10 տոկոսից ոչ պակասի ստորագրությունների առկայության դեպքում՝ հարցադրումների տեսքով՝ Սահմանադրության 133-րդ հոդվածով սահմանված կարգով»:

Այս փոփոխություններն իրենց արտացոլումը պետք է գտնեն նաև օրենսդրության մեջ, հատկապես «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքում: Նման փոփոխության կատարումը թույլ կտա մի կողմից հարթել ներսահմանադրական հակասությունը, որը դրսևորվում է ԼՂՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 133, 134, 135 հոդվածների 1-ին մասերի միջև առկա անհամապատասխանությամբ⁶, իսկ մյուս կողմից հանրաքվեն՝ որպես անմիջական ժողովրդահիշխանության ձև, դարձնել իրական, այլ ոչ թե ձևականորեն գործող ինստիտուտ:

⁶ ԼՂՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների եղանակով, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով», իսկ 133 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ»: Նույնիսկ այս հոդվածների բառացի մեկնաբանությունը թույլ է տալիս փաստել, որ հանրաքվեի եղանակով ժողովրդի կողմից իր իշխանությունն իրականացնելու այս դրույթն իր կոնկրետացումը չի գտել Սահմանադրության հետագա տեքստում, որն էլ առաջ է բերել ներսահմանադրական կոլիզիայի:

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետ,
 «Արմենիա» հասարակական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՐԴԻ ՀԱՐՉԱԴՐՈՒՄՆԵՐ

Հուսալի և կայացած պետության կայացումը պահանջում է ապահովել միասնական իրավական դաշտ՝ իրավունքի գերակայության, իշխանությունների իրական տարանջատման, օրենքի առջև պետության և քաղաքացիների հավասար պատասխանատվության հենքով: Գործնականում իրավունքի գերակայությունն առկա է այնքանով, որքանով խոցելի չէ իրավունքի վրա խարսխված իշխանության լեգիտիմությունը, օրենքներն իրավական են և բխում են օբյեկտիվ նախադրյալներից, իսկ դատական իշխանությունն անկախ է ու անաչառ¹:

Ժամանակակից և քաղաքակիրթ յուրաքանչյուր երկիր ձգտում է զարգացնել սեփական իրավական համակարգը՝ առաջնորդվելով մարդու արժանապատվության գերակայության, նրա իրավունքների և ազատությունների իրական ու երաշխավորված պաշտպանության հիմնարար սկզբունքով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: «Արմենիա» հասարակական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդը պետական պարտականությունն է:

Ընդհանուր առմամբ, դատական ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավունքի իրական՝ օբյեկտիվ պաշտպանության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում,

երբ քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտն իր խախտված կամ վիճարկվող իրավունքի պաշտպանության նպատակով, դիմելով պետության իրավասու ատյանին, հայցում (կամ ակնկալում) է իրական փոխհատուցման կամ խախտված իրավունքի վերականգնման ոչ միայն ձևական պահանջների պահպանմամբ կայացված որոշում, այլ նաև իր սուբյեկտիվ նյութական իրավունքի կորստի և ոչ նյութական բարիքին պատճառված վնասի իրական հատուցում:

Ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, ում խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ, հակառակ պարագայում կիմաստազրկվեն ոչ միայն պետական, այդ թվում՝ դատական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, այլև ընդհանրապես արդարադատության և դատական գործառույթներ իրականացնող այլ մարմինների համակարգի գոյությունը: Հետևաբար՝ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարրն ու «Արմենիա» հասարակական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդը պետական պարտականությունն է:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 89 2015

¹ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից: Երևան, հոկտեմբեր - 2014թ. էջ 17

ված՝ «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ²:

Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման լույսի ներքո կարելի է փաստել, որ դատական ակտի հարկադիր կատարման գործառույթի նշանակությունը՝ յուրաքանչյուր երկրի արդարադատության պատշաճ իրականացման գործընթացի կարևորագույն տարրն է, առանցքը և այդ թվում արդարադատության որակի գնահատման ցուցիչը:

Այս առնչությամբ Արիստոտելը նկատել է. «Արդարադատությունը կլինեք անօգուտ, եթե դատարանի վճիռները մնան անկատար»³:

Հայաստանի Հանրապետության դատական ակտերը, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավազոր մարմինների ակտերը (օրինակ՝ արբիտրաժային տրիբունալի վճիռներ, ֆինանսական հաշտարարի որոշումներ, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռներ և որոշումներ և այլն), այժմ նաև վարչական մարմինների անբողոքարկելի դարձած որոշումները (այսուհետ բոլորը միասին նաև Ակտեր) գործնականում իրագործվում են, կատարողական վարույթի իրավահարաբերությունները կարգավորող երկու հիմնարար նորմատիվ իրավական ակտերի՝ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (այսուհետ նաև՝ Օրենք Ծառայության մասին) և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» (այսուհետ նաև՝ Օրենք) ՀՀ օրենքների համաձայն:

Վարչական մարմինների անբողոքարկելի դարձած վարչական ակտերի բռնագանձման ինստիտուտը, դատական ակտերի հարկադիր կատարման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավակիրառ բնագավառում համեմատաբար նորույթ է:

Դատական ակտերի հարկադիր կատարման ապահովումը դատաիրավական բարեփո-

խումների առաջին փուլի արդյունքում տարանջատվեց մինչ այդ հայտնի իր ավանդական մոտեցումից, այսինքն՝ դատական իշխանության ենթակայությունից և վերապահվեց գործադիր իշխանության մարմնին, ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կազմում ձևավորված և գործող «դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության» (այսուհետ՝ հարկադիր կատարման ծառայություն կամ ՀԿԾ), իսկ վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերը հանդես եկան որպես հարկադիր կատարման գործառույթի իրականացման իրավունքի աղբյուր:

Ներկայումս, դատական և օրենսդրությամբ նախատեսված այլ իրավազոր մարմինների այն ակտերը, որոնք կամովին չեն կատարվում և անհրաժեշտ է դրանց հարկադիր կատարում, կյանքի են կոչվում օրենսդրությամբ սահմանված կարգով, հարկադիր կատարման ծառայությունում, որպես գործունեության տեսակ՝ որոշակի ընթացակարգով իրականացվող վարույթում, որը հանդես է գալիս «կատարողական վարույթ» վերտառությամբ: Այս առումով կատարողական վարույթը, ապահովելով դատական ակտերի ժամանակին, լրիվ և ճիշտ կատարումը, նպաստում է դրանց կայունությանը, պետական իշխանության և այդ թվում նաև դատական իշխանության նկատմամբ վստահության բարձրացմանը և հանդիսանում է իրավական պետության, ինչպես նաև իրավունքի սուբյեկտների սահմանադրությամբ և օրենքներով սահմանված սուբյեկտիվ նյութական իրավունքների ապահովման երաշխիք:

Դատական ակտերի կատարման անխուսափելիությունն ու կարևորությունն են ընդգծում նաև միջազգային հեղինակավոր կազմակերպությունները, մասնավորապես՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 2003 թվականի սեպտեմբերի 9-ի «Հարկադիր կատարման մասին» Rec 2003(17) հանձնարարականով նշում է, որ դատական ակտերի հարկադիր կա-

² ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: Համարը՝ ՍԴՈ-1115: ՀՀ ՊՏ 2013.10.02/54(994) հոդված 895:

³ Аристотель.Политика–Москва,2002г.С-230, <http://grachev62.narod.ru/aristotel/arpol6.html>

տարումն արդարադատության շարունակությունն է, այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման, դատավարությունն արդյունավետ չի լինի և չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն սուբյեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում⁴:

Այսպիսով, երկար կարելի է թվարկել այն կարևոր և առանցքային նշանակությունը, որն ունի հարկադիր կատարման ինստիտուտը, սակայն պետք է արձանագրել, որ «կատարողական վարույթը» իրապես կոչված է ապահովելու ողջ դատաիրավական իրավակիրառ գործունեությունն ու միաժամանակ ուղղորդել օրինական ուժ ստացած և հարկադիր կատարման անհրաժեշտություն ստացած դատական և այլ իրավագործ մարմինների ակտերի նյութաիրավական նպատակի իրական, շոշափելի իրագործմանը:

Ընդհանրապես, կատարողական վարույթի գոյության ակունքները խորն են, պայմանավորված է դատարանների կենսունակությամբ, այն գոյություն ունի այնքան ժամանակ, որքան գոյություն ունի ինքը՝ դատական իշխանությունը: Փոփոխվում են միայն դրա իրականացման ձևերը, շեշտադրումները, նորմատիվային ամրագրումը, այն իրականացնող մարմինները և դրանց անվանումները, մասնակիցների կազմը, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Սակայն հարկադիր կատարման նպատակը, իրավունքի և դատական իշխանության գոյության ողջ ժամանակահատվածում մնում է միակը՝ բոլոր մատչելի միջոցներով պարտապանին հարկադրել կատարելու իրավասու մարմնի կողմից օրինական ճանաչված պահանջատիրոջ կամքը, որը վերջնականապես իրականացվում է պետական հարկադրանք կիրառելու միջոցով⁵:

Դատական ակտերի հարկադիր կատար-

ման արդյունավետ կառուցակարգերի գոյությունն իրավունքի սուբյեկտների համընդհանուր իրավունքների պաշտպանության կարևորագույն օղակներից մեկն է, որի պատշաճ գործունեության ապահովումն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պարտականությունն է: Ընդ որում, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության շղթայում հարկադիր կատարման օղակն ունի համակարգային նշանակություն, քանի որ դրա թերի գործառնման պարագայում ակնհայտորեն կնվազի իրավունքների պաշտպանության գրեթե բոլոր ձևերի արդյունավետությունը: Դատական ակտերի հարկադիր կատարման գործուն կառուցակարգը կոչված է ապահովելու պարտատիրոջ այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, իսկ գույքային պահանջների դեպքում՝ նաև սեփականության պաշտպանության իրավունքը⁶:

Այսպիսով, ի կատարումն հարկադիր կատարման ենթակա դատական և այլ իրավագործ ակտերի, հարկադիր կատարողը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով վարում է կատարողական վարույթ, որը ոչ այլ ինչ է, քան վարչական վարույթի հատուկ և ինքնուրույն տեսակ իրեն բնորոշ առանձնահատկություններով:

Հարկադիր կատարողը դատական ակտերի հարկադիր կատարման նյութական իրագործմանը հասնում է Օրենքով ամրագրված հարկադիր կատարման միջոցների օգնությամբ՝ ներգործությամբ:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցներն են՝

1) արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը,

2) պարտապանի աշխատավարձի, կեն-

⁴ Recommendation Rec(2003)17 of the Committee of Ministers to member states on 208 enforcement, Committee of Ministers of Council of Europe, 9 September 2003:

⁵ Ա. Ավագյան, Կատարողական իրավունքի ձևավորման և զարգացման տեսական-կիրառական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Երևան 2005թ., մենագրություն, 376 էջ 18

⁶ Մարդու Իրավունքների Եվրոպական դատարանի դատական ակտեր՝ VASILOPOULOU v. GREECE գործով (N 47541/99) 21.03.2002թ. վճռի 22 կետը, BURDOV v. RUSSIA գործով (N 59498/00) 07.05.2002թ. վճռի 40 կետը, TIMOFEYEV v. RUSSIA գործով (N 58263/00) 23.10.2003թ. վճռի 45 կետը, BURDOV v. RUSSIA (No. 2) գործով (N 33509/04) 15.01.2009թ. վճռի 87 կետը:

սաթռչակի, կրթաթռչակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելը,

3) այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելը,

4) կատարողական թերթում նշված որոշակի առարկաները պարտապանից ազդարարվելը և պահանջատիրոջը հանձնելը,

5) հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելը,

6) կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցներ:

Օրենքով սահմանված հարկադիր կատարման միջոցները պարտապանի և (կամ) նրա գույքի նկատմամբ կիրառվող իրավական ներգործության այն միջոցներն են, որոնք անմիջականորեն ուղղված են դատական ակտով սահմանված որևէ պարտավորության կատարմանը պարտապանի կամքին հակառակ: Օրենքով սահմանված դատական ակտերի հարկադիր կատարման նշված միջոցները, ըստ էության հանդես են գալիս որպես կատարողական վարույթի առանցքային ինստիտուտ, քանի որ դրանք են իրավական ներգործության այն կառուցակարգերը, որոնց գործադրմամբ իրագործվում է կատարողական վարույթի նպատակը՝ Ակտով սահմանված պարտավորության հարկադիր կատարումը:

Կատարողական վարույթը, ըստ էության, սկսվում է կատարողական վարույթի հարուցմամբ և եզրափակվում է կամ Ակտի կատարմամբ, կամ Ակտի կատարման անհնարինությամբ, որի հիմնական նպատակն Օրենքով ամրագրված ընթացակարգով՝ կատարողական վարույթով, դատական կամ այլ իրավագործարմանի ակտով որոշված պահանջի կատարմանը հասնելն է:

Կատարողական վարույթի վարման ընթացքում կիրառվող վերոնշյալ հարկադիր կատարման միջոցների մեջ առանձնահատուկ կարևոր է հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելու ինստիտուտի դերը:

Հարկադիր կատարման այս գործիքի կարևորությունը առաջին հերթին պայմանավորված է հարկադիր կատարման ենթակա Ակտի պահանջի կատարմանը հասնելու կարևորությամբ՝ այն դեպքում, երբ պարտավոր անձի

կողմից գործելու պարտականությունը սահմանված է Ակտով, իսկ սահմանված պահանջը նրա փոխարեն որևէ մեկի կողմից կատարելու գործողությունը սահմանափակված կամ երաշխավորված չէ իրավունքով: Հարկադիր կատարողի կողմից վարչական տուգանք կիրառելու կարևորության երկրորդ, ֆակուլտատիվ հատկանիշը պայմանավորված է հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումների համապարտադիր լինելու կարևորությամբ, որոշակիությամբ և հրատապությամբ:

Մինչև քննարկվող հարցի վերաբերյալ մեր տեսակետի ներկայացումը, հարկ ենք համարում ընդգծել, որ կան այնպիսի պարտավորություններ սահմանող դատական ակտեր, որոնց հարկադիր կատարման կոնկրետ միջոց գոյություն չունի: Այդ պարտավորությունները նրանք են, որոնք հնարավոր են և պետք է կատարվեն բացառապես անձամբ պարտապանի կողմից: Դրանց շարքին կարելի է դասել, օրինակ՝ գործատուի կողմից աշխատողին իր նախկին աշխատանքում վերականգնելու մասին հրամանի արձակումը և աշխատանքային գրքույկում համապատասխան գրառում կատարելը կամ եթե անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորել են վիրավորանքով, ապա հրապարակայնորեն ներողություն խնդրելը, որևէ իրավունքի խախտում վերացնելը կամ դրանից ձեռնպահ մնալը և այլն:

Սակայն հատկանշականն այն է, որ օբյեկտիվ իրականությունը և իրավակիրառ պրակտիկան անկախ հարկադիր կատարման միջոցների վերաբերյալ օրենսդրի ընդունած հայեցակարգից այլ է՝ պարտապանը կարող է շարունակաբար տարբեր զրկանքներ կրել՝ վճարել տուգանք, ենթարկվել իր իրավունքների տարբեր սահմանափակումների, նույնիսկ ենթարկվել քրեական պատասխանատվության և զրկվել ազատությունից, սակայն այդպես էլ չկատարել դատական ակտով սահմանված իր պարտավորությունը, որը կարող է և պետք է կատարի անձամբ: Արդյունքում իրավակիրառ պրակտիկայում կարող են լինել այնպիսի Ակտեր, որոնք ոչ մի կերպ հնարավոր չէ կատարել:

Ուստի գիտական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցի պատասխանը, թե հարկադիր կատարման ինչ միջոցներ են անհրաժեշտ սահմանել այն պարտավորությունների

կատարման համար, որոնք պարտապանը պետք է և կարող է անձամբ կատարել, սակայն հրաժարվում է:

Անդրադառնալով հարկադիր կատարողի որոշման պարտադիր կատարման հատկանիշին՝ նշենք, որ Օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ (...) հարկադիր կատարողի՝ իր իրավասության սահմաններում կայացրած որոշումները պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար ու ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Հարկ է նշել, որ նորմատիվ իրավական ակտում հռչակագրային բնույթի սահմանումը դեռևս բավարար չէ նպատակին հասնելու համար, անհրաժեշտ է ընթացակարգային, վարչարարական համապատասխան կառուցակարգեր, որոնցից մեկն էլ հենց վերոգրյալ՝ «հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելու» ինստիտուտն է, ինչը, ըստ էության, վարչական ներգործության անհրաժեշտ միջոց է, իսկ մի շարք դեպքերում նաև դատական կամ այլ իրավագոր մարմնի ակտի կատարմանը հասնելու հրատապ միջոց: Չմոռանալով կարևորել նաև այն, որ ՀԿԾ՝ որպես իրավապահ գործունեությամբ օժտված վարչական մարմին, պետք է նաև պատշաճ միջոցներ ձեռնարկի օրենսդրությամբ սահմանված իր լիազորությունների շրջանակում հայտնաբերված հնարավոր վարչական իրավախախտումների բացահայտման և կանխման ուղղությամբ:

Այնպիսի վարչական իրավախախտումներ, որոնք մի կողմից հանդիսանում են հարկադիր կատարողի վրա դրված պարտականությունների կատարմանն օժանդակող միջոցներ, իսկ մյուս կողմից արդարադատության իրականացման բնագավառում վարչաիրավական հասարակական հարաբերություններին ոտնձգող զանցանքներ, նախատեսված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206⁵ և 206⁹ հոդվածներով:

Ժամանակակից իրավագիտությունում, համապատասխան հարկադիր կատարման միջոց-

ների ընտրության և կիրառման հարցն արդիական է: Մասնավորապես, ռուս իրավագետներ Ի. Բ. Մորոզովան և Ա. Մ. Տրետուշնիկովան իրենց աշխատությունում առաջարկում են վերանայել հնարավոր անուղղակի հարկադրանքի միջոցները՝ կարևորելով, որ դրանց գործնական կիրառումը, դատական ակտի կատարման նկատմամբ պարտապանի անհարգալից, թեթևամիտ վերաբերմունքի պայմաններում, կարող է հանդես գալ որպես համաչափ վարչարարություն, լինել միանգամայն արդյունավետ և հեշտացնել հարկադիր կատարողի խնդիրը⁷:

Մեկ այլ ռուս իրավագետ՝ պրոֆեսոր Ի. Վ. Ռեշետնիկովան իր հերթին առաջարկում է անբարեխիղճ պարտապանների նկատմամբ կիրառել այնպիսի հարկադրանքի միջոցներ, ինչպիսիք են հանրային աշխատանքները, բռնագանձման ենթակա գումարի չափով կիրառել տուգանք պետական բյուջեի օգտին և այլն⁸:

Ընդունենք, որ Օրենքով սահմանված պատշաճ ընթացակարգով վարվող կատարողական վարույթով, հարկադիր կատարողը հիմք ընդունելով Օրենքի 5-րդ հոդվածի 4.1.-րդ կետը, հանգում է պարտապանի կամ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ անձանց նկատմամբ տուգանքի կիրառման անհրաժեշտության կամ անխուսափելիության: Ակնհայտ է, որ Օրենքով նշված եզրույթը՝ «տուգանք կիրառելը», դեռևս բավարար չէ հասկանալու համար, որ օրենսդիրը տվյալ պարագայում բացառապես նկատի է ունեցել վարչական իրավախախտում կատարելու համար նախատեսված (կիրառվող) վարչական տույժը, որպես վարչական պատասխանատվության տեսակ կիրառելը: Հետևաբար, հարց է ծագում, թե ինչ է նշանակում «տուգանք կիրառել» եզրույթը և որտեղ պետք է փնտրել դրա նյութաիրավական ամրագրումը:

Այնուամենայնիվ, ըստ Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացու կամ պաշտոնատար անձի կողմից հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու, կատարմանը խոչընդոտելու կամ դիմադրություն ցույց տալու, ինչպես նաև պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, № 89 2015

⁷ Морозова И.Б. Трейшников А.М. Исполнительное производство. Москва, Городец, 2004, էջ 19:

⁸ Решетников И. В., Исполнительное производство за рубежом. Право и экономика. Москва, 2001. № 3. էջ 40-41

քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու դեպքերում հարկադիր կատարողն իրավունք ունի իր որոշմամբ կիրառելու վարչական պատասխանատվության միջոցներ: Այսինքն, ըստ վկայակոչված հոդվածի, հարկադիր կատարողը պետք է որոշում կայացնի «անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին»:

Տվյալ պարագայում աներկբա է, որ կատարողական վարույթն այս փուլում հանդես է գալիս, որպես անձին վարչական պատասխանատվության կանչելու վարույթ և հիմք է հանդիսանում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար, ուստի պետք է համապատասխանի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նորմատիվ պահանջներին:

Շեռնաբար, հարկադիր կատարողի կողմից «անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» որոշում կայացնելու դեպքում, բացի իրավունքի վարույթային աղբյուր հանդիսացող Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասից, անհրաժեշտ է նաև համապատասխան նյութական իրավունքի աղբյուր, տվյալ դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ հատուկ մասում սահմանված համապատասխան հոդվածները: Այսինքն, հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելը պետք է հանդիսանա գանցանք՝ նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով:

Սակայն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14¹ գլուխը՝ «Վարչական իրավախախտումներ արդարադատության իրականացման բնագավառում» վերտառությամբ, ինչպես արդեն վերը նշեցինք ներկայումս բովանդակում է կատարողական վարույթի հարաբերություններին վերաբերելի ընդամենը երկու նորմ՝ 206⁵ և 206⁹ հոդվածները:

Ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 206⁵ հոդվածի՝ «Հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պար-

տականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով»:

Նույն օրենսգրքի 206⁹ հոդվածը սահմանում է՝ «Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) այդ ակտերում սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քաղաքացիների կողմից դիտավորությամբ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով»⁹:

Նշված հոդվածների ուսումնասիրությունն ակնհայտ վկայում է, որ օրենսդիրը զանցանք չի համարում ինչպես հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելը, այնպես էլ վերջինիս դիմադրություն ցույց տալը, ինչպես նաև պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու դեպքերը:

Այնինչ, ինչպես արդեն վերը նշեցինք, վերոշարադրյալ արարքները նախատեսված են Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասում, որպես իրավախախտման տեսակներ, որոնց նկատմամբ հարկադիր կատարողն իրավունք ունի իր իսկ որոշմամբ կիրառելու վարչական պատասխանատվության միջոցներ:

Անհասկանալի է նաև, օրենսդիր մարմնի այն ընտրանքային մոտեցումը, որը ցուցաբերվել է այլ իրավապահ գործառույթով օժտված մարմինների նկատմամբ նույնաբովանդակ հակաիրավական արարք դրսևորելու համար նախատեսված պատասխանատվության միջոցների ընտրության հարցում: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսված, եթե

⁹ Օրենսգրքի 9 ՀՕ-41-Ն, սկզբնաղբյուրը՝ ՀՍՍՀԳՍ 1985/23, ընդունող մարմին՝ Գերագույն խորհուրդ, ուժի մեջ է 01.06.1986թ.

արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով ցանկացած ձևով միջամտվում է դատարանի գործունեությունը, կամ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով, ցանկացած ձևով միջամտվում է դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությունը: Այնինչ հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը ընդամենը հանդիսանում է զանցանք:

Շարունակելով քրեաիրավահարաբերություններում կատարողական վարույթին վերաբերելի հողվածների վերլուծությունը՝ նշենք, որ 2006 թվականի հունվարի 19-ին ուժի մեջ է մտել ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՕ-15-Ն օրենքը, որով նախատեսվել է, որ պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելը, երբ հայտարարագիր տալը պարտադիր է, ինչպես նաև հայտարարագրում գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի վերաբերյալ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելը կամ դրանք թաքցնելը, որոնք հանգեցրել են խոշոր չափերի պարտավորության հարկադիր կատարման անհնարինության՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: Հողվածում խոշոր չափ է նախատեսվել հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը)¹⁰:

Նետևաբար, անհասկանալի է, թե ինչպիսիք իրավախախտում է հանդիսանում և ի՞նչ պատասխանատվություն է նախատեսվում Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն արարքը, երբ պարտապանը թաքցնում կամ խեղաթյուրում կամ ուղղակի չարամտորեն խուսափում է, «սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին» հայտարարագրում

տվյալներ ներկայացնելուց, որը հանգեցրել կամ կարող է հանգեցնել մինչև նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը չգերազանցող պարտավորության հարկադիր կատարման անհնարինության:

Արդյունքում, հարկադիր կատարողը, որպես վարչարարություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձ, գրկված է ի կատարումն հանուն Հայաստանի Հանրապետության կայացված դատական և այլ իրավագործ մարմինների ակտերի, Օրենքով սահմանված իր լիազորությունների կատարումն ապահովելու համար խիստ անհրաժեշտ վարչական ներգործության համապատասխան միջոցներ կիրառելու հնարավորությունից (վարչական գործիքներից), իսկ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթները՝ հարկադիր կատարողի կողմից վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցում սին են՝ իրավագուրկ:

Ավելին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206⁵ և 206⁹ հոդվածներով նախատեսված արարքների՝ զանցանքների դեպքում, հարկադիր կատարողն իրավունք չունի իրավախախտին վարչական պատասխանատվության ենթարկել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված այլ վարչական մարմիններին (օրինակ՝ հարկային, մաքսային, ոստիկանության, պաշտպանության նախարարության մարմիններ և այլն) վերապահված ընդհանուր ընթացակարգին, լիազորություններին համապատասխան, այլ կերպ ասած՝ ՀԿԾ կամ հարկադիր կատարողը չի հանդիսանում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու համար իրավասու լիազոր մարմին (կամ պաշտոնատար անձ):

Հարկադիր կատարողը վերոնշյալ հողվածով նախատեսված զանցանքների դեպքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի 9 և 10 մասերով նախատեսված հիմքով ընդամենը կազմում է վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն և ուղարկում է վարչական դատարան, որոնք, ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի

¹⁰ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-15-Ն, սկզբնաղբյուր ՀՀ ՊՏ 2006.01.18/3(458) հոդված 73, ուժի մեջ է մտել 19.01.2006թ.:

223-րդ հոդվածի, քննում են նույն օրենսգրքի 206⁵ և 206⁹ հոդվածներով նախատեսված իրավախախտման գործը՝ ըստ համապատասխան պաշտոնատար անձի հայցադիմումի:

Հատկանշական է նաև այն, որ օրենսդիր մարմինը 2013 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-142-Ն օրենքի 5-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչել Օրենքի 72.1-րդ հոդվածի 1-ին մասը, որով նախատեսվում էր հարկադիր կատարողի նշանակված տուգանքների բռնագանձման դատական կարգ:

Ըստ վերոնշյալ օրենքի փոփոխության ներկայացված նախագծի հիմնավորման՝ «Նախագծում տեղ չեն գտել ՀՀ Վարչական դատավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի գործող օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, այսինքն՝ վարչական դատարանին այլևս ընդդատյա չեն վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից: Փաստորեն առաջարկվել է վերացնել վճարման կարգադրությունների վարույթը՝ նախատեսելով հնարավորություն, որպեսզի անվիճարկելի ակտի հիմքով բռնագանձումը կատարվի առանց դատարան դիմելու վարչական մարմնի կամ դատական ակտերի հարկադիր կատարումն իրականացնող մարմնի միջոցով՝ իհարկե, վերջիններիս օրենսդրություններում կատարելով համապատասխան փոփոխություններ: Ըստ օրինագծի հեղինակների՝ նշված ինստիտուտը լայնորեն ճանաչված և արդարացված պրակտիկա է եվրոպական բազմաթիվ երկրներում: Վճարման կարգադրություններով վարույթում վարչական վարույթով պայմանավորված որևէ առանձնահատկություն կամ մասնագիտացված դատարանին բնորոշ բարդություն չկա, քանի որ խնդիրը վերաբերում է պարզ ընթացակարգերի կիրառմամբ բռնագանձումների իրականացմանը: Նման մոտեցման պարագայում վարչական դատարանը կունենա աշխատանքի լուրջ թեթևացում, ինչը կնպաստի վարչական գործերի քննության արդյունավետության բարձրացմանը¹¹:

Անհրաժեշտ է նկատել, որ թեև օրենսդրական նախագծի հիմնավորմամբ նախատեսվել է, որ անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական փոփոխություն կատարել, սակայն կատարված փոփոխությունները բազմակողմանի և ամբողջական չեն եղել: Հարկադիր կատարման ծառայության օրենսդրորեն իրավունք չի վերապահվել քննել վարչական իրավախախտման գործ: Արդյունքում ՀԿԾ որպես վարչական մարմին, ի դեմս գործող պետական պաշտոնատար անձ՝ հարկադիր կատարողի, օրենքով ցուցաբերվել է հայեցողական, չհիմնավորված սելեկտիվ մոտեցում, ի թիվս այլ վարչական մարմինների: Նման մոտեցումը նսեմացնում է հարկադիր կատարողի որոշման և նրան վերապահված գործառույթի պատշաճ դերի պահպանմանը, միաժամանակ խոչընդոտելով ՀԿԾ հիմնական գործառույթի՝ օրինական ճանաչված և կամովին չկատարված Ակտի հարկադիր կատարման և արդարադատության օժանդակման գործընթացին:

Ըստ մեզ, դատական ակտի և ընդհանրապես Օրենքով նախատեսված հարկադիր կատարման ենթակա Ակտի ժամանակին, լրիվ և ճիշտ կատարման կարևորությունը, աղերս ունի վարչարարության հիմնարար սկզբունքներին համապատասխան, օպերատիվ վարչական ընթացակարգերի, այդ թվում, վարչական տույժի՝ տուգանքի կիրառման: Իսկ վարչական տույժի ենթարկելու ընթացակարգը պետք է վերապահել հարկադիր կատարողին, հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլխի կանոնները, որոնք վերաբերվում են հանրային իրավական դրամական պահանջների կատարմանը կամ անբողոքարկելի դարձած վարչական ակտերի բռնագանձմանը:

Վերը նշված մոտեցումը կխթանի դատական կամ այլ իրավազոր մարմնի ակտի կատարման գործընթացի արդյունավետ կատարումը և հաշվի առնելով վարչական դատարանների ծանրաբեռնվածությունը, օբյեկտիվորեն զերծ կպահի տարիներով ձգձգվող դատական գործընթացներից: Ստացվում է, որ ձգձգվող դատական գործերն օբյեկտիվորեն կարող են նաև հանգեցնել լատենտային կո-

¹¹ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6178&Reading=0>:

ռուպցիոն ռիսկերի, որից կարող են օգտվել դատավարության և կատարողական վարույթի անբարեխիղճ մասնակիցները:

Ընդհանրացնելով նշենք, որ հարափոփոխ հասարակական հարաբերություններն օբյեկտիվորեն հարկադրում են անընդհատ վերանայել և համապատասխանեցնել նորմատիվ կարգավորումը գոյություն ունեցող և անընդհատ դիալեկտիկական զարգացման միտում ունեցող ժամանակակից հասարակական պահանջներին:

Ասվածի վառ ապացույց է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի հրամանագրով ձևավորված սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը և նրան առաջադրված պահանջներն առ այն, որ պետք է իրականացնել սահմանադրական բարեփոխումներ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը կատարելագործելու, իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից¹²:

Մինչ քննարկվող հարցի վերաբերյալ առաջարկվող մեր տեսակետի ներկայացումը, հարկ եմ համարում ընդգծել, որ որևէ Ակտով սահմանված պարտավորության հարկադիր կատարման նպատակով պարտապանի նկատմամբ գործադրվող իրավական ներգործության ցանկացած միջոցի ներդրումը պետք է հիմնավորված լինի ոչ միայն այդ նպատակին ծառայելու առաքելությամբ, առաջարկվող միջոցի արդյունավետությամբ, այլ նաև հարկադիր կատարողի առջև դրված խնդիրների կատարումը դյուրին դարձնելու անհրաժեշտությամբ: Պարտապանի նկատմամբ կիրառվող հարկադրանքը (կիրառվող հարկադիր կատարման միջոցը), պետք է առաջին հերթին՝ բավարարի իրավաբանական հիմնավորվածության պահանջին:

Ի դեպ, հարկադիր կատարման գործընթացում, օբյեկտիվ նախապայման պետք է հանդիսանա նաև այն, որ դատական ակտերի հար-

կադիր կատարման ընթացակարգը ընդհանրապես, իսկ կիրառվող հարկադիր կատարման միջոցները մասնավորապես պետք է խստորեն համապատասխանեն պարտապանի իրավունքների պաշտպանության ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավունքի նորմերով սահմանված սկզբունքներին:

Իսկ այդպիսի սկզբունքներ են հանդիսանում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրագործման այն կառուցակարգերը, որոնք նախատեսված են, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մի շարք իրավանորմերում:

Մասնավորապես այն, որ վավերացված կամ հաստատված միջազգային պայմանագրերը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության բաղկացուցիչ մաս (6-րդ հոդված), կամ այն, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (5-րդ հոդված) կամ այն, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը (83⁵ հոդված)¹³:

Այն, որ դատական ակտերի հարկադիր կատարման հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը «բռնել են ժամանակի քննությունը» և ՀԿԾ կարողացել է պատվով դուրս գալ իրեն վերապահված առաքելությունից, այլևս իրողություն է:

ՀԿԾ 2014թ. գործունեության ամփոփմամբ, ՀՀ գլխավոր հարկադիր կատարող, արդարադատության գեներալ-մայոր՝ Միհրան Պողոս-

¹² ՀՀ Նախագահի «ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի ստեղծելու մասին» հրամանագիրը՝ ՆՀ-207-Ն, սկզբնաղբյուր ՀՀ ՊՏ 2013.09.11/49 (989), հոդված 829, ուժի մեջ է մտել 21.09.2013թ.:

¹³ ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 05.12.2005թ. Հատուկ թողարկում Հոդ. 1426:

յանը նշել է, որ պահանջատերերի օգտին կատարված բռնագանձումների ծավալը գերազանցել է 37 մլրդ դրամի սահմանագիծը, նախորդ տարվա բռնագանձված և վերականգնված 20.079.203.874 դրամ գումարի դիմաց, հարուցվել է 480.075 կատարողական վարույթ՝ նախորդ տարվա 123.228 կատարողական վարույթի դիմաց¹⁴:

Այսպիսով, հարկադիր կատարման ինստիտուտի և դրանում ընթացող իրավահարաբերությունների ավելի ամբողջական և համապարփակ կարգավորում ակնկալելու, կատարողական վարույթում անհրաժեշտ և արդյունավետ վարչարարություն իրականացնելու երաշխիք ունենալու անհրաժեշտությամբ պայմանավորված, պետք է ստեղծել համապատասխան կառուցակարգեր և վերանայել գործող օրենսդրության որոշ հակասական դրույթներ:

Ամփոփելով վերոշարադրյալ հետազոտությունը, կարելի է առաջարկել սույն հոդվածով քննարկման առարկա դարձած հարցերի վերաբերյալ հետևյալ համահունչ լուծումները՝

1. Վերանայել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 206⁵ հոդվածով նախատեսված, զանցանք համարվող «հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը», որպես վարչական պատասխանատվություն առաջացնող արարք: Հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը կամ դիմադրություն ցույց տալը որպես առավել հանրորեն վտանգավոր հետևանք առաջացնող արարք, ինչպես նաև որպես արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների համասեռ հասարակական հարաբերությունների նմանատիպ օբյեկտ, համարել արդարադատության իրականացմանը ոտնձգող արարք և այն նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածով:

2. Հիմք ընդունել, որ կատարողական վարույթի շրջանակներում, հարկադիր կատարողի կողմից օրենքով սահմանված կարգով ըն-

դունած (կամ կայացրած) ցանկացած պարտադրման որոշում համարվում է նաև վարչական ակտ, այն Օրենքով օժտված է պարտադիրության իմպերատիվ հատկանիշով, այն չկատարելը պետք է համարվի զանցանք, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 206-րդ հոդվածը պետք է լրացնել հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու այնպիսի իրավանորմով, որը կնախատեսի համապատասխան վարչական պատասխանատվության միջոց կամ միջոցներ:

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 206-րդ հոդվածը լրացնել համապատասխան իրավանորմերով և այն արարքը (գործողությունը կամ անգործությունը) որը թույլ է տվել պարտապանը համարել զանցանք, եթե վերջինիս կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու արդյունքը հանգեցրել կամ կարող է հանգեցնել մինչև նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը չզերազանցող պարտավորության հարկադիր կատարման անհնարինության, ինչպես նաև, եթե պարտապանը Օրենքով սահմանված ժամկետում հրաժարվում կամ չարամտորեն խուսափում է սահմանված նմուշի հայտարարագիր լրացնելուց (կամ ներկայացնելուց):

4. Վերանայել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածը և վերոնշյալ արարքների՝ զանցանքների դեպքում, հարկադիր կատարողին իրավունք վերապահել քննել վարչական իրավախախտումը և իր որոշմամբ կիրառել համապատասխան վարչական պատասխանատվության միջոցներ, և ի թիվս այլ վարչական մարմինների, այդ թվում հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով նախատեսված կանոնները՝ անբողոքարկելի դարձած վարչական ակտ՝ որոշում ունենալու դեպքում, իր իսկ որոշմամբ բռնագանձել նշանակված վարչական տույժը¹⁵:

¹⁴ <http://www.harkadir.am/view-lang-arm-article-285.html>:

¹⁵ Օրենք ՀՕ-41-Ն, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413:

ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Վաստաքանների պալատի անդամ, փաստաբան
«Վետական կառավարման ակադեմիայի հայցորդ»

**ՔԱՂԱՔԱԳԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Քաղաքացիական ծառայության սկզբունքներն իրավական նորմերն ու հիմնական ելակետային դրույթներն են, որոնք դրվում են քաղաքացիական ծառայության ձևավորման և գործունեության հիմքում և որոնցով պետք է առաջնորդվեն քաղաքացիական ծառայողներն իրենց մասնագիտական գործունեության ընթացքում: Քաղաքացիական ծառայության սկզբունքների միջոցով դրսևորվում են պետական վարչական կառավարման գործունեության հիմնական առանձնահատկությունները:

Քաղաքացիական ծառայության սկզբունքների բովանդակությունը ներառում է որոշակի կողմնորոշիչներ, որոնք կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, կառավարելու սոցիալական երևույթները և գործընթացները: Հենց այդ կողմնորոշիչների հիման վրա է կազմակերպվում հենց վարչական կառավարման իրական գործընթացը, օրինակ՝ ընդհանուր վարչական կառավարման գործընթացի կշռադատված և հիմնավորված կարգավորումը, կառավարչական ներգործության մեթոդների և եղանակների ազատ ընտրությունը:

«Օրենսդրությունը քաղաքացիական ծառայության սկզբունքների սահմանումը չի տալիս, բայց դրանք թվարկված են հանրային ծառայության և քաղաքացիական ծառայության մասին օրենքներում²: Քաղաքացիական ծառայության սկզբունքների իրավական ամրագրումը պայմանավորված է պետական մամինների գործունեության, քաղաքացիական ծառայողների գործունեության, պետական-ծառայողական հարաբերությունների պետաիրավական կարգավորման կայունության, ինչպես նաև քաղաքացիական ծառայության մասին ծառա-

յողական օրենսդրության զարգացման միտումների ամրապնդման անհրաժեշտությամբ:

Քաղաքացիական ծառայության սկզբունքների հիմնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանք ունեն իրավական բովանդակություն, ապահովում են քաղաքացիական ծառայության գործնական կազմակերպումը և իրական գործունեությունը: Այս սկզբունքները դրսևորվում են ոչ միայն քաղաքացիական ծառայության, այլ նաև պետական մարմինների համակարգման, կազմակերպման և գործունեության շրջանակներում:

Քաղաքացիական ծառայության սկզբունքներից յուրաքանչյուրն արտացոլում է պետական մարմինների, քաղաքացիական ծառայողների, նրանց միջև առկա կապերի միայն որոշ մասը: Բայց բոլոր սկզբունքները փոխադարձորեն կապված և փոխապայմանավորված են միմյանցով. մեկ սկզբունքի պահպանումը նպաստում է մյուսների իրականացմանը, իսկ սկզբունքներից որևէ մեկի խախտումը բացասական անդրադարձ է ունենում մյուս սկզբունքների իրականացման վրա:

Քաղաքացիական ծառայության սկզբունքները բազմաթիվ են և բազմանշանակ, այդ իսկ պատճառով դրանք ենթարկվում են որոշակի դասակարգման: Քաղաքացիական ծառայության սկզբունքների դասակարգումը կատարվում է դրանք 3 խմբերում առանձնացնելու միջոցով: Դրանք են՝

- քաղաքացիական ծառայության սահմանադրական սկզբունքներ,
- քաղաքացիական ծառայության կազմակերպական սկզբունքներ և
- քաղաքացիական ծառայության օժանդակ սկզբունքներ:

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 89 2015

¹ Տեն Граждан В. Д., «Государственная гражданская служба. Учебное пособие» М., 2005. ст. 96.

² Հիշյալ օրենքներից առաջինն ընդունվել է 2011 թվականի մայիսի 26-ին, գործողության մեջ դրվել 2012 թվականի հունվարի 1-ին, իսկ երկրորդն ընդունվել է 2001 թվականի դեկտեմբերի 4-ին, գործողության մեջ դրվել 2002 թվականի հունվարի 9-ին:

Քաղաքացիական ծառայության սահմանադրական սկզբունքները Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված հիմնական բնորոշիչների և առանձնահատկությունների ամբողջությունն են, որոնց համապատասխան պետք է իրականացվի քաղաքացիական ծառայությունը: Սահմանադրական սկզբունքներն են՝

1) օրինականությունը, որի էությունը կայանում է նրանում, որ քաղաքացիական ծառայությունը կարգավորվում է իրավական ակտերով և գործում օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան: Գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք և քաղաքացիները պարտավոր են առաջնորդվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, միջազգային իրավունքի նորմերով և սկզբունքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերով, որոնք վավերացվելուց կամ հաստատվելուց հետո դառնում են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մաս): Քաղաքացիական ծառայողները պարտավոր են կատարել իրենց լիազորությունները միայն պետական այն մարմնում, որում նրանք զբաղեցնում են պետական պաշտոն, իրենց իրավասությունների շրջանակներում, իսկ դրանք ամրագրված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Այդ ակտերի համակարգում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն օժտված է գերակայությամբ, որի ուժով էլ այդ ոլորտի կարգավորմանը նվիրված մյուս իրավական ակտերը չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, իսկ նման հակասության դեպքում գործում է սահմանադրաիրավական նորմը,

2) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների առաջնահերթությունը, որի հիմքում դրված է այն գաղափարը, որ իրավունքներ և ազատություններ ունենալն ամրապնդում է անհատի հնարավորությունները՝ լինելու ինքնուրույն, կարողանալու ինքնահաստատվել հասարակության մեջ: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ մարդը, նրա արժանապատ-

վությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրացման կառուցակարգը (մեխանիզմը) գործում է անմիջականորեն. այսինքն, եթե մարդն առաջնորդվում է դրանցով, ապա նրա պահվածքը դիտվում է իրավաչափ, և նման պարագայում, բացի սահմանադրական ամրագրումից, նրա գործունեության լրացուցիչ վավերապայմաններ չեն պահանջվում: Այս սկզբունքի գործառնման պայմաններում քաղաքացիական ծառայողները պետք է նպաստեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրականացմանը և պաշտպանությանը,

3) քաղաքացիական ծառայության կայունության սկզբունքը, որի համաձայն՝ այդ ծառայությունը ձևավորվում և գործում է օրենքի հիման վրա և կախված չէ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխություններից: Այսպես՝ քաղաքացիական ծառայության կայունությունը դրսևորվում է քաղաքական ուժերի հարաբերակցության ամեն տեսակի փոփոխության նկատմամբ, օրինակ՝ ընտրությունների, հանրաքվեների, հրաժարականների արդյունքում հանրային-ծառայողական հարաբերությունների երաշխավորված անկախությամբ և ծառայողների անփոփոխելիությամբ,

4) քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մատչելիության սկզբունքը, որն իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության 30.2 և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածներում: Համաձայն ՀՀ Սահմանադրության 30.2 հոդվածի՝ քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք: Հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի

11-րդ հոդվածում արդեն ամրագրված է հետևյալ դրույթը. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթունից»։ Այս սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ պետական և համայնքային պաշտոն կարող են զբաղեցնել այն քաղաքացիները, որոնք ունեն տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված մասնագիտական գիտելիքներ (մասնագիտական պատրաստվածություն), ինչպես նաև աշխատանքային որոշակի ունակություններ (ֆիզիկական, մտավոր, ինչպես նաև փորձառության և այլն)։ Այդ պահանջները, բացառությամբ տարիքային, առողջական և նման այլ սահմանափակումների, անհատական են և առանձնահատուկ հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի դեպքում³։

Քաղաքացիական ծառայության կազմակերպական սկզբունքները դրսևորվում են պետական ապարատի և նրա առանձին օղակների ձևավորման և գործունեության կառուցակարգում։ Այդ սկզբունքներն են՝

1) քաղաքացիական ծառայության իրավական և կազմակերպական հիմքերի, ինչպես նաև քաղաքացիական ծառայության կազմակերպման գործում օրենսդրական ամրագրման միասնականությունը։ Այս սկզբունքի հիմնական պահանջները միասնական են բոլոր պետական մարմիններում իրականացվող քաղաքացիական ծառայության նկատմամբ։ Նշված սկզբունքն ամրապնդում է պետական ծառայության անկախությունն իշխանության մարմինների համակարգի կառուցվածքային և այլ ստորաբաժանումներից։ Հիմնական պահանջների միասնականությունը գործում է համակարգային կարգավորման բնագավառում և պայմանավորված է պետական պաշտոնյալի կարգավիճակով, փոխադարձ կապերի բնույ-

թով ու պետական ծառայության ինստիտուտի բոլոր տարրերի կանոնակարգման գործընթացով։ Պետական ծառայության իրավական և կազմակերպական հիմքերի միասնականության սկզբունքն ստեղծում է հավասար հնարավորություններ պետական ծառայության պաշտոնական իրավունքների և պարտականությունների իրականացման բնագավառում, ապահովում է ամուր արդարության, բարձր բարոյականության մթնոլորտ, ինչպես նաև ծառայողական գործառույթի որակյալ իրականացում պետական մարմիններում,

2) քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության փոխադարձ կապվածությունը։ Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, 4-րդ մաս)։ Համայնքային ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքներով։ Քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության փոխադարձ կապվածությունը պայմանավորված է՝

ա) քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության պաշտոններում հիմնական դասային պահանջների միասնականությամբ,

բ) քաղաքացիական և համայնքային ծառայողների մասնագիտական պատրաստվածության, վերապատրաստման և դասի բարձրացման պահանջների միասնականությամբ,

գ) քաղաքացիական ծառայության ստաժի՝ որպես համայնքային ծառայության ստաժի և հակառակի հաշվարկմամբ,

դ) քաղաքացիական և համայնքային ծառայության վարձատրության, սոցիալական և այլ երաշխիքների միասնականությամբ։

3) Քաղաքացիական ծառայողի գործունեության հրապարակայնության և հասարակական վերահսկողությանը նրա հասանելիության, հասարակության օբյեկտիվ իրազեկման

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010. Էջ 353:

ապահովման սկզբունքը դրսևորվում է քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև հասարակության համար քաղաքացիական ծառայության մասին իրավական ակտերի, հանրային իշխանության մարմինների ընթացիկ գործունեության, ընդունած որոշումների հասանելիության, այդ մարմինների կողմից հասարակական կարծիքը մշտապես հաշվի առնելու գործընթացներում: Քաղաքացիական ծառայողների գործունեության վերահսկելիությունը, հաշվետու լինելը պայմանավորված են նախ՝ պետական ծառայության համակարգի առկայությամբ, առանց որի ժամանակակից պետությունում անհնարին է ապահովել միասնական քաղաքականություն և հասարակության առջև դրված որևէ խնդրի արդյունավետ լուծում: Այդ համակարգը կառուցված է ուղղահայաց և հորիզոնական (իշխանության կենտրոնացման և ապակենտրոնացման) սկզբունքներով, պետաիշխանական միևնույն համակարգի (օրինակ՝ գործադիր իշխանության) շրջանակներում, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ ենթադրելով ստորադաս մարմնի կողմից վերադաս մարմնի որոշումների պարտադիր կատարում և վերջինիս առջև հաշվետու լինելը: Այդ սկզբունքով են կառուցված նաև ծառայողական հարաբերությունները պետական և համայնքային ծառայության ցանկացած մարմնում՝ այն նորմատիվ և գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան, որոնցով նախատեսված են այդ հարաբերությունների կարգավորման եղանակներն ու սկզբունքները, պաշտոնական իրավունքների և պարտականությունների շրջանակը և այլն:

4) Քաղաքացիական ծառայողի արհեստավարժության և ձեռնահասության սկզբունքը. քաղաքացիական ծառայողների արհեստավարժությունը, իրավական և սոցիալական պաշտպանվածությունը, պատասխանատվությունը ենթադրում են ծառայողների կողմից պաշտոնական պարտականությունների կատարման խնդրում մասնագիտական պահանջվող մակարդակ և պատրաստվածություն, ծառայության ողջ ընթացքում մասնագիտական գիտելիքների և հմտությունների մշտական կատա-

րելագործում: Այդ գործընթացն ապահովվում է քաղաքացիական ծառայության ոլորտում իրականացվող վերապատրաստման դասընթացների միջոցով և վերահսկվում պարբերաբար իրականացվող ատեստավորման միջոցով:

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն քաղաքացիական ծառայողների ատեստավորումը զբաղեցրած պաշտոնին քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանության որոշումն է⁴, իսկ քաղաքացիական ծառայողների վերապատրաստումը՝ քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումը⁵: Ըստ որում, յուրաքանչյուր տարի համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման: Քաղաքացիական ծառայողի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ, իսկ արտահերթ ատեստավորումը՝ հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո: Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը կազմակերպում և համակարգում է քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ համագործակցելով համապատասխան մարմինների հետ: Յուրաքանչյուր քաղաքացիական ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման, որն անցկացվում է նաև քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ քաղաքացիական ծառայողի կամ աշխատակազմի ղեկավարի նախաձեռնությամբ: Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումն անցկացվում է աշխատակազմի ղեկավարի հայտի հիման վրա՝ քաղաքացիական ծառայության խորհրդի հաստատած ծրագրերով,

⁴ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, 1-ին մաս, թ) կետ:

⁵ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, 1-ին մաս, ժ) կետ:

5) Քաղաքացիական ծառայողների քաղաքական զսպվածության և ոչ իրավական միջամտությունից նրանց պաշտպանվածության սկզբունքը՝ կապված նրանց մասնագիտական ծառայողական գործունեության հետ, վերաբերում է ծառայողի պաշտպանվածությանը ինչպես պետական իշխանության մարմնից և պաշտոնատար անձանցից, այնպես էլ ֆիզիկական և իրավաբանական անձանցից:

Համաձայն նշված սկզբունքի՝ պետական իշխանության մարմիններում արգելված է կուսակցությունների գործունեությունը, և այդ մարմինների պաշտոնատար անձինք իրենց գործառույթների իրականացման հարցում իրավունք չունեն առաջնորդվելու կուսակցական որոշումներով, որն իր հերթին ենթադրում է պետական ծառայողների քաղաքականապես անկողմնակալ, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան գործունեություն: Բացի դրանից, քաղաքացիական ծառայության պաշտոնատար անձանց համար օրենքով նախատեսված են իրավական և սոցիալական մի շարք երաշխիքներ՝ ապահովելու համար նրանց անբասիր գործունեությունն ամեն տեսակ անօրինական միջամտությունից, ազդեցությունից, երաշխավորելով նաև կատարված աշխատանքի դիմաց համապատասխան վարձատրություն, հանգստի կազմակերպում, բժշկական և այլ սպասարկում, ինչպես նաև արտոնություններ՝ պայմանավորված կատարվող աշխատանքի առանձնահատկությամբ:

Քաղաքացիական ծառայությունը կարգավորող օրենքներով պաշտոնատար անձանց նկատմամբ նախատեսված է կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառում՝ ծառայողական պարտականությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքերում: Իսկ զանցանքի կամ հանցագործության հատկանիշների առկայության դեպքերում քաղաքացիական ծառայողները ենթակա են վարչական կամ քրեական պատասխանատվության:

Պետական ծառայության օժանդակ սկզբունքներն ամրագրված են տարբեր նորմատիվ-իրավական ակտերում: Այս սկզբունքներից հատկապես կարելի է առանձնացնել՝

- պետական կառավարման օպտիմալու-

թյան (բարենպաստության) սկզբունքը, որն իր մեջ ներառում է կառավարման իրականացումը և կառավարվող ենթահամակարգերը,

- խելամիտ կառավարման սկզբունքը, որի ընդհանուր նորմն այն գաղափարն է, ըստ որի որոշակի ոլորտի կառավարումն իրականացվում է անմիջական գործող 3-7 կառավարիչների կողմից,
- լիազորությունների պատվիրակման սկզբունքը, ըստ որի կառավարիչը կամ բարձրագույն մարմինն իր գործառույթների որոշակի մաս տալիս է մեկ այլ մարմնի՝ առանց ակտիվ միջամտելու նրա գործունեության հետագա ընթացքին,
- համապատասխանության սկզբունքը, որն ունի 2 կողմ. մի կողմից աշխատողը պետք է համապատասխանի առաջադրված պաշտոնին, իսկ մյուս կողմից, հանձնարարված աշխատանքը պետք է համապատասխանի այն իրականացնողի մտավոր և ֆիզիկական հնարավորություններին,
- բացակայության մեխանիկական նկատման սկզբունք, որի համաձայն բացակայող աշխատողը պետք է նկատվի որպես մեխանիկորեն գործող ծառայողական պաշտոնական կառույցում և նրա բացակայությունը պետք է կարգավորվի արդեն իսկ գործող մեխանիզմի հիման վրա,
- առաջնային ղեկավարի սկզբունքը, սահմանափակված նրանով, որ աշխատանքի իրականացման անմիջական հսկողությունը պետք է լինի առաջին ղեկավարի կողմից, այնպես, որ միայն նա իրավունք և հնարավորություն ունենա որոշել (լուծել) կամ մերժել (ժխտել) կոնկրետ հարցը,
- միանձնյա ղեկավարման սկզբունքը, որի ներքո հասկացվում է, որ հրամանը պետք է ստացվի միայն մեկ ղեկավարի կողմից,
- կազմակերպված կառույցի արդյունավետության սկզբունքը, այսինքն՝ կառավարումն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ ծառայողն ի վիճակի է իր

առջև դրված խնդիրները լուծել աշխատանքի և ռեսուրսների նվազագույն ծախսման միջոցով:

Քաղաքացիական ծառայության սկզբունքները հիմնական պահանջներ են, որոնցով պետք է առաջնորդվի քաղաքացիական ծառայողն իր մասնագիտական գործունեության ընթացքում: Սահմանադրական սկզբունքները հստակեցվում են հետագա օրենսդրական ակտերում: Կազմակերպական սկզբունքները սահմանում են պետական ծառայության, պետական ապարատի և նրա առանձին կառույցների կառավարչական աշխատանքի բաժանման, պետական մարմիններում արդյունավետ վարչական գործունեության ամրապնդման և իրականացման կառուցակարգերը, իսկ օժանդակ սկզբունքները մասնավորեցնում են կառավարչական հարաբերությունների կազմակերպումը:

Թվարկված սկզբունքներից օրենսդրորեն ամրագրված են սահմանադրական և կազմակերպական սկզբունքները, մինչդեռ, մեր կարծիքով, անհրաժեշտություն կա օրենսդրական ամրագրում տալ նաև օժանդակ սկզբունքներից որոշներին, հատկապես խելամիտ կառավարման և քաղաքացիական ծառայողի ծառայողական գործունեության արդյունավետության բարձրացման սկզբունքները:

Կարծում ենք նաև, որ ճիշտ կլինի հետագայում քաղաքացիական ծառայության ոլորտի որոշ սկզբունքներ ամրագրել առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերում, որոնք կպարունակեն որոշակի հստակ կառուցակարգեր և ընթացակարգեր, այդ թվում՝ դրանք ապահովող սկզբունքներ, որոնք ուղղված կլինեն ոլորտի առավել արդյունավետ իրականացմանը: Նման ճանապարհով են ընթացել զարգացած իրավական համակարգեր ունեցող երկրները: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում այդ ոլորտը կարգավորվում է սահմանադրությամբ, համապատասխան օրենքներով, նախագահի հրամանագրերով, կառավարության որոշումներով, ՌԴ սուբյեկտների սահ-

մանադրություններով, օրենքներով և այլ իրավական ակտերով:

Քաղաքացիական ծառայությունը մեծ դեր ունի պետության համար Սահմանադրությամբ ամրագրված նպատակների իրականացման խնդրում և պատասխանատվություն է կրում ժողովրդավարական կայունության պահպանման և իրավական պետության սկզբունքների ապահովման գործում, ապահովում է քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի իրականացումը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է խթանել քաղաքացիական ծառայողների քաղաքացիական ակտիվությունը, որը հնարավորություն կտա անձի մոտ բարձրացնել անձնական որակների և կառավարչական հմտությունների կիրառման ձգտումը: Նման պայմաններում հնարավոր կլինի լուծել «քաղաքացիական ծառայության գործող համակարգը պետության և հասարակության շահերին համապատասխանեցնելու» խնդիրը, ինչը կբարձրացնի քաղաքացիական ծառայության համակարգի դերն ու նշանակությունը հասարակական ընկալման մեջ:

Ի վերջո, քաղաքացիական ծառայության սկզբունքների շարքում պետք է ամրապնդել «քաղաքացիական ծառայողի՝ հասարակությանը ծառայելու» գաղափարը, որը պետք է լինի քաղաքացիական ծառայողի մասնագիտական բարոյականության բարձրագույն աստիճանը: Հասարակությանը ծառայելու հիմնախնդիրն առաջնային դեր ունի արդյունավետ քաղաքացիական ծառայություն ունենալու համար:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիական ծառայությունը պետք է ունենա ժամանակին համահունչ արժեքային համակարգ: Արդյունքում ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների համատեքստում պետք է ճիշտ սահմանվեն այդ արժեքները, որպեսզի հնարավոր լինի քաղաքացիական ծառայությունը դարձնել մասնագիտական, ապաքաղաքականացված և սոցիալապես կողմնորոշված, իսկ քաղաքացիական ծառայողների վարքը՝ կանխատեսելի:

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԺԻՐԵՆԿՈ

Քաղաքական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցորդ

**ՓՈՒՍԱԴԱՐՁ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ
ԱՄՊԵԿՏՆԵՐԸ**

Պատասխանատվության և կողմերի փոխադարձ պատասխանատվության հարցերին դեռ հնագույն ժամանակներից լուրջ ուշադրություն է հատկացվել: Պատասխանատվության գաղափարը փիլիսոփաների և մտածողների կողմից, մասնավորապես, դիտարկվում էր գիտության տարբեր ուղղությունների պրիզմայով: Պատասխանատվությունը ներկայացվում էր և՛ որպես քաղաքական-փիլիսոփայական, և՛ որպես բարոյական, ինչպես նաև որպես իրավական երևույթ, որը սերտ կապված է այնպիսի կատեգորիաների հետ, ինչպիսին են արդարությունը, հավասարությունը, պարտավորությունը, պարտքը, իրավունքը, ազատությունը և այլն:

Տարբեր պատմական փուլերում և ներկայումս պատասխանատվության և փոխադարձ պատասխանատվության մասին տեսակետներն արտացոլվել են շատ գաղափարներում, տեսություններում, հետազոտություններում, գիտական աշխատություններում, մատնացույց անելով, որ անհրաժեշտ է ներառել համընդհանուր պատասխանատվության սկզբունքը (Սոլոն), փոխադարձ պատասխանատվության կապը պետաիրավական հարցադրման հետ (Մ.Վ.Տոկանա, Ն.Ա.Վլասենկո, Ս.Բ.Պոլյակով, Բ.Ս. Էբզեև, Ա.Գ.Բերեժնով), անհատական և կոլեկտիվ պատասխանատվության չափերի հարաբերակցությունը (Ա.Վ.Պրոկոֆև), պետությունների միջազգային-իրավական պատասխանատվության քաղաքական և նյութական տեսակները (Կ.Ա.Բեկյաշև, Գ.Ի.Տունկին և Դ.Բ.Լևին) և այլն:

«Erga omnes» պատասխանատվության առաջացումը որպես erga omnes պարտականությունների խախտման ծնունդ (բոլորի միջև, այսինքն, բոլոր պետությունների հետ կապված),

միջազգային պատասխանատվության բաշխումը միջազգային իրավունքում և հատուկ պատասխանատվության սահմանումն այնպիսի հանցագործությունների դեպքում, ինչպիսիք են ցեղասպանությունը, շրջակա միջավայրի ոչնչացումը (Ի.Ի.Լուկաշուկ), սպառնալիքների գլոբալիզացիան ժամանակակից աշխարհում և սրա հետ կապված պետությունների պատասխանատվության աստիճանի աճն ապագա սերունդներին հանդեպ, պետությունների կողմից հոչակված և արտաքին քաղաքականության մեջ հաճախ օգտագործվող (հատկապես պատժամիջոցների սահմանման դեպքում) փոխադարձության սկզբունքը հրատապ են դարձնում փոխադարձ պատասխանատվության համապարփակ ուսումնասիրության անհրաժեշտությունը, այդ թվում, կապված քաղաքական որոշումների կատարումը (որպես միջազգային հարաբերությունների որոշակի ձևաչափի):

Տարբեր գիտական ուղղությունների շրջանակներում պատասխանատվությունը ներկայացված է ոչ միանշանակ, ինչպես նաև տարբերվում են և հաճախ փոխադարձ չեն հաշվի առնվում հատկանշվող հասկացության որոշակիությունը: Փիլիսոփայական իմաստով, օրինակ, պատասխանատվությունը ներկայացված է որպես «ինչ-որ մեկի դիմաց պատասխանատվություն ունենալու» եղանակավորություն և այն կապված է այնպիսի կատեգորիաների հետ, ինչպիսիք են ազատությունը և պարտքը¹: Վ.Պ. Տուգարինովը նշում է, որ «պատասխանատվությունն անձի ունակությունն է կանխատեսելու իր գործողության արդյունքները և սահմանել, թե այն ինչ օգուտ կամ վնաս կբերի հասարակությանը²: Քաղաքականության մեջ պատասխանատվությունը կապակցված է

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 89 2015

¹ Տե՛ս «Новая философская энциклопедия в четырех томах». Руководители проекта В.С. Степин, Г.Ю. Семигин. Том третий, Н-С, Москва «Мысль» 2001, с.172.

«քաղաքականություն-բարոյականություն» հասկացության հետ, հետազոտողները գործածում են այն որպես բարդ անձնական որակների և բարոյական կերպարի համալրում ունենալը պետական իշխանության նկատմամբ: Փոխադարձ պատասխանատվության իրավական հասկացությունը նշանակում է իրավախախտի համար բացասական հետևանքների առաջացում, այսինքն տեղի է ունենում «պատասխանատվություն ինչ-որ բանի համար»: Ըստ Վ.Ի.Դալի, «պատասխանատվությունը» առաջացել է «պատասխանել» բայից (տալ պատասխան, լուր տալ և այլն)³: Դ.Ն.Ուշակովի խմբագրության «Ռուսաց լեզվի բացատրական բառարանում» պատասխանատվությունը ներկայացված է որպես մի իրավիճակ, երբ անձը, ով կատարում է ցանկացած աշխատանք, պարտավոր է լիարժեք հաշվետվություն տալ իր գործողությունների համար և վերցնել մեղքն իր վրա բոլոր հետևանքների համար, որոնք կարող են առաջանալ հանձնարարված գործի ավարտին, ինչ-որ պարտավորություններ, պարտականություններ իրականացնելիս⁴: Պարտավորության նմանատիպ մեկնաբանություն հանդիպում է Ս.Ի. Օժեգովի «Ռուսաց լեզվի բառարանում»՝ պատասխանատվություն-անհրաժեշտություն, որևէ մեկին հաշվետվություն տալու պարտավորություն իր գործողությունների և արարքների համար⁵:

Վերջին ուսումնասիրություններում հատկապես պատասխանատվության և փոխադարձ պատասխանատվության իրավական հասկացությանն է մեծ ուշադրություն դարձվում, ինչպես ներքին, այնպես էլ միջպետական հարաբերությունների ոլորտում: Այսպես, օրինակ, հետազոտողների կողմից ընդգծված քաղաքական պատասխանատվությունը, անկախ դրա առաջացման առանձնահատկությունից, - «ոչ միայն հանցավոր գործողությունների դեպքում, այլև

քաղաքական հարցերում անհմտության, չմտածվածության դեպքում» (Ի.Ն.Սենյակին), «վստահության մանդատին գործունեության ոչ համապատասխանության համար, որը արտահայտված է պետական մարմինների և պաշտոնատար անձանց անկարողությամբ քաղաքականություն մշակելիս, կայացնելու և իրականացնելու որոշումներ մարդկանց առավելագույն օգուտ տալու համար» (Վ.Ն.Սավին) և այլն,- այսինքն, այն երևույթների համար, որոնք ակնհայտ դժվարություններ են առաջացնում իրավական տեսանկյունից դրանց սահմանելու դեպքում,- դիտարկվում է բացառապես բացասական հետևանքների տեսանկյունից:

Նշենք նաև, որ պետությունների միջև հարաբերություններում շարունակում է որոշիչ ազդեցություն ունենալ մարդկային գործոնը՝ քաղաքական գործիչի ինքնությունը, նրա բարոյական կերպարը, քաղաքական կշիռը, պետության հեղինակությունը, նրա տեղը միջազգային ասպարեզում, ազդեցություն ունենալը, իր դիրքերը և նպատակները պաշտպանելու ունակությունը, շատ դեպքերում ոչ ակնհայտ, այլ, օրինակ, «ժողովրդավարության» և «մարդու իրավունքների», «սեփական քաղաքացիների պաշտպանության» պարտավորության գաղափարների տակ քողարկված և այլն: Այսպիսով, ակնհայտ է ուսումնասիրվող երևույթի ոչ իրավական կողմի առկայությունը, որի հաշվի չառնված լինելը ստեղծում է խոչընդոտ պատասխանատվության և փոխադարձ պատասխանատվության համալիր հասկանալու համար:

Այս խնդիրը մասամբ ստացել է որոշակի լուսաբանում իրավական պատասխանատվության դրական և բացասական հայեցակարգում (Ի.Ն.Սենյակին, Վ.Ն.Սավին, Վ.Ս.Ներսեսյանց, Հ.Խ.Մակուն, Վ.Կ.Բաբան և այլն)⁶: Գիտնականների տեսակետներին համաձայն, դրական

² Ств Духно Н.А., Ивакин В.И., “Понятие и виды юридической ответственности” // Государство и право. 06-01-2000.(GIP-No.006).с.12. Электронный ресурс: <http://www.ebiblioteka.ru/browse/doc/2817103>.

³ Ств Даль В.И., “Толковый словарь живого великорусского языка. Т. 2” М., 1994. с. 1863.

⁴ Ств <http://ushakovdictionary.ru/word.php?wordid=41632>.

⁵ Ств <http://ozhegov.info/slovar/?q=%D0%BE%D1%82%D0%B2%D0%B5%D1%82%D1%81%D1%82%D0%B2%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C>.

⁶ Ств “Теория государства и права: Курс лекций” Под ред. Матузова Н.И., Малько А.В., -2-е изд., перераб. и доп. - М.: Юрист, 2001. с. 776, Савин В. Н., “Ответственность государственной власти перед обществом” // Государство и право. 2000. N 12, “Проблемы общей теории права и государства: Учебник для вузов” / Под общ. ред. академика РАН, д. ю. н., проф. В. С. Нерсесянца. - М.: Норма, 2004. с. 832, Макуев Р.Х., “Теория государства и права. Учебник. 2-е изд.” М.: Изд-во “Норма”, 2010, “Теория государства и права: Учебник” / Под ред. В.К.Бабаева. - М.: Юрист, 2003. с.– 592.

պատասխանատվությունը հանդես է գալիս որպես պատասխանատվություն հետագա գործողությունների համար և դիտարկվում է որպես իրավական դաշտում սեփական վարքի, դրա հետևանքների և սոցիալական նշանակության գիտակցում, որպես պարտքի զգացում (Վ.Ս.Ներսեսյանց), որպես պատասխանատվություն իր պարտականությունները պատշաճ կատարելու (Ռ.Խ.Մակուն), որպես պարտականություն իր նպատակին հասնելու համար համապատասխան միջոցներ ձեռնարկելու (Ի.Ի.Լուկաշուկ) և այլն: Այնուամենայնիվ, հետազոտողները տարբեր ձևերով են գնահատում իրավական պատասխանատվության դրական նշանակությունը: Ոմանք համարում են այն անհրաժեշտ (Ս.Բ.Պոլյակով), մյուսները՝ քիչ հավանական դրա դիտարկման հնարավորությունը (Վ.Կ.Բաբակ):

Փոխադարձ պատասխանատվությունը, որը ներառում է սուբյեկտիվ և օբյեկտիվ բաղադրիչներ, ավելի լայն հասկանալու համար տվյալ աշխատությունում առաջարկում ենք լրացնել առկա հետազոտությունները, կիրառելով Կ.Ուիլբերի կողմից⁷ առաջարկված ինտեգրալային մոտեցումը, որը մշակվում է ինչպես հայրենական, այնպես էլ արևմտյան գիտնականների կողմից, և որը հանդիսանում է դիտարկվող բազմաասպեկտային քաղաքական-իրավական և բարոյական երևույթի եղելության բացահայտման հնարավոր տարբերակներից մեկը:

Ինտեգրալային մոտեցման դիրքորոշումից ցանկացած երևույթ հետազոտվում է սուբյեկտիվ և օբյեկտիվ, անհատական և կոլեկտիվ, ներքին և արտաքին կողմերից, այնպիսի հասկացությունների միջոցով, ինչպիսիք են՝ «սուբյեկտիվ Ես-ը», «օբյեկտիվ Ես-ը», «օբյեկտիվ Մենք-ը» և «սուբյեկտիվ Մենք-ը»: Դրա հետ մեկտեղ ամենաընդհանուր իմաստով այս հասկացությունների տակ դիտվում է հետևյալը. էական բովանդակությունը, գիտակցությունը, կոնկրետ սուբյեկտի մտադրությունը («սուբյեկտիվ Ես-ը»), նրա արտաքին կողմը, ձևը, վարքը («օբյեկտիվ Ես-ը»), ցուցաբերած գործողությու-

նը, գործունեությունը, ֆունկցիոնալ համակարգը (որպես անհատների ամբողջություն, որոնց համագործակցությունը օբյեկտիվորեն գրանցվում է, անհատների կողմից գիտակցվում է և իրագործվում է ակնհայտ նպատակով⁸), սոցիալական ոլորտը («օբյեկտիվ Մենք-ը»), չցուցաբերված փոխհարաբերությունը, գիտակցությունների փոխհարաբերությունը, մշակութային ոլորտը («սուբյեկտիվ Մենք-ը»):

Օբյեկտիվության հարթությունում ընդունվում են օրենքներ որպես իրավական պետության հիմք: Սուբյեկտիվության հարթությունում ձևավորվում են հասարակության բարոյական նորմերը, դրա բարոյականությունը: Եթե բարոյականության համակարգը խախտվում է, ապա անհատում կամ ցանկացած մակարդակի սոցիալական համակարգում փլուզվում է այդ անձի կամ համակարգի ներքին բովանդակությունը և մնում է միայն արտաքին ձևը: Այս դեպքում հազիվ թե օրենքները կարողանան փրկել մարդուն և ընդհանուր առմամբ համակարգին ոչնչացումից:

Փոխադարձ պատասխանատվության հետազոտման կիրառմամբ վերը նշված հասկացությունները ձեռք են բերում կոնկրետ արտահայտություն: Այսպես, օրինակ, պետությունների ղեկավարները որոշակի բնագավառներում համագործակցության մասին միջազգային պայմանագրեր են կնքում, որոնք ենթադրում են նոր ինստիտուտների ստեղծում, իրավական դաշտի միասնականացում այդ պայմանագրի գործողությունը հեշտացնելու համար և այլն: «Սուբյեկտիվ Ես-ը» արտացոլում է պետությունների առաջնորդների մտադրությունները, որոնք դրված են պայմանագրի հիմքում: Այդ մտադրությունները թաքնված բնույթի են, դրանց չեն կարող գտնել սովորական օբյեկտիվ մեթոդներով (նույնիսկ միայն այն պատճառով, որ նախագահներին ընդունված չէ անցկացնել ստի դետեկտորի ընթացակարգով): Տվյալ փուլում որպես հավաստիության չափանիշ կարելի է ընդգծել ազնվությունը, օրինապահությունը, պարտաճանաչու-


⁷ Տես Уилбер К., “Краткая история всего” // Кен Уилбер; пер.с англ. С.В. Зубкова.– М.: АСТ: Астрель, 2006.– 476 [4] с.: ил.; Уилбер К., “Око духа: Интегральное видение для слегка свихнувшегося мира” / К.Уилбер/Пер. с англ. В.Самойлова под ред. А. Киселева. – М.: ООО «Издательство АСТ» и др., 2002. – 476. [4]с. – (Тексты трансперсональной психологии).

⁸ Տես մանրամասն՝ Непомнящий А.В., “Введение в интегральную антропологию. Ч.1: Методология знания и методологические основания человековедения: Учебное пособие” – Таганрог: Изд-во ТТИ ЮФУ, 2011. – 196 с. 48.

թյունը: Այստեղ կարող է նաև դրսևորվել պատասխանատվությունը (անձնական) իր փիլիսոփայական իմաստով և դրական առումով: Երկրորդ փուլում («օբյեկտիվ Ես-ը») այդ մտադրություններն արտահայտվում են որոշակի ձևով և վարքագծով: Կողմերը որոշում են համագործակցել ցանկացած ոլորտում: Բայց դրա համար պետք է ստեղծել որոշակի ֆունկցիոնալ համակարգ նպատակին հասնելու համար - համագործակցության («օբյեկտիվ Մենք-ը»), և նրանք կնքում են պայմանագիր: Այսպիսով, կողմերի միջև ստեղծվում է որոշակի իրավահարաբերություններ, ստեղծվում են սերտ կապեր - «իրավական պարտականություններ»: Պայմանագրում ֆիքսվում են պարտավորությունները և նպատակին հասնելու համար կողմերի անհրաժեշտ գործողությունները, սահմանվում է օրենսդրական դաշտը, որը կկանոնակարգի առաջացող իրավական հարաբերությունները, այդ թվում պատժամիջոցների համակարգը և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմը (իր բացասական իմաստով): Պայմանագրի կատարման ընթացաշրջանը, ըստ էության, առաջանում է չորրորդ փուլում («սուբյեկտիվ Մենք-ը»), որտեղ հստակ ցուցադրված է, թե կա արդյոք պայմանագրի կողմերի հավաքական գիտակցություն, արդյոք հասել են ընդհանուր նպատակին, արդյոք իրականացվում է համագործակցություն տվյալ ոլորտում, արդարացի է արդյոք դա: Եթե փուլերից ոչ մեկը չի ընդհատվում, այսինքն սուբյեկտների վարքագիծը արտացոլում է իրենց մտադրությունները, իսկ ֆունկցիոնալ համակարգի ստեղծումը նպատակ է հանդիսանում, ընդունված են արդյունավետ նորմեր և պայմանագրի իրականացման մեխանիզմ, ապա կողմերի ստանձնած պարտավորությունները կկատարվեն: Եվ միայն այդ դեպքում կարելի է խոսել փոխադարձ պատասխանատվության մասին: Փոխադարձ պատասխանատվություն չկա, եթե օղակներից թեկուզ մեկում սխալներ են թույլ տրվել:

Ինտեգրալային մոտեցման տեսանկյունից փոխադարձ պատասխանատվությունը (ինչպես ամեն ինչ այս աշխարհում), այսպիսով, հանդես է գալիս որպես բարդ, բազմակողմանի և բազմաշերտ երևույթ, որը կախված է սուբյեկտիվ և օբյեկտիվ բնույթի մի շարք գործոններից, որոնք հաճախ թաքնված ձևի են, և որին

հետազոտողը պետք է հատուկ ուշադրություն դարձնի (նկ. 1):



Նկար 1: Փոխադարձ պատասխանատվությունը և Կիլբերի ինտեգրալային մոտեցման տեսանկյունից

Բացի այդ, բոլոր հատվածների միջև նկատվում է սերտ կապ և փոխկախվածություն: Դրան կարելի է ակնհայտորեն հետևել նաև հայ-ռուսական հարաբերություններում: Այսպես, օրինակ՝ կողմերի համագործակցելու մտադրությունը, սերտ պատմական կապերով պայմանավորված, հանգեցնում է այս կամ այն ինտեգրացիոն կառույցների ստեղծմանը, որոնք նպաստում են փոխգործակցության զարգացման որոշակի սկզբունքների ձևավորմանը, որոնք ոչ միայն կախված են այդ հարաբերությունների առանձնահատկություններից, այլև ազդեցություն են թողնում դրանց հետագա զարգացման վրա և այլն:

Փոխադարձ պատասխանատվության համալիր (ինտեգրալային) ուսումնասիրությունը, ամբողջովին, ինչպես նաև հայ-ռուսական հարաբերություններում կիրառվող, կնպաստի ոչ միայն այս երևույթն ավելի լավ հասկանալուն, այլև կողմերի անպատասխանատու իրավիճակներն ավելի արդյունավետ հաղթահարելուն, ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը հաղթահարելուն, այլև փոխադարձ պատասխանատվության արժեքի աճող ըմբռնմանը փոխգործակցության տարբեր փուլերում:

Կարեն Բիշարյան

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետի տեղակալ, ի.գ.թ., դոցենտ

Նախաքննության ժամկետի հաշվարկման և երկարացման հիմնախնդիրները

Հոդվածը նվիրված է նախաքննության ժամկետի հաշվարկման և երկարացման տեսական և գործնական հիմնախնդիրների քննարկմանը: Դրանում մանրակրկիտ վերլուծվել են նախաքննության ժամկետի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած իրավակարգավորումները և գործնական այնպիսի հիմնախնդիրները, ինչպիսիք են՝ նախաքննության ժամկետի սկիզբը, ավարտը, կասեցումը, վերսկսումը և երկարացումը: Նախաքննության ժամկետի երկարացման հիմնախնդիրները քննարկվել են ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող իրավակարգավորումների վերլուծության համատեքստում:

Նախաքննության ժամկետի կասեցման հիմնախնդիրների վերլուծության արդյունքում հեղինակի կողմից հետևություն է արվում, որ քրեական գործի նյութերին տուժողի, քաղաքացիական հայցվորի և քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների կողմից ծանոթանալու ժամկետը ևս չպետք է մտնի նախաքննության ժամկետի մեջ, ուստի, առաջարկվում է ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 3-րդ մասում համապատասխան լրացում կատարել:

Վերլուծելով նախաքննության ժամկետի վերսկսման հիմնախնդիրները՝ հեղինակը եզրահանգում է անում, որ ՀՀ ՔԴՕ 260-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում նախաքննության ժամկետը վերսկսվում է քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին քննիչի կողմից որոշում կայացնելու, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ քննիչի որոշումը վերացնելու մասին դատախազի կողմից որոշում կայացնելու օրվանից: Բացի այդ, ըստ հեղինակի՝ ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածի 7-րդ մասում հիշատակված «գործի վարույթը նորոգելու մասին որոշում»-ը պետք է նույնացնել քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին դատախազի կողմից կայացված որոշմանը: Ուստի քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին դատախազի որոշման կայացման օրվանից է վերսկսվում նախաքննության ժամկետը:

Նախաքննության ժամկետի երկարացման կառուցակարգերի կատարելագործման նպատակով հեղինակն առաջարկում է ՀՀ ՔԴՕ 197-րդ հոդվածը լրացնել հետևյալ դրույթով. «Եթե դատախազը, քննարկելով քննության ժամկետը երկարացնելու մասին քննիչի որոշումը, գտնի, որ այն պատճառաբանված չէ և որոշմամբ առաջարկվող ժամկետը համարժեք չէ նախատեսվող դատավարական գործողությունների ծավալին, ապա, չհաստատելով քննիչի որոշումը, կայացնում է նախաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշում՝ նախաքննության ժամկետը երկարացնելով ողջամիտ ժամկետով»:

Բանալի բառեր. նախաքննության ժամկետ, սկիզբ, ավարտ, կասեցում, վերսկսում, երկարացում:

Карен Бишарян

Заместитель начальника управления расследования по особо важным делам Генеральной Прокуратуры РА, к.ю.н., доцент

Проблемы исчисления и продления срока предварительного следствия

Статья посвящена рассмотрению теоретических и практических проблем исчисления и продления срока предварительного следствия. В ней обстоятельно проанализированы правовые предписания Уголовно-процессуального кодекса РА, регулирующие отношения соблюдения и продления срока предварительного следствия. Проблемы продления срока предварительного следствия рассмотрены в контексте анализа предписаний проекта закона «О внесении изменений и дополнений в Уголовно-процессуальный кодекс Республики Армения».

В результате рассмотрения проблем приостановления срока предварительного следствия автор приходит к выводу о том, что в срок предварительного следствия не должна включаться время ознакомления с материалах уголовного дела потерпевшим, гражданским истцом, гражданский ответчиком или их представителями, предлагая внести соответствующие дополнения в ч. 3 ст. 197 УПК РА.

Рассматривая проблемы возобновления срока предварительного следствия, автор приходит к умозаключению, что в случаях, предусмотренных ч. 1 ст. 260 УПК РА срок предварительного следствия возобновляется со дня вынесения следователем постановления о возобновлении производства приостановленного уголовного дела, в случаях же, предусмотренных ч. 2 той же статьи – со дня вынесения прокурором постановления об отмене постановления следователя о приостановлении производства по уголовному делу. К тому же, по мнению автора, указанное в ч. 7 ст. 197 УПК РА «постановление о возобновлении производства по уголовному делу» следует отождествлять с постановлением прокурора об отмене постановления следователя о прекращении уголовного дела. Следовательно, срок предварительного следствия возобновляется со дня вынесения прокурором постановления об отмене постановления следователя о прекращении уголовного дела.

В целях усовершенствования механизмов продления срока предварительного следствия автор предлагает дополнить ст. 197 УПК РА следующим положением: «при рассмотрении ходатайства следователя о продлении срока предварительного следствия прокурор, расценивая ходатайство немотивированным, прокурор правомочен не утверждать ходатайство и вынести постановление о продлении срока предварительного следствия в разумные сроки».

Ключевые слова: срок предварительного следствия, начало, окончание, приостановление, возобновление, продление.

Karen Bisharyan

Deputy Head of the Department of Investigation for Particularly Important Cases
of the General Prosecutor's Office of the Republic of Armenia,
PhD in Laws, Associate Professor

Problems of Calculation and Extension of the Period of Preliminary Investigation

The article is devoted to theoretical and practical problems of calculation and extension of the period of preliminary investigation. It thoroughly analyzes legal prescriptions enshrined in the Criminal Procedure Code of the Republic of Armenia regarding the period of preliminary investigation, and practical issues such as the beginning, end, suspension, resumption and extension of preliminary investigation. The problems on extension of the preliminary investigation period are discussed in the context of the analysis of the regulations suggested by the draft law on «The amendments and supplements to the Criminal Procedure Code of the Republic of Armenia» received from the Ministry of Justice of RA.

As a result of examining the problems on the suspension of the preliminary investigation period, the author concludes that the period for getting familiar with the materials of criminal case by victim, civil plaintiff, civil respondent or their representatives should not be included in the preliminary investigation period. Hence the author suggests making appropriate amendments to the Part 3 of Article 197 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia.

Next by considering the problems of resumption of the period of the preliminary investigation, the author comes to the conclusion that in the cases specified in the Part 1 of Article 260 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia the preliminary investigation period is resumed from the date of the decision of the investigator on the resumption of the suspended criminal proceedings, and in the case provided for in part 2 of the same article – from the date of the prosecutor's decision on abolishing the investigator's decision on the suspension of criminal proceedings. Besides, according to the author, “the decision on the resumption of the proceedings” referred to in the Part 7 of Article 197 of Criminal Procedure Code of the Republic of Armenia, should be equated with the prosecutor's decision on abolishing the investigator's decision on termination of criminal case.

Finally, in order to improve the mechanisms for extending the preliminary investigation period, the author proposes to supplement the Article 197 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia with the following provision: in case the prosecutor, by discussing the decision of an investigator on extension of the preliminary investigation period, considers it not reasoned, and considers the term offered by the decision not proportional to the scope of the procedural actions, s/he does not approve the decision of investigator and makes a decision on extension of the preliminary investigation period by a reasonable term.

Keywords: preliminary investigation period, the beginning, the end, suspension, resumption, extension.

Պետրոս Մարտիրոսյան

ՀՀ Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ,
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի
քրեական իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի հայցորդ

Պատժի նպատակների հասկացության տեսական հիմնահարցերը քրեական իրավունքում

Սույն հոդվածը նվիրված է քրեական իրավունքում պատժի նպատակների հիմնահարցերի ուսումնասիրությանը: Հեղինակը պատժի նպատակների ուսումնասիրությունն իրականացրել է պատժի հասկացության բացահայտման ճանապարհով, քանի որ ցանկացած ինստիտուտի նպատակների համալիր ուսումնասիրություն իրականացնելու համար անհրաժեշտ է նախևառաջ անդրադառնալ տվյալ ինստիտուտի հասկացության ուսումնասիրությանը: Աշխատանքում, հեղինակն անդրադարձել և ուսումնասիրել է քրեական իրավունքի տեսությունում առկա բազմաթիվ հեղինակների կարծիքներ՝ պատժի հասկացության և դրանում նախատեսված չափանիշների վերաբերյալ, և արդյունքում՝ ներկայացրել է իր հեղինակային մոտեցումը՝ պատժի հասկացության պարտադիր չափանիշների վերաբերյալ, դրանց առանձին անդրադառնալու միջոցով:

Հեղինակը քննարկել է նաև պատժի նպատակների հասկացության օրենսդրական սահմանման անհրաժեշտության հարցը: Հատկանշական է նաև, որ հեղինակն անդրադարձել է քրեական պատժի նպատակների և ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրների համեմատության հարցին, ավելին՝ այդ համեմատությունն իրականացվել է նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգի լույսի ներքո:

Բանալի բառեր. քրեական պատժ, պատժի նպատակներ, քրեական օրենսգրքի խնդիրներ, քրեական պատժի հասկացության պարտադիր տեսական և օրենսդրական չափանիշներ, քրեական պատժի նպատակների տեսական հասկացություններ, ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգ:

Петрос Мартиросян

Старший прокурор прокуратуры Лорийской области РА,
соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального
права Российско-Армянского (Славянского) университета

Теоретические проблемы целей наказания в уголовном праве

Данная статья посвящена изучению основных вопросов целей наказания в уголовном праве. Изучение целей наказания автор осуществил путем выявления понятия наказания, так как для комплексного изучения любого института прежде всего надо исследовать понятие данного института. В работе автор изучил мнения многих авторов о существующем в уголовном праве понятия наказания, предусмотренных в нем критериях и в результате представил свой авторский подход к обязательным критериям понятия наказания посредством изучения их по отдельности.

Автор также обсудил вопрос необходимости законодательного определения понятия целей наказания. Характерно то, что автор сравнил цели уголовного наказания и задачи уголовного кодекса РА. Более того, это сравнение осуществлено также в свете концепций нового уголовного кодекса РА.

Ключевые слова: уголовное наказание, цели наказания, задачи уголовного кодекса, обязательные теоретические и законодательные критерии понятия уголовного наказания, теоретические понятия целей уголовного наказания, концепция нового уголовного кодекса РА.

Petros Martirosyan

Chief prosecutor in Lori Region Prosecutor's
Office of the Republic of Armenia,
Post-graduate student at the Department of criminal law
and criminal procedure law of
Russian-Armenian (Slavonic) University

Theoretical Issues of the Purposes of Punishment in Criminal Law

The main subject of this article is the study of the main issues of the purposes of punishment in criminal law. The author carries out a study of purposes of punishment by revealing the concept of punishment, because for a complex examination of purposes of any institution one should firstly explore the notion of the concerned institution.

In the article the author has referred to and studied the opinions of numerous authors about the notion of punishment in criminal law and the criteria foreseen in it. As a result the author has presented his own approach on the mandatory criteria of the notion of punishment by referring to each of them separately.

The author has also discussed the need for defining the purposes of punishment by legislation. It is significant that the author has compared the purposes of criminal punishment and the objectives of the Criminal Code of Armenia. Moreover, this comparison is carried out in the light of the concepts of the new Criminal Code of Armenia.

Keywords: criminal punishment, purposes of punishment, the objectives of the Criminal Code, the compulsory theoretical and legislative criteria for the concept of criminal punishment, mandatory theoretical and legislative criteria of the notion of criminal punishment, theoretical notions of the purposes of criminal punishment, the concept of the new Criminal Code of Armenia.

* * *

Արամ Վարդևանյան

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի քրեական իրավունքի
և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Սահմանադրականության հասկացությունը և դրա ընկալումը որպես իրավունքի հիմնարար սկզբունք

Տվյալ հոդվածի շրջանակներում հեղինակը, հաշվի առնելով մի շարք իրավագետների դիրքորոշումները, ներկայացրել է սահմանադրականության հասկացության և կարևորության վերաբերյալ իր մոտեցումը: Հեղինակը հատկապես կարևորել է այն մոտեցումը, որ սահմանադրականությունը պետք է դիտարկել և ընդունել ոչ թե որպես սահմանադրական իրավունքի կամ իրավունքի տեսության մի մաս, այլ որպես իրավունքի հիմնարար սկզբունք:

Բանալի բառեր. սահմանադրականություն, սահմանադրության գերակայություն, իրավունքի հիմնարար սկզբունք, սահմանադրական մշակույթ:

Арам Вардеванян

Советник председателя Конституционного суда РА,
Преподаватель кафедры уголовного права и уголовно-процессуального права Российско-армянского (славянского) университета,
кандидат юридических наук

Понятие конституционализма и его восприятие как фундаментального принципа права

В рамках данной научной статьи представлены мнения ряда авторов относительно понятия и значения конституционализма, после обобщения, которых автор представляет свою позицию. Автор в частности подчеркивает важность той позиции, согласно которой конституционализм надо рассматривать и принимать ни просто, как часть конституционного права или теории права, а как фундаментальный принцип права.

Ключевые слова: конституционализм, верховенство конституции, конституционная культура, фундаментальный принцип.

Aram Vardevanyan

Adviser to the President of the Constitutional Court of RA,
Lecturer at the Department of Criminal Law and Criminal
Procedural Law at the Russian-Armenian (Slavonic) University, Ph.D

The Definition of Constitutionalism and Its Perception as a Fundamental Principle of Law

The article presents the definition and importance of constitutionalism provided by numerous legal scholars, and after summarizing them, the Author introduces his own position regarding it. The Author gives

paramount importance to the position, according to which constitutionalism should be considered and accepted not as a part of constitutional law or the theory of law, but as a fundamental principal of law.

Keywords: constitutionalism, rule of constitution, fundamental principle of law, constitutional culture.

* * *

Արթուր Նազարեթյան

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ

Վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը

Սույն հոդվածը վերաբերում է վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգին: Դրանում վերլուծված են հայրենական և ռուս գիտնական իրավաբանների կարծիքները վճռաբեկ բողոքարկման ինստիտուտի իրականացման հիմքերի մասին, արված են հեղինակային մի շարք առաջարկներ վճռաբեկ դատարանում գործով վարույթի կասեցման հիմքերն ընդարձակելու և գործի քննությունը հետաձգելու մասին:

Անդրադարձ է կատարվել նաև գործի վճռաբեկ քննության սահմանների մասին:

Առաջարկ է արվել ընդլայնել վճռաբեկ բողոքի քննության սահմանները, և վճռաբեկ դատարանին իրավունք վերապահել օրինականության շահերից ելնելով՝ դուրս գալ վճռաբեկ բողոքի փաստարկների սահմաններից և գործը ստուգել ողջ ծավալով:

Բանալի բառեր. վճռաբեկ դատարան, վճռաբեկ բողոք, տնօրինչականության սկզբունք, քաղաքացիական դատավարություն, վարույթի կասեցում, գործի քննության հետաձգում, գործի քննության սահմաններ:

Артур Назаретян

Соискатель кафедры гражданского права и гражданско-процессуального права Российско-Армянского (Славянский) университета

Порядок рассмотрения дел в суде кассационный инстанции

Настоящая статья относится к порядку рассмотрения дел в суде кассационной инстанции. В нем проанализированы мнения отечественных и русских ученых юристов об основах осуществления института кассационного обжалования, сделан ряд авторских предложений о расширении основ приостановления производства по делу в суде кассационной инстанции и отложении рассмотрения дела. Сделана ссылка также о пределах рассмотрения дела в кассационной инстанции. Было сделано предложение, расширить пределы рассмотрения кассационной жалобы и кассационному суду предоставить право, исходя из интересов законности, выйти за пределы аргументов кассационной жалобы и дело проверить в полном объеме.

Ключевые слова: кассационный суд, кассационная жалоба, принцип диспозитивности, гражданское судопроизводство, приостановление производства, отложение рассмотрения дела, пределы рассмотрения дела.

Artur Nazaretyan

Post-graduate student at the Russian-Armenian (Slavonic) University

The Order of Examination of Cases in the Court of Cassation

This article refers to the order of examination of cases in the Court of Cassation. Here are analyzed the opinions of native and Russian legal scholars about the grounds of the implementation of the institute of the cassation appeal, also proposal is provided for on enlargening the grounds of suspending the proceedings and delaying the consideration of the case.

Reference has been also made to the boundaries of the case of the cassation examination. A proposal has

ՕՐԻՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 89 2015

been made to extend the boundaries of the cassation appeal, and taking account the interests of legality to entitle the Court of Cassation a right to get out of the boundaries of the cassation appeal arguments and check the case fully.

Keywords: Court of Cassation, cassation appeal, the principle of optionality, civil procedure, suspension of proceedings, delaying of the case examination, boundaries of the case examination.

* * *

Ավետիք Հարությունյան

ԼՂՀ Նախագահի աշխատակազմի անվտանգության խորհրդի
աշխատանքների ապահովման բաժնի գլխավոր մասնագետ,
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս

Հանրաքվեի ինստիտուտի կատարելագործման հիմնական ուղղությունները ԼՂՀ-ում

Գիտական հոդվածի շրջանակներում քննարկվում են ԼՂՀ-ում հանրաքվեի ինստիտուտի կատարելագործման հետ կապված հիմնահարցերը: Ուսումնասիրելով այլ երկրների Սահմանադրությունները՝ հեղինակն արձանագրում է, որ ԼՂՀ Սահմանադրությամբ նախատեսված չէ հանրաքվեի անցկացում ժողովրդական նախաձեռնությամբ: Հիմնախնդրի լուծման նպատակով առաջարկվում է Սահմանադրությամբ սահմանել հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 10 տոկոսից ոչ պակասի ստորագրությունների առկայության պահանջը:

Հանրաքվեի նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը ԼՂՀ Սահմանադրության բովանդակությանը համապատասխանեցնելու նպատակով առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության մեջ կատարել որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխությունների կատարման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակն ընդլայնել՝ նման հնարավորություն տալով նաև ժողովրդական նախաձեռնությամբ անցկացմանը, օրենսդրական հանրաքվեի սուբյեկտների շարքում ներառել Նախագահին և ժողովրդին, իսկ պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ անցկացվող հանրաքվեի սուբյեկտների շարքին դասել նաև ժողովրդին:

Բանալի բառեր. հանրաքվե, ժողովրդաիշխանություն, հանրաքվեի անցկացման նախաձեռնության սուբյեկտ, ժողովրդական նախաձեռնությամբ հանրաքվե, օրենսդրական հանրաքվե, «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենք:

Аветик Арутюнян

Главный специалист отдела по обеспечению работ
Совета безопасности аппарата Президента НКР,
Преподаватель кафедры права АргУ

Основные направления совершенствования института референдума в НКР

В рамках данной научной статьи рассматриваются вопросы, связанные с совершенствованием института референдума в Нагорно-Карабахской Республике. Изучив Конституции других стран, Автор констатирует, что Конституцией НКР не предусмотрено проведение референдума по народной инициативе. Для решения проблемы предлагается установить Конституцией требование наличия подписей не менее 10 процентов граждан, обладающих правом участвовать в референдуме.

С целью приведения круга обладающих правом инициативы субъектов в соответствие с содержанием Конституции НКР предлагается произвести в Конституции НКР определённые изменения, в частности, расширить круг субъектов, обладающих правом принимать Конституцию или вносить в неё изменения, предоставив возможность также проведения референдума по народной инициативе, включить в ряды субъектов законодательного референдума Президента и народ, а к ряду субъектов референдума, проводимого в связи с вопросами, имеющими важное значение для государства, причислить также народ.

Ключевые слова: референдум, народовластие, субъект инициативы проведения референдума, референдум по народной инициативе, законодательный референдум, Закон НКР о референдуме.

Avetiq Harutyunyan

Desk Ensuring Activities of the NKR Security Council, Chief specialist,
The Office of the President of the NKR
Lecturer at the Chair of Law, ArSU

The main directions of the perfection of the institute of referendum in the NKR

In the framework of this academic article problems concerning with the perfection of the institute of referendum in the NKR are discussed. Examining Constitutions of other countries, the author substantiates that NKR Constitution does not provide the conduction of the referendum on popular initiative. To solve the problem it is suggested to define by the Constitution the requirement of the availability of no less than 10% from the required number of voters' signatures.

In order to conform the framework of the subjects having the right to initiate a referendum to the Constitution, it is proposed to make some amendments in the Constitution of the NKR, especially to broaden the framework of the subjects having the right to initiate a referendum and to give such an opportunity to the People (referendum on popular initiative), to include the President and the People (popular referendum) as the subjects of the legislative referendum, and to include the People as a subject in relation to referendums conducted on the issues of special significance for the State.

Keywords: Referendum, democracy, subject of the initiation of a referendum, referendum on popular initiative, legislative referendum, the Law of the NKR on referendum.

* * *

Արմեն Հարությունյան

ՀՀ արդարադատության նախարարության,
դատական ակտերի հարկադիր կատարումն
ապահովող ծառայության
Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի հայցորդ

Դատական ակտերի հարկադիր կատարման իրավական հիմքերի բարելավման արդի հարցադրումներ

Դատական ակտերը, ինչպես նաև վարչական մարմինների հանրային իրավական դրամական պահանջները, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով դարձել են անբողոքարկելի, Հայաստանի Հանրապետությունում հարկադիր կարգով իրականացվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կազմում գործող դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

Հարկադիր կատարման ենթակա վերոնշյալ ակտերի կատարումը ապահովվում է վարչական վարույթի հատուկ տեսակի՝ կատարողական վարույթի միջոցով: Որոշ հեղինակների կարծիքով, «կատարողական վարույթը» իրենից ներկայացնում է իրավունքի համալիր համակարգի նոր ձևավորվող ինքնուրույն ճյուղերից մեկի՝ կատարողական իրավունքի կարգավորման առարկան:

Սույն հոդվածում հեղինակն ուսումնասիրել և ներկայացրել է դատական ակտերի հարկադիր կատարման իրավական հիմքերի բարելավման արդի հարցադրումները և հիմքում ունենալով կատարողական վարույթի զարգացման տեսլականը, առաջարկել է իրավագիտության ժամանակակից պահանջներին համապատասխան ստեղծել անհրաժեշտ կառուցակարգեր և կիրառել նոր վարչական գործիքներ:

Բանալի բառեր. կատարողական վարույթ, վարչական վարույթ, վարչական ակտ, վարչական իրավախախտում:

Армен Арутюнян

Начальник отдела Ачапняк и Давидашен города Еревана
Службы принудительного исполнения судебных актов
Министерства юстиции РА,
Соискатель Кафедры юриспруденции
Академии государственного управления РА

**Несколько актуальных вопросов по улучшению правовых основ принудительного
исполнения судебных актов**

Судебные акты, а также общественные правовые денежные требования административных органов, которые по установленному законодательством порядку стали безапелляционными, в Республике Армения в принудительном порядке исполняются Службой принудительного исполнения судебных актов, действующей в составе Министерства юстиции Республики Армения.

Исполнение вышеперечисленных актов, подлежащих принудительному исполнению, обеспечивается посредством исполнительного производства, являющимся специальным видом административного производства. По мнению некоторых авторов, “исполнительное производство” представляет собой предмет регулирования исполнительного права - одной из новоформирующихся самостоятельных отраслей комплексной системы права.

В данной статье автор изучил и представил актуальные вопросы по улучшению правовых основ службы принудительного исполнения судебных актов и, основываясь на видении развития исполнительного производства, предложил в соответствии с современными требованиями правоведения создать необходимые механизмы и применять новые административные инструменты.

Ключевые слова: Исполнительное производство, административное производство, административный акт, административного правонарушения.

Armen Harutyunyan

Head of the Department of Ajapnyak and Davtashen of City Yerevan at the
Judicial Acts' Compulsory Enforcement Service of the
Ministry of Justice of the Republic of Armenia;
Postgraduate student at the Public Administration
Academy of the Republic of Armenia, Chair of Law

Actual Issues on Improvement of Legal Grounds of Compulsory Enforcement of Judicial Acts

Judicial acts, as well as public legal monetary claims of administrative bodies, which have become final as prescribed by the legislation, are compulsorily enforced in the Republic of Armenia by the Judicial Acts Compulsory Enforcement Service functioning within the Ministry of Justice of the Republic of Armenia.

The enforcement of the aforementioned acts, subject to compulsory enforcement, is ensured through a special type of administrative proceedings, i.e. enforcement proceedings. According to some authors, “enforcement proceedings” is the subject matter of one of newly developing, independent fields of the complex system of law – the enforcement law.

In this article the author analyses and raises actual questions on improving the legal grounds of compulsory enforcement of judicial acts, and, based on the vision of developing enforcement proceedings, suggests creating the necessary mechanisms in line with current requirements of law and applying new administrative instruments.

Keywords: Enforcement proceedings, administrative proceedings, administrative acts, administrative offences.

Թամարա Գրիգորյան

«Վաստաքանների պալատի անդամ, փաստաբան
«Վետական կառավարման ակադեմիայի հայցորդ

Քաղաքացիական ծառայության սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում

Սույն գիտական հոդվածը վերաբերում է վետական քաղաքացիական ծառայության սահմանադրական, կազմակերպական և օժանդակ սկզբունքներին, որոնք ապահովում են վետական ծառայությունն ընդհանրապես և քաղաքացիական ծառայությունը, մասնավորապես՝ մասնագիտական, ապաքաղաքականացված և սոցիալապես կանխորոշված, իսկ քաղաքացիական ծառայողների վարքը կանխատեսելի դարձնելը: Աշխատանքում ընդգծվում է վերը նշված սկզբունքների իրավական լինելու (իրավանորմերի ձև ունենալու) և դրանց ելակետային, ընդհանուր գաղափարական բնույթը: Այն օգտակար կարող է լինել վետական (քաղաքացիական) ծառայողների համար:

Բանալի բառեր. քաղաքացիական ծառայություն, քաղաքացիական ծառայության սկզբունք, օժանդակ սկզբունքներ, օրինականություն, մասնագիտական ձեռնահասություն, միջազգային փորձ:

Тамара Григорян

Адвокат палаты адвокатов РА
Соискатель академии государственного
управления Республики Армения

Принципы гражданской службы в Республике Армения

Настоящая научная статья посвящена конституционным, организационным и вспомогательным принципам государственной гражданской службы, которые обеспечивают становление государственной службы - вообще, а гражданской службы - в частности. более социально predetermined, профессиональными, деполитизированными, а поведение гражданских служащих - предсказуемыми. В научной работе отмечается правовой характер (о форме правовых норм) вышеуказанных принципов и их исходный, общий идеологический характер. Это может быть полезным для государственных (гражданских) служащих.

Ключевые слова: гражданская служба, принцип гражданской службы, вспомогательные принципы, законность, профессиональные навыки, международный опыт.

Tamara Grigoryan

Advocate of Chamber of Advocates of the Republic of Armenia,
Postgraduate student at the Public Administration
Academy of the Republic of Armenia,

Principles of Civil Service in the Republic of Armenia

This scientific article concerns the constitutional, organizational and auxiliary principles of state civil service, which make the state service in general and the civil service in particular professional, depoliticized and socially predetermined, also make the behavior of civil employees predictable. It is stressed the legality (having the form of legal norms) of the above mentioned principles in the work and their baseline, general conceptual character. It may be useful for state (civil) employees.

Keywords: civil service, principles of civil service, auxiliary principles, legality, professional skillfulness, international experience.

Եկատերինա ժիրենկո

Քաղաքական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցորդ

**Փոխադարձ պատասխանատվության երևույթի ուսումնասիրության
տեսական և մեթոդաբանական ասպեկտները**

Դիտարկվում է կողմերի պատասխանատվության հարցերը, ամբողջովին, և այդ կողմերի փոխադարձ պատասխանատվության հարցերը միջազգային հարաբերություններ հաստատելու գործում, դրանց իրականացումը միջազգային իրավունքի շրջանակներում: Ինտեգրալային մոտեցման օգտագործման հիման վրա ցուցադրված է փոխադարձ պատասխանատվության բարոյականության հասկացության միատեղման հրատապությունը դրա քաղաքական-իրավական նշանակության հետ, ինչը հետևում է օբյեկտիվ և սուբյեկտիվ հարթությունների միասնականությունից, որոնցում տեղի են ունենում պետության և դրանց պաշտոնական ներկայացուցիչների միջպետական և միջանձնական հարաբերությունները:

Բանալի բառեր. պատասխանատվություն, փոխադարձ պատասխանատվություն, իրավունք, բարոյականություն, սուբյեկտիվ, օբյեկտիվ, ինտեգրալային մոտեցում:

Екатерина Жиренко

Соискатель политических наук

Теоретико-методологические аспекты исследования феномена взаимответственности

Рассматриваются вопросы ответственности сторон, в целом, и их взаимной ответственности в плане установления межгосударственных отношений и их осуществления в рамках международного права. На основе использования интегрального подхода показана актуальность совмещения нравственного понимания взаимной ответственности с её политико-правовым значением, что вытекает из единства объективных и субъективных пространств, в которых разворачиваются межгосударственные и межличностные отношений государств и их официальных представителей.

Ключевые слова: ответственность, взаимная ответственность, право, нравственность, субъективное, объективное, интегральный подход.

Ekaterina Zhirenko

Post-graduate student in political science

The Aspects of Theoretical-Methodological Research of the Mutual Responsibility Phenomenon

The article discusses the issues on Party responsibility, as a whole, and their mutual responsibility for establishment of international relations and their realization in the frameworks of international law. On the basis of the integral approach it is demonstrated the actual combination of the moral definition of the mutual responsibility with its political-legal value, which emanates from the unity of objective and subjective areas, where it takes place international and personal relations between the states and their official representatives.

Keywords: responsibility, mutual responsibility, law, morality, subjective, objective, integral approach.

ՀՀ ՂԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՁՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է կրեն գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերվի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջներին բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանց չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջերի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝ ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ միասին պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի այն տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4/201x297 մմ/ չափի և ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30մմ, աջից՝ 10մմ, վերևից՝ 20մմ, ներքևից՝ 25մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրել 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվի ինտերնետային հասցեն, և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և հնարավոր է չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: